

Հավելված
ՀՀ կառավարության 2011 թվականի
դեկտեմբերի 22-ի N 1854 - Ա որոշման

**«ԱՐՓԻ ԼԻՃ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ
2011-2015 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ**



Երեվան - 2011

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ		
ԳԼՈՒԽ I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
1.1.	«Արփի լիճ» ազգային պարկի ստեղծման նախապատմությունը և տեղադիրքը	
	1.1.1.	«Արփի լիճ» ազգային պարկի կառուցվածքը
1.2.	«Արփի լիճ» ազգային պարկի ստեղծման ընդհանուր նպատակը	
1.3.	Ազգային համատեքստ	
1.4.	Բարենպաստ մարտավարություն և օրենսդրություն	
1.5.	ՀՀ բնապահպանության նախարարություն	
1.6.	«Արփի լիճ» ազգային պարկի պահպանման գոտին	
1.7.	Սահմանների նկարագրություն և հանգուցային սահմանակետեր	
1.8.	«Արփի լիճ» ազգային պարկի բնական պայմանները	
	1.8.1.	Կլիման
	1.8.2.	Երկրաբանությունը հողերը և երկրաձևաբանությունը
	1.8.3.	Ջրագրությունը
	1.8.4.	Բուսական աշխարհը
	1.8.5.	Կենդանական աշխարհը
1.9.	Սոցիալ-տնտեսական և մշակութային կարգավիճակ	
	1.9.1.	Ժողովրդագրություն
	1.9.2.	Տեղական տնտեսությունը հողերի և ռեսուրսների օգտագործումը
ԳԼՈՒԽ II. ՏԵՍԼԱԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ		
2.1.	Տեսլական	
2.2.	Նպատակներ եվ խնդիրներ	
ԳԼՈՒԽ III. «ԱՐՓԻ ԼԻՃ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ ՏԵՂԱՄԱՍԵՐԻ ԳՈՏԻԱՎՈՐՈՒՄ		
3.1.	Գոտիավորման հասկացությունը	
	3.1.1.	«Արփի լիճ» ազգային պարկի գործառնական գոտիները
	3.1.2.	«Արփի լիճ» ազգային պարկի արգելոցային գոտի
	3.1.3.	«Արփի լիճ» ազգային պարկի ռեկրեացիոն գոտի
	3.1.4.	«Արփի լիճ» ազգային պարկի տնտեսական գոտի
	3.1.5.	«Արփի լիճ» ազգային պարկի պահպանման գոտի
	3.1.6.	Տարածքների օգտագործման միջոցառումների սխեմա
ԳԼՈՒԽ IV. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ		
4.1.	Կառավարման ծրագիր	
	4.1.1.	Ազգային պարկի վարչական ծրագիր
	4.1.2.	«Արփի լիճ» ազգային պարկի անձնակազմի որակավորման բարձրացում
	4.1.3.	Վարչական ծրագրով նախատեսվող ենթակառուցվածք
		4.1.3.1. «Արփի լիճ» ազգային պարկի վարչական շենք, հյուրատուն, ավտոտնակներ և պահակակետ
		4.1.3.2. ԱԼԱՊ և առանձին տեղամասեր տանող ճանապարհներ

		4.1.3.3.	Արփի լիճ	
4.2.	Տնտեսական գործունեության և մարկետինգի ծրագիր			
	4.2.1.	Հիմնավորում և խնդիրներ		
	4.2.2.	Մարտավարություն		
4.3.	Պահպանության ծրագիր			
	4.3.1.	Հիմնավորում և խնդիրներ		
	4.3.2.	Պահպանության ծրագրի մարտավարություն և կառավարման ուղեցույց		
4.4.	Տուրիզմ, էկոլոգիական իրազեկություն եվ հասարակայնության հետ կապերի ծրագիր			
	4.4.1.	Հիմնական սկզբունքներ		
	4.4.2.	Տուրիզմին վերաբերող խնդիրներ ու մարտավարություն		
	4.4.3.	Էկոլոգիական իրազեկություն		
	4.4.4.	Հասարակայնության հետ կապեր		
	4.4.5.	Տուրիստական ենթակառուցվածք		
		4.4.5.1.	«Շաղիկ», «Սոճիներ» և «Կրասարի կիրճ» ճամբարակայաններ	
		4.4.5.2.	Ղազանչիի այցելուների կենտրոն	
		4.4.5.3.	Դիտակետեր	
4.5.	Գիտական հետազոտությունների և մոնիթորինգի ծրագիր			
4.6.	Տարեկան աշխատանքային պլան			
ԳԼՈՒԽ V. ԲՅՈՒՋԵ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ				
5.1.	ԱԼԱՊ-ի բնականոն գործունեության ապահովման համար նախատեսվող եկամուտների աղբյուրներ			
5.2.	«Արփի լիճ» ազգային պարկի նախատեսված բյուջե 2011-2015թթ համար			
5.3.	ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ 2011-2015թթ «Արփի լիճ» ազգային պարկի և «Արփի լիճ» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման բարելավման գործողությունների պլան			

ՑԱՆԿԵՐ

ՑԱՆԿ 1. «Արփի լիճ» ազգային պարկի բույսերի տեսակների ցանկը

ՑԱՆԿ 2. «Արփի լիճ» ազգային պարկի ողնաշավոր կանդանիների ցանկը

ՑԱՆԿ 3. «Արփի լիճ» ազգային պարկում և պահպանման գոտում գտնվող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցուցակը

ՍԽԵՄԱՆԵՐ

ՍԽԵՄԱ 1

«Արփի լիճ» ազգային պարկի սահմանակետերը

ՍԽԵՄԱ 2

Արփի լիճ ազգային պարկի գոտեվորման սխեմա

Քարտեզներ

Քարտեզ 1	«Արփի լիճ» ազգային պարկի սխեման
Քարտեզ 2	Կովկասի էկոտարածաշրջանում կարևորագույն բնապահպանական տարածքները
Քարտեզ 3	«Արփի լիճ» ազգային պարկի պահպանման գոտու սխեման
Քարտեզ 4	«Արփի լիճ» ազգային պարկի գոտիավորման սխեման
Քարտեզ 5	«Արփի լիճ» ազգային պարկի ենթակառուցվածքը
Քարտեզ 6	«Արփի լիճ» ազգային պարկի և պահպանման գոտու տուրիստական ենթակառուցվածքը
Քարտեզ 7	«Արփի լիճ» ազգային պարկում և պահպանման գոտում գտնվող պատմամշակութային հուշարձանները

Հապավումներ

ԱԼԱՊ	«Արփի լիճ» ազգային պարկ
ԲՀՊՏ	բնության հատուկ պահպանվող տարածք
ԲՊՄՄ	Բնության պահպանության միջազգային միություն
ԻՏՀՊ	ինտեգրված տարածքային հողօգտագործման պլան
ՀԿ	հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՄԱԿ	Միավորված Ազգերի Կազմակերպություն
ՊՈԱԿ	պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՇՄԱԳ	շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում
BMZ	Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարություն
CBD	«Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիա
CITES	«Բուսական և կենդանական աշխարհի վայրի անհետացող տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիա
GEF	Գլոբալ էկոլոգիական հիմնադրամ
IUCN	Բնության պահպանության միջազգային միություն
KfW	Գերմանական զարգացման և վերակառուցման բանկ
WWF	Բնության համաշխարհային հիմնադրամ

Կառավարման պլանում օգտագործվող համայնքների և գետերի անվանումները

Համայնքներ

Աղվորիկ	Դարիկ	Շաղիկ
Ալվար	Գառնառիճ	Սիզավետ
Ամասիա	Ղազանչի	Թավշուտ
Արավետ	Հովտուն	Ծաղկուտ
Արդենիս	Կրասար	Եղնաջուր
Աշոցք	Լորասար	Երիզակ
Բավրա	Մեծ Սեպասար	Զառիշատ
Բերդաշեն	Պաղակն	Զորակերտ
Փոքր Սեպասար	Սարագյուղ	

Գետեր

Աչքաջուր	Ղազանչի
Ախուրյան	Ծաղկաշեն
Ախուրյանի ջրանցք	Ղուկասյան
Արևածոր	Գիժգետ
Աշնակ	Հեղնագետ
Ձկնագետ	Կարախանգետ
Ձորագետ	Կարմրաջուր
Եղնաջուր	Կատարաջուր
	Շաղիկ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի ապրիլի 16-ի № 405-Ն որոշման, պահպանվող տարածքի անվանումն է՝ «Արփի լիճ» ազգային պարկ» որը կոչվել է ազգային պարկի արևմտյան տեղամասում գտնվող Արփի լճի և դրա ջրհավաք ավազանի անունով:

«Արփի լիճ» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության ենթակայության տակ է գտնվում «Արփի լիճ» ազգային պարկը իր հինգ տեղամասերով (քարտեզ 1).

1. Արևմտյան տեղամաս (կոչվել է ազգային պարկի արևմտյան հատվածի անունով).
2. Արևելյան տեղամաս (կոչվել է ազգային պարկի արևելյան հատվածի անունով).
3. «Արդենիս» տեղամաս (կոչվել է Արդենիս լճի և համայնքի անունով).
4. «Ալվար» տեղամաս (կոչվել է Ալվար համայնքի անունով, որը գտնվում է Ախուրյան գետի խոնավ տարածքներից դեպի հարավ):
5. «Ախուրյանի կիրճ» տեղամաս (կոչվել է Ախուրյան գետի անունով, որը հոսում է Աշոցքի սարահարթի կիրճով).

Քարտեզ 1 «Արփի լիճ» ազգային պարկի սխեման



Կառավարման պլանի պատրաստում

«Արփի լիճ» ազգային պարկի կառավարման պլանը մշակվել է Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության և Բնության համաշխարհային հիմնադրամի (WWF) կողմից իրականացվող ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվել է Գերմանիայի Կառավարության (BMZ) կողմից՝ Գերմանական զարգացման և վերակառուցման բանկի (KfW) միջոցով:

Սույն կառավարման պլանը մշակվել է տարբեր շահագրգիռ կողմերի մասնակցությամբ՝ հաշվի առնելով պահպանման գոտու համայնքների առաջարկները, ինչպես նաև բնապահպանության, բնօգտագործման և ֆինանսական կայունության խնդիրները:

«Արփի լիճ» ազգային պարկի (ԱԼԱՊ) աշխատանքային խմբերի կողմից քննարկվել են պլանավորման վերաբերյալ համաձայնագրերը, տարածաշրջանում շահերի բախման հետ կապված խնդիրները և կայուն զարգացման նպատակով մշակվել է «Արփի լիճ» ազգային պարկի մարտավարության ու կառավարման հիմնական ուղեցույցը: Սույն կառավարման պլանի մեջ ներկայացված առաջարկությունները բազմաթիվ քննարկումների և նախաձեռնությունների արդյունքն է:

Ներկայացված առաջարկություններում առավել հնարավոր չափով հաշվի են առնվել բոլոր համայնքների և այլ շահագրգիռ կողմերի շահերը:

«Արփի լիճ» ազգային պարկի և պահպանման գոտու պոտենցիալի, օգտագործման ու խնդիրների ամբողջ սպեկտրի լիարժեք գնահատման համար Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, պահպանման գոտում գտնվող համայնքների և մարզում գործող հասարակական կազմակերպությունների ընտրված ներկայացուցիչներից ստեղծվել են հետևյալ՝ «Ազգային պարկի սահմաններ», «Ազգային պարկի տնտեսական օգտագործման ծրագիր», «Պահպանության ծրագիր», «Արփի լիճի կառավարման ծրագիր», «Ազգային պարկի ղեկավարում» և «Պահպանման գոտու ծրագիր» աշխատանքային խմբերը:

Հանդիպումների և խորհրդակցությունների միջոցով, տեղական ու միջազգային մասնագետների օժանդակությամբ աշխատանքային խմբերը հավաքել են տեղեկություններ, որոշել են շահերի և խնդիրների ոլորտները, ընդհանրացրել են խորհրդակցությունների արդյունքները, բացահայտել են «Արփի լիճ» ազգային պարկի բնապահպանական արժեքները, համաձայնեցրել են պարկի սահմանները, գործառնական գոտիները, «Արփի լիճ» ազգային պարկի ներսում ու սահմաններից դուրս բնօգտագործման և հողօգտագործման խնդիրները և մշակել են կառավարման պլանի մեջ ընդգրկված կառավարման ծրագրի մարտավարությունը: Համաձայնեցման ընթացքը օգտագործվել է շահերի բախման շուրջ ծագած տարածայնությունների լուծման և կառավարման պլանի հիմք հանդիսացող հողօգտագործման ու ռեսուրսների կառավարման համաձայնագրերի փաթեթի ստեղծման համար:

Կառավարման պլանի կառուցվածքը

«Արփի լիճ» ազգային պարկի կառավարման պլանը բաղկացած է հինգ մասերից.

- 1) Գլուխ I. «Ներածություն «Արփի լիճ» ազգային պարկի մասին»,
- 2) Գլուխ II. «Տեսլական և նպատակներ».
- 3) Գլուխ III. «Գոտիավորում».
- 4) Գլուխ IV. «Կառավարման ծրագրեր»
- 5) Գլուխ V. «Բյուջե և ֆինանսավում»

Անձնակազմի ղեկավարության կողմից տարեկան աշխատանքային պլանները կազմվում են հիմք ընդունելով «Արփի լիճ» ազգային պարկի կառավարման պլանը:

Կառավարման պլանը վերանայվում է հինգ տարին մեկ անգամ, ինչպես նաև՝ այն ենթակա է վերանայման՝ խնդիրների ծագմանը զուգընթաց համապատասխան անհրաժեշտ փոփոխությունների կատարմամբ:

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. «Արփի լիճ» ազգային պարկի ստեղծման նախապատմությունը և տեղադիրքը

1. «Արփի լիճ» ազգային պարկի ստեղծումը հանդիսանում է Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության (BMZ) «Կովկասյան նախաձեռնության» մասը, որը հիմնվում է Կովկասի էկոտարածաշրջանում յուրահատուկ կենսաբազմազանության պահպանության վրա և նպաստում է Հայաստանի և Վրաստանի համագործակցությանը՝ Շիրակ-Ջավախքի տարածքում անդրսահմանային համագործակցության զարգացման միջոցով:

2. 2003 թ. իրականացված նախնական հետազոտությունների արդյունքում Հայաստանը և Վրաստանը համաձայնվել են ձեռնարկել համատեղ բնապահպանական միջոցառումներ ուղղված Հայաստանի և Վրաստանի միջև գտնվող անդրսահմանային Շիրակ-Ջավախք կարևորագույն բնապահպանական տարածքի սահմաններում (տես՝ քարտեզ 1) պահպանվող տարածքների ստեղծմանը /ազգային պարկերի/ և պահպանման գոտիներում գտնվող համայնքների կայուն զարգացմանը:

3. «Արփի լիճ» ազգային պարկի ստեղծման ծրագիրը սկսվել է 2007 թվականի սեպտեմբերին Գերմանիայի Կառավարության ֆինանսական աջակցությամբ Գերմանիայի վերակառուցման և զարգացման բանկի (KfW) միջոցով, իրականացվել է Բնության համաշխարհային հիմնադրամի կողմից, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության հովանավորությամբ:

4. «Արփի լիճ» ազգային պարկը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի ապրիլի 16-ի «Արփի լիճ» ազգային պարկ ստեղծելու, «Արփի լիճ» ազգային պարկի և «Արփի լիճ» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունները հաստատելու մասին» N° 405-Ն որոշմամբ:

«Արփի լիճ» ազգային պարկի պահպանությունն իրականացնում է "Արփի լիճ" ազգային պարկ" պետական ոչ առևտրային կազմակերպությունը:

«Արփի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության: «Արփի լիճ» ազգային պարկ»

ՊՈԱԿ-ը գործում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքներով, ՊՈԱԿ-ի կանոնադրության և իրավական այլ ակտերի հիման վրա:

Կանոնադրության համաձայն "Արփի լիճ" ազգային պարկ" պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեության առարկան և նպատակը "Արփի լիճ" ազգային պարկի տարածքի էկոհամակարգերի, լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության գիտական ուսումնասիրության, պահպանության, պաշտպանության, վերականգնման, վերարտադրության, հաշվառման, գույքագրման, մոնիթորինգի, ինչպես նաև պարկի բնական պաշարների կայուն օգտագործման ապահովումն է: Այդ նպատակով կազմակերպության կարևոր կանոնադրական գործառույթներից են՝

1) Արփի, Արդենիս լճերի եւ Ախուրյան գետի վերին հոսանքի ձախակողմյան վտակների ավազանների, ինչպես նաեւ Ջավախքի լեռնաշղթայի հարավ-արևմտյան լեռնալանջերի ջրային ու ցամաքային էկոհամակարգերի տարածքներում լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, գենոֆոնդի, բնության ժառանգության պահպանությունը, կազմակերպումն ու իրականացումը և դրանց գիտական ուսումնասիրության ապահովումը.

2) էկոհամակարգերի ու դրանց առանձին բաղադրիչների, բուսական եւ կենդանական աշխարհի հաշվառման ու կադաստրի վարման համար անհրաժեշտ նյութերի նախապատրաստման կազմակերպումը և իրականացնումը.

3) էկոլոգիական մոնիթորինգի իրականացնումը և բնության թանգարանի գործունեության կազմակերպումը..

4) մարդու գործունեության հետևանքով պարկի բնական էկոհամակարգի հավասարակշռությունը խախտող գործընթացների կանխարգելումը և խախտված էկոհամակարգերի վերականգնման միջոցառումների իրականացնումը.

5) ճանաչողական զբոսաշրջության կազմակերպումը.

6) հրդեհային անվտանգության միջոցառումների իրականացնումը.

7) ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից՝ պարկի կանոնադրությամբ սահմանված դրույթների պահանջների կատարման ապահովումը.

8) բնակչության էկոլոգիական կրթությանն ու դաստիարակությանն ուղղված միջոցառումների իրականացնումը.

9) համագործակցությունը պատմական հուշարձանների պետական լիազորված մարմինների հետ պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահանջանքների գործում:

6. Պետական ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակը հնարավորություն է տալիս կազմակերպությանը զբաղվելու օրենքով թույլատրված որոշակի ձեռնարկատիրական գործունեությամբ և իրականացնել վճարովի ծառայություններ, այդ թվում՝

1) կենսառեսուրսների, այդ թվում՝ բույսերի ու կենդանիների տեսակների, անտառային ռեսուրսների վերարտադրություն, օգտագործում և իրացում.

2) ճանաչողական զբոսաշրջության կազմակերպում.

3) կողմնակի անտառօգտագործում (խոտհունձ, անասունների արածեցում, փեթակների և մեղվանոցների տեղադրում, վայրի պտղի, ընկույզի, սնկի, հատապտղի, դեղաբույսերի ու տեխնիկական հումքի հավաքում) և դրա արդյունքում մթերված կենսապաշարների վերամշակում ու իրացում.


4) գյուղատնտեսական մթերքների արտադրություն, վերամշակում և իրացում.

5) հանգստի և ճանաչողական զբոսաշրջության հետ կապված սպասարկման ծառայությունների մատուցում.

6) պարկին վերաբերող գովազդի կազմակերպում.

7) գիտական, գիտաճանաչողական գրականության և տեղեկատվական նյութերի պատրաստում և հրատարակում:

Քարտեզ 2 Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքները



1.1.1. «Արփի լիճ» ազգային պարկի կառուցվածքը

1. Ազգային պարկը գտնվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի և Աշոցքի տարածաշրջաններում: Պարկը բաղկացած է արևմտյան, արևելյան, Արդենիսի, Ավարի, և Ախուրյանի կիրճ տեղամասերից: Արևմտյան և արևելյան տեղամասերը իրարից բաժանվում են Հայաստան-Վրաստան մայրուղիով: Ազգային պարկը սահմանակից է Թուրքիային՝ արևմուտքում և Վրաստանին՝ հյուսիսում: Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 21-ի «Արփի լիճ»

ազգային պարկի սահմանների նկարագիրը, հատակագիծը, տարածքի չափը հաստատելու և հողերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին» N1151-Ն որոշման, ազգային պարկի տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է՝ 21179.3 հա:

1) «Արևմտյան» տեղամասի մեջ մտնում է Արփի լիճը (2254.8 հա)՝ իր ամբողջ ջրհավաք ավազանով և ընդգրկում է Եղնախաղի լեռնաշղթայի արևելյան լանջերը:

Սարահարթի հարավային մասը Ախուրյան գետի ավազանում ծածկված է խոնավ տարածքներով: Լճերը հրաբխային ակտիվության արդյունք են հանդիսանում:

«Արևմտյան» տեղամասի հողատարածքները գտնվում են Բերդաշեն, Ջորակերտ, Ծախկուտ, Գառնարիճ, Շաղիկ և Ջարիշատ համայնքների վարչական սահմաններում: Նախնական հաշվարկներով տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 14964.9 հա:

2) «Արևելյան» տեղամասը ընդգրկում է Ջավախքի լեռնաշղթայի արևմտյան լանջերը: Ջավախքի լեռնաշղթայի ձախակողմյան լանջերից հոսում են Աշոցք և Ղուկասյան գետերը, որոնք իրենց վտակներով ունեն մեծ ջրհավաք տարողություն, որտեղից Գյումրի քաղաքը և բազմաթիվ գյուղական համայնքները ստանում են խմելու ջուր:

«Արևելյան» տեղամասի հողատարածքները գտնվում են Սարագյուղ, Սիզավետ, Ղազանջի և Մեծ Սեպասար համայնքների վարչական սահմաններում: Նախնական հաշվարկներով տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 5408 հա:

3) «Ախուրյանի կիրճ» տեղամասը ընդգրկվում է Ախուրյանի կիրճը, որը առանձնահատուկ է իր յուրահատուկ էկոլոգիական և երկրաձևաբանական կառուցվածքով: «Արփի լիճ» ազգային պարկի արևմտյան և արևելյան տեղամասերի սահմաններում գետնի մակերեսի 90%-ից ավելին սնուցվում է Ախուրյան և Ղուկասյան գետերի ջրերով, որոնք հոսում են դարերի ընթացքում ձևավորված Ախուրյանի գեղատեսիլ կիրճով: Կիրճի վերին մասում գտնվող 2 կմ լայնությամբ հովիտը վայր իջնելով նեղանում է՝ դառնալով նեղ ժայռոտ կիրճ: Աշոցքի սարահարթից շատ տարբերվող միկրոկլիմայական պայմանների շնորհիվ այստեղ հանդիպում են տեսակներ, որոնք բացակայում են բարձրադիր սարահարթում: Կիրճի ստորոտում և ուղղաձիգ լանջերի երկայնքով ձգված տարածքում գտնվում է Շիրակի մարզի միակ դողդոջուն կաղամախու (*Populus tremula*) ռելիկտային պուրակը: Կիրճի էկոհամակարգը տեղական մակարդակով անհետացման եզրին է գտնվում: Կիրճում բնակվում են ֆլորայի և ֆաունայի հազվագյուտ, վտանգված և անհետացման եզրին գտնվող տեսակների մի շարք ներկայացուցիչներ, որոնք գրանցված են Հայաստանի Հանրապետության կենդանիների և բույսերի Կարմիր գրքերում, ներառյալ՝ ջրասամույրը (*Lutra lutra*), Ճուռականման շահրիկ (*Sylvia nisoria*), և հաստածղրիդ լայնացածը, (*Bradyporus dilatatus*), սև ապոլոն (*Parnassius mnemosyne*): Այն հարուստ է կենսաբազմազանությամբ և մեծ հնարավորություններ է տալիս գիտական հետազոտություններ ու ռեկրեացիոն գործունեություն ծավալելու համար:

«Ախուրյանի կիրճ» տեղամասի հողատարածքները գտնվում են Ամասիա, Ալվար և Կրասար համայնքների վարչական սահմաններում: Նախնական հաշվարկներով տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 172.5 հա:

4) «Արդենիս» տեղամասը ընդգրկում է Արդենիսի համայնքից դեպի հարավ Աշոցքի սարահարթում գտնվող խոնավ տարածքները և բնական Արդենիս լիճը (10 հա), որոնք ջրով թռչունների համար ապահովում են կենսական նշանակություն ունեցող ապրելավայրեր, իսկ ամառվա ժամանակ այս վայրերում բնակվում է հազվագյուտ և

հայտնի մոխրագույն կոունկը: «Արդենիս» տեղամասը մտնում է Արփի լճի Ռամսարի տարածքի կազմում:

«Արդենիս» տեղամասի հողերը գտնվում են Արդենիս և Աղվորիկ համայնքների վարչական սահմաններում: Նախնական հաշվարկներով տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 119.1 հա :

5) «Ալվար» տեղամասը ընդգրկում է խոնավ տարածքները և Ախուրյան գետի գալարները: Խոնավ տարածքներն ունեն մարդածին բնույթ և ստեղծվել են 1950-ական թվականներին, երբ Ախուրյան գետի հունը այդ տեղամասում փոխել և անց են կացրել բետոնե ջրանցքով: Ալվարի խոնավ տարածքներին բնորոշ է բուսական և կենդանական տեսակների մեծ բազմազանությունը, որոնցից շատերը գրանցված են Հայաստանի Հանրապետության կենդանիների և բույսերի Կարմիր գրքերում: Անհետացման եզրին գտնվող ջրասամույրը (*Lutra lutra*) այս տեղամասում բնակվող այն կաթնասուններից է, որը գրանցված է միջազգային կարմիր գրքում: Խոնավ տարածքները ընդգրկում են նաև կարևոր ապրելավայրեր ջրլող թռչունների, այդ թվում՝ մոխրագույն կոունկի և հանգստի վայրեր չվող թռչունների համար՝ աշնանային ու գարնանային չուի ժամանակաշրջաններում: «Ալվար» տեղամասը ՀՀ Բույսերի կարմիր գրքում գրանցված դեղին ջրաշուշանի (*Nuphar luteum*) Հայաստանում միակ աճելավայրն է: «Ալվար» տեղամասը մտնում է Արփի լճի Ռամսարի տարածքի կազմի մեջ:

«Ալվար» տեղամասի հողերը գտնվում են Ալվար, Արդենիս ու Բերդաշեն համայնքների վարչական սահմաններում: Նախնական հաշվարկներով տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 514.8 հա:

Արփի լճի ջրավազանին բնորոշ լեռնային տափաստանները, մերձալպյան մարգագետիններն ու խոնավ տարածքները յուրահատուկ են Կովկասի համար և գտնվում են միայն այս տարածքում, որը բաշխված է Թուրքիայի, Հայաստանի ու Վրաստանի միջև: Նախկինում նմանատիպ էկոհամակարգերը ընդգրկված չեն եղել Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների (ԲՀՊՏ) ցանցի մեջ:

Նշված էկոհամակարգերի պահպանության անհրաժեշտությունը պայմանավորվում է հետևյալ գործոններով.

ա. Արփի լիճը և մերձակա խոնավ տարածքները գրանցված են որպես Ռամսարի տարածք (1993թ.), որի պահպանումը անհետաձգելի է՝ հետագա էկոլոգիական պայմանների վատթարացումը կանխարգելելու նպատակով: Արփի լճի տարածքում բնակվող մի շարք թռչունների տեսակներ գրանցված են Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում և որոշ տեսակներ վտանգված են կամ գտնվում են անհետացման եզրին՝ միջազգային մակարդակով: Մեծաթիվ թռչուններ շարունակում են տուժել ոռոգման նպատակով ջրի անարդյունավետ օգտագործման և լճի մակարդակի անընդհատ տատանումների, լճի ափամերձ տարածքում գյուղատնտեսական կենդանիների չկանոնակարգված արածեցման, խոտհնձի ազդեցության պատճառով.

բ. Յուրահատուկ մերձալպյան մարգագետինները և լեռնային տափաստանները ոչ բավականաչափ են ներկայացված Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքներում.

գ. ՄԱԿ-ի «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիայի շրջանակներում Հայաստանը պարտավոր է առանձնացնել պահպանության համար յուրահատուկ էկոհամակարգերի տարածքներ.

դ. Պահպանման գոտում գտնվող գյուղական համայնքների սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման համար տնտեսապես մեկուսացված շրջանում նախապայմանների ապահովում և աղքատության նվազեցում.

ե. Համայնքների ներգրավում մասնակցային պլանավորման մեջ պահպանվող տարածքների միասնական կառավարման միջոցով

զ. Հայաստանի և Վրաստանի միջև անդրսահմանային համագործակցության զարգացում:

2. «Արփի լիճ» ազգային պարկը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Եղնախաղի լեռնաշղթայի արևելյան և Ջավախքի լեռնաշղթայի հարավ-արևմտյան լանջերի ու դրանց միջև ընկած մարգագետնատափաստանային, մերձալպյան մարգագետնային և խոնավ տարածքների էկոհամակարգերի, այդ թվում Արփի և Արդենիս լճերի ու Ախուրյան գետի վերին հոսանքի ձախակողմյան վտակների ավազանների, լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, բնության հուշարձանների և դրանց բաղադրիչների պահպանությունը, բնականոն զարգացումը, վերարտադրությունն ու կայուն օգտագործումն ապահովելու նպատակով:

3. «Արփի լիճ» ազգային պարկի պահպանման գոտում գտնվող համայնքների համար թույլատրելի գործունեությունը իր մեջ ներառում է խոտհունձը, անասունների արածեցումը, փեթակների և մեղվանոցների տեղադրումը, վայրի պտղի, սնկի, հատապտղի, դեղաբույսերի ու տեխնիկական հումքի հավաքումը և տնտեսական այնպիսի գործունեությունը, որը չի կարող սպառնալ «Արփի լիճ» ազգային պարկի և պահպանման գոտու տարածքների էկոհամակարգերի կայունությանը, բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների, գիտական կամ պատմամշակութային արժեք ունեցող օբյեկտների պահպանությանը:

4. Ըստ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի ապրիլի 16-ի «Արփի լիճ» ազգային պարկ ստեղծելու, «Արփի լիճ» ազգային պարկի և «Արփի լիճ» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունները հաստատելու մասին» № 405-Ն որոշմամբ հաստատված «Արփի լիճ» ազգային պարկ՝ ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի, «Արփի լիճ» ազգային պարկի կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա լիազորված պետական մարմինը և գործադիր մարմինը՝ տնօրենը:

5. «Արփի լիճ» ազգային պարկ՝ ՊՈԱԿ-ի կանոնադրության համաձայն, «Արփի լիճ» ազգային պարկի ֆինանսական միջոցները գոյանում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացված տրանսֆերտներից և կազմակերպության կողմից միջոցառումների իրականացման ու տարբեր ծառայությունների մատուցման և սահմանված կարգով հողերի՝ ժամանակավոր վարձակալության տրամադրման դիմաց վճարումներից, հովանավորչական, նվիրատվական, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ մուտքերից:

6. Կանոնադրության համաձայն «Արփի լիճ» ազգային պարկ՝ ՊՈԱԿ-ը կարող է եկամուտներ ստանալ կենսառեսուրսների, այդ թվում՝ բույսերի ու կենդանիների տեսակների, անտառային ռեսուրսների վերարտադրությունից, օգտագործումից և

իրացումից, զբոսաշրջության կազմակերպումից, գյուղատնտեսական մթերքների արտադրությունից, վերամշակումից և իրացումից, հանգստի և զբոսաշրջության հետ կապված սպասարկման ծառայությունների մատուցումից, պարկին վերաբերող գովազդի կազմակերպումից, գիտական, գիտաճանաչողական գրականության և տեղեկատվական նյութերի պատրաստումից և հրատարակումից:

1.2. «Արփի լիճ» ազգային պարկի ստեղծման ընդհանուր նպատակը

«Արփի լիճ» ազգային պարկի ստեղծման և «Արփի լիճ» ազգային պարկի պահպանման գոտու կայուն զարգացման ընդհանուր նպատակն է պահպանել պարկի տարածքներում ներկայացված լանդշաֆտների, էկոհամակարգերի, ֆլորայի և ֆաունայի բազմազանությունը, աջակցել պահպանման գոտում գտնվող համայնքների տնտեսական զարգացմանը և ստեղծել հնարավորություններ բնակչության կենսամակարդակի բարձրացման համար:

1.3. Ազգային համատեքստ

Հայաստանը զբաղեցնում է 29,743 կմ² տարածք, որտեղ գտնվում է Կովկասում ամենախոշոր քաղցրահամ բնական ջրամբար Սևանա լիճը՝ 1,289 կմ² մակերեսով: Երկրի բնակչությունը կազմում է մոտ 3 միլիոն մարդ:

1988 թվականի Սպիտակի երկրաշարժը զգալի ազդեցություն է ունեցել նաև «Արփի լիճ» ազգային պարկի պահպանման գոտու բնակչության վրա:

1991 թ-ին Հայաստանի անկախության ձեռք բերումը և անցումը պլանավորման խորհրդային կենտրոնացած համակարգից դեպի շուկայական տնտեսություն խիստ ազդեցություն են ունեցել գյուղական շրջանների վրա: Ոչնչացել են տնտեսական ենթակառուցվածքները և սոցիալական ծառայությունները, ինչն էլ արդյունքում հանգեցրել է գործազրկության բարձր ցուցանիշի: Տնտեսական այլընտրանքների բացակայության արդյունքում՝ շատ ընտանիքներ սկսել են զբաղվել գյուղատնտեսությամբ, որոնք ոչ բավարար չափով են տեղյակ այդ գործունեության ոլորտի առանձնահատկություններին: Խորհրդային կոլխոզ, սովխոզներից հրաժարվելը, անասնահոտերի սեփականաշնորհումը և արդյունաբերական ենթակառուցվածքների ու վերամշակող ձեռնարկությունների ավերումը ևս պատճառ են հանդիսացել «Արփի լիճ» ազգային պարկի պահպանման գոտու բնակչության շրջանում աղքատության համար: Հայաստանի աշխատանքային սեկտորի վերլուծությունը ցույց է տալիս, որ բնակչության զբաղվածության 46.2% ապահովում է գյուղատնտեսությունը, իսկ մնացած 53.8% ընդգրկված են արդյունաբերության և ծառայությունների մատուցման ոլորտներում:

Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքները, որոնք ներկայացված են պետական արգելոցներով (3), ազգային պարկերով (4), պետական արգելավայրերով (27) և բնության հուշարձաններով (230), կազմում են մոտ 380000 հա, << տարածքի 13% (տես՝ քարտեզ 2) (հանրապետության ցամաքային մակերեսի 8.7% և Սևանա լճի հայելու մակերեսի 4.3%)։ Պետական արգելոցները (IUCN-ի IA կատեգորիա) ունեն բնապահպանական ամենախիստ ռեժիմը, դրանց հաջորդում են ազգային պարկերը

(IUCN-ի II կատեգորիա), *արգելավայրերը* (IUCN-ի IV կատեգորիա) և բնության հուշարձանները (IUCN-ի III կատեգորիա):

Հայաստանում ցամաքային պահպանվող տարածքների գերակշռող մասը անտառածածկ տարածքներն են և մի շարք եզակի էկոհամակարգեր անբավարար չափով են ներկայացված ԲՀՊՏ-ների համակարգում: Դա հատկապես վերաբերում է լեռնային տափաստաններին և մերձալպյան մարգագետիններին, որոնք բնորոշ են Զավաղքի/Աշոցքի տարածաշրջանի համար:

Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի կենսառեսուրսների կառավարման գործակալության կողմից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թ. օգոստոսի 8-ի № 1236-Ն որոշման համաձայն:

1.4. Բարենպաստ մարտավարություն և օրենսդրություն

1. Հայաստանի Հանրապետությունը 1991 թվականից սկսած ընդունել է բնապահպանության ոլորտը կանոնակարգող բազմաթիվ օրենքներ, որոնցից գերակշռող մասը՝ համապատասխան կոնվենցիաներից բխող երկրի ստանձնած պարտավորությունների կատարման շրջանակներում: Բնապահպանական օրենսդրական հենքը սկզբունքորեն ձևավորվել է Ռիոյի գագաթաժողովից հետո:

«Արփի լիճ» ազգային պարկի կառավարման պլանը մշակվել է հաշվի առնելով սույն մասով ամրագրված իրավական ակտերի պահանջները:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 10-րդ հոդվածով ամրագրված է, որ. «Պետությունն ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը», 31-րդ հոդվածով ամրագրված է, որ. «սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին», 33.2-րդ հոդվածով ամրագրված է, որ յուրաքանչյուր ոք պարտավոր է պահպանել ու բարելավել շրջակա միջավայրը, 48-րդ հոդվածով որպես պետության հիմնական խնդիր ամրագրված է նաև՝ ներկա ու ապագա սերունդների բնապահպանական անվտանգությունն ապահովող քաղաքականության իրականացումը:

Հայաստանի Հանրապետությունում ներկայումս գործում են բնապահպանության ոլորտը կանոնակարգող 3 օրենսգրքեր ու 12 օրենքներ: Դրանցից կենսաբազմազանության և բնության հատուկ պահպանվող տարածքների ոլորտը կանոնակարգում են.

- 1) «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգիրքը» (2001թ) (համանուն օրենսգիրքը 1-ին անգամ ընդունվել է 1992թ-ին),
- 2) «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգիրքը» (2002թ) (համանուն օրենսգիրքը 1-ին անգամ ընդունվել է 23.03.1992թ.),
- 3) «Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգիրքը (2005թ) (համանուն օրենսգիրքը 1-ին անգամ ընդունվել է 1994թ-ին),
- 4) «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքը (1994թ),
- 5) «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքը (1995թ),
- 6) «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքը (1998թ),
- 7) «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքը (1999թ),

- 8) "Կենդանական աշխարհի մասին" ՀՀ օրենքը (2000թ),
- 9) "Սևանա լճի մասին" ՀՀ օրենքը (2001թ),
- 10) "Սևանա լճի էկոհամակարգերի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման տարեկան ծրագիր" ՀՀ օրենքը (2001թ),
- 11) "Սևանա լճի էկոհամակարգերի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման համալիր ծրագիր" ՀՀ օրենքը (2001թ),
- 12) "Բնապահպանական վերահսկողության մասին" ՀՀ օրենքը (2005թ.),
- 13) "Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին" ՀՀ օրենքը (2006թ) (համանուն օրենքը 1-ին անգամ ընդունվել է 1991թ-ին),
- 14) "Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին" ՀՀ օրենքը (2006թ),
- 15) "Որսի և որսորդական տնտեսության վարման մասին" ՀՀ օրենքը (2007թ):

Բացի վերոնշյալ օրենսդրական ակտերից կենսաբազմազանության և բնության հատուկ պահպանվող տարածքների ոլորտը կանոնակարգում են նաև ՀՀ քաղաքացիական, վարչական, քրեական օրենսգրքերը, ինչպես նաև "Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին" ՀՀ օրենքը և "Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին" ՀՀ օրենքը:

Բացի հիշատակված օրենքներից, ինչպես նաև դրանց շրջանակներում ընդունված ենթաօրենսդրական ակտերից, բնապահպանության ոլորտը կանոնակարգվում է բազմաթիվ ստանդարտներով ու տեխնիկական կանոնակարգերով:

2. 1990-ական թվականներին Հայաստանը միացել է կենսաբազմազանության պահպանության մի շարք միջազգային պայմանագրերի՝ կոնվենցիաների և համաձայնագրերի և ստանձնել է դրանցով ամրագրված պարտավորությունները, մասնավորապես.

- 1) **"Միջազգային կարևորության ջրածահճային տարածքների, հատկապես որպես ջրով թռչունների բնադրավայր"** կոնվենցիա (Ռամսար, 1971թ.): Հայաստանի կողմից վավերացվել է 1993 թվականին:
- 2) **«Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիա** (CBD, Ռիո դե Ժանեյրո, 1992 թ.): Հայաստանի կողմից վավերացվել է 1993 թ-ին:
- 3) **«Համաշխարհային մշակութային և բնական ժառանգության պահպանության մասին» կոնվենցիա** (Փարիզ, 1972 թ.): Հայաստանի կողմից վավերացվել է 1993 թվականին:
- 4) **«Անապատացման դեմ պայքարի» կոնվենցիա** (Փարիզ, 1994 թ.): Հայաստանի կողմից վավերացվել է 1997 թ-ին:
- 5) **«Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիա** (Ռիո դե Ժանեյրո, 1992 թ.): Հայաստանի կողմից վավերացվել է 1993 թվականին:
- 6) **«Բուսական և կենդանական աշխարհի վայրի անհետացող տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիա** (CITES, Վաշինգտոն, 1973 թ.): Հայաստանի կողմից վավերացվել է 2008 թվականին:
- 7) **«Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին» կոնվենցիա** (Բեռն, 1979 թ.): Հայաստանի կողմից վավերացվել է 2008 թվականին:

8) «Վայրի կենդանիների միգրացիա կատարող տեսակների պահպանության մասին» կոնվենցիա (Բոնն, 1979 թ.): Հայաստանի կողմից վավերացվել է 2010 թվականին:

3. «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների շրջանակներում Հայաստանը հրատարակել է «Հայաստանի կենսաբազմազանություն. Առաջին ազգային զեկույց»-ը և մշակել է «Հայաստանի Հանրապետության կենսաբազմազանության ռազմավարություն և գործողությունների ծրագիր»-ը:

«Հայաստանի Հանրապետության կենսաբազմազանության ռազմավարություն և գործողությունների ծրագիր»-ը ներկայացնում է կենսաբազմազանության պահպանության ազգային ռազմավարությունը, առանձնացնում է ռազմավարությունն իրականացնելու համար առաջնահերթությունները և դրանք ամբողջացնում է կայուն զարգացման պլանների և այլ համապատասխան նախագծերի և ծրագրերի հետ: «Հայաստանի Հանրապետության կենսաբազմազանության ռազմավարություն և գործողությունների ծրագիր»-ը հիմք է հանդիսանում բնության արդյունավետ և միասնական պահպանության համար՝ հաշվի առնելով ժամանակակից սոցիալ-տնտեսական իրավիճակը և պարունակում է կենսաբազմազանության պահպանության, կայուն զարգացման և վերականգնման համար անհրաժեշտ կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ միջոցառումները:

4. «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիայի 8-րդ հոդվածը անդամ երկրներին պարտավորեցնում է.

- 1) ստեղծել պահպանվող տարածքների ցանց՝ ընդգրկելով երկրի համար բնորոշ բոլոր ցամաքային և ջրային էկոհամակարգերի մոդելային տարածքները,
- 2) մշակել ուղեցույց՝ պահպանվող տարածքներն ընտրելու, ստեղծելու և կառավարելու համար,
- 3) խթանել էկոհամակարգերի, բնական ապրելավայրերի պահպանությունն ու պահպանել բնական միջավայրում բնակվող բուսական և կենդանական կենսունակ պոպուլյացիաները,
- 4) կենսաբազմազանության պահպանության համար կարևոր կենսաբանական ռեսուրսների կառավարում կամ ղեկավարում՝ ապահովելով դրանց պահպանությունն ու կայուն օգտագործումը,
- 5) վերականգնել դեգրադացված էկոհամակարգերն ու խթանել անհետացող տեսակների վերականգնումը, մշակել անհրաժեշտ օրենսդրական ակտեր և մեխանիզմներ ու իրականացնել անհրաժեշտ միջոցառումներ՝ վտանգված տեսակների և պոպուլյացիաների պահպանության համար:

5. Ռամսարի կոնվենցիայով կարևորվում է խոնավ տարածքների պահպանության անհրաժեշտությունը, որը պահանջում է յուրաքանչյուր անդամ երկրից առնվազն մեկ խոնավ տարածք առաջադրել միջազգային նշանակություն ունեցող խոնավ տարածքների ցանկում ընդգրկելու համար: Արփի լիճը պաշտոնապես հայտարարվել և ընդունվել է որպես Ռամսարի տարածք:

6. 1997 թվականին Հայաստանի և Վրաստանի կառավարությունների միջև ստորագրվել է երկկողմ համաձայնագիր՝ շրջակա միջավայրի պահպանության հարցերում համագործակցելու մասին: Այդ համաձայնագիրը հիմք է ստեղծում միգրացիա կատարող

թռչունների և կաթնասունների, ինչպես նաև դրանց միգրացիոն ուղիների պահպանության ոլորտում համագործակցության հետագա զարգացման համար

7. Համաձայնագրի 8-րդ հոդվածը անմիջականորեն նշում է երկու կողմերի պարտավորություններն անդրսահմանային պահպանվող տարածքի ստեղծման վերաբերյալ:

1.5. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն

Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի ապրիլի 16-ի N 405-Ն որոշմամբ "Արփի լիճ" ազգային պարկ" պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարումն իրականացնող լիազորված պետական մարմինը Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությունն է.

Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմիններում, այդ թվում Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությունում, 2002 թվականի ընթացքում տեղի են ունեցել ինստիտուցիոնալ փոփոխություններ, որի արդյունքում Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության հենքի վրա ձևաորվեց բնապահպանության ոլորտի կառավարման նոր համակարգ:

Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությունում, տարբեր բնագավառների քաղաքականությունը ձևավորող կառուցվածքային ստորաբաժանումներին համահունչ, ստեղծվեցին տվյալ բնագավառում ծառայություններ մատուցող կառավարման գործառույթներ իրականացնող, նախարարության առանձնացված ստորաբաժանման կարգավիճակ ունեցող գործակալություններ և վերահսկողություն իրականացնող տեսչություն, նպատակ ունենալով ապահովելու նաև բնապահպանության ոլորտում միջազգային պայմանագրերից բխող Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների կատարումը:

Ոլորտի կառուցվածքային բարեփոխումների շրջանակներում զգալի փոփոխություններ կատարվեցին բնության հատուկ պահպանվող տարածքների կարգավիճակներում, ինչպես նաև դրանց պահպանությունն իրականացնող պետական կառույցներում, որոնց վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ընդունված համապատասխան որոշումներով սահմանվեցին դրանց ռեժիմների ու ղեկավարումն իրականացնող գործադիր մարմինների կանոնադրությունները:

Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության իրավասության շրջանակներում է գտնվում միջգերատեսչական և միջազգային համագործակցության իրականացումը կենսաբազմազանության պահպանության ոլորտում:

1.6. «Արփի լիճ» ազգային պարկի պահպանման գոտին

«Արփի լիճ» ազգային պարկի պահպանման գոտում ընգրկված են հետևյալ 19 համայնքների վարչական տարածքները՝ Ամասիա, Աղվորիկ, Արդենիս, Ալվար, Արավետ, Բերդաշեն (Պաղակն), Ձորակերտ (Դարիկ), Ծաղկուտ (Լորասար), Գառնառիճ (Եղնաջուր), Զառիշատ (Երիզակ), Բավրա, Ղազանչի, Փոքր Սեպասար, Մեծ Սեպասար, Սարագյուղ, Շաղիկ, Սիզավետ, Թավշուտ, Կրասար (Քարտեզ 3):

1.7 Սահմանների նկարագրություն և հանգուցային սահմանակետեր

«Արփի լիճ» ազգային պարկի համապատասխան տեղամասերի հանգուցային սահմանակետերի միջոցով զատված սահմանների նկարագիրը հաստատվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 21-ի «Արփի լիճ» ազգային պարկի սահմանների նկարագիրը, հատակագիծը, տարածքի չափը հաստատելու և հողերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին» N1151-Ն որոշմամբ: «Արփի լիճ» ազգային պարկի սահմանագատման գործընթացն իրականացվել է «Արփի լիճ» ազգային պարկի պահպանման գոտում գտնվող բոլոր համայնքների հետ սերտ համագործակցությամբ: Սահմանների հետ կապված բոլոր հարցերը պարզվել են մասնակցային պլանավորման գործընթացի միջոցով:

Քարտեզ 3 «Արփի լիճ» ազգային պարկի պահպանման գոտու սխեման



1.«Արփի լիճ» ազգային պարկի բնական պայմանները

1.8.1. Կլիման

Աշոցքի սարահարթը բնորոշվում է խիստ, մեծամասամբ ցամաքային կլիմայով: Սարահարթը գտնվում է 1500-3100 մ բարձրությունների վրա: Օդի միջին ջերմաստիճանը սարահարթի կենտրոնական մասում հուլիսի կեսերին կազմում է 15°C: Միջին ջերմաստիճանը կազմում է հունվարին -13°C-ից մինչև +13°C՝ հուլիսին, իսկ միջին տարեկան ջերմաստիճանը +1°C է: Դրական ջերմաստիճաններով օրերի քանակը տարեկան կազմում է 210 օր: Վեգետացիոն շրջանը միջինով 160 օր է: Արեգակի լույսի

քանակությունը տարեկան կազմում է 2,400 ժամ: Միջին տարեկան տեղումների քանակը մոտ 500 մմ է: Քամիները ուժգին են գարնանն ու աշնանը:

Խիստ կլիմայի ու մեծ բարձրությունների պատճառով, Ջավախքի սարահարթում տիրապետում են անտառազուրկ լեռնային տափաստանները, մերձալպյան և ալպյան մարգագետինները: Տարածքը անտառազուրկ է դարձել դեռ սառցային շրջանում: Ամբողջ սարահարթով ցրված են սոճու տնկադաշտերը, որոնք տնկվել են դեռևս խորհրդային շրջանում 1930-1950 թթ-ին:

Խիստ կլիմայի ու անբարենպաստ պայմանների պատճառով, բնակչության խտությունը այստեղ համեմատաբար ցածր է և շարունակվում է իջնել արտագաղթի հաշվին: Ձմռանը համարյա 4 ամսով տարածքի արևմտյան հատվածի մի շարք համայնքներ գործնականում անջատված է լինում Հայաստանի մնացած բնակավայրերից՝ խորը ձնածածկի (1.5 մ և ավելի) և ճանապարհների անանցելիության պատճառով:

1.8.2. Երկրաբանությունը, հողերը և երկրաձևաբանությունը

Հայաստանի Ջավախքի (Աշոցքի) շրջանը գտնվում է բարձրադիր սարահարթի վրա: Աշխարհագրական տեսակետից, այն ներկայացնում է Մերձավոր Արևելքի սարահարթի ամենահյուսիսային մասը: Դրա սահմանը հյուսիսում և արևմուտքում անցնում է Ղուկասյան լեռնաշղթայով, արևելքում՝ Ջավախքի լեռնաշղթայով, իսկ հարավում՝ աստիճանաբար անցնում է Երևանյան սարահարթը: Սարահարթի և դրան շրջապատող լեռների հայաստանյան մասի ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 350 կմ²:

Սարահարթի երկրաբանական կառուցվածքում առկա են միոցենի, վերին պլիոցենի և պլեյստոցենի դարաշրջանների հրաբխային ապարներ: Բարձրությունը տատանվում է 1500-3042 մ սահմաններում: Սարահարթի ռելիեֆը հարթ է և թույլ ալիքավոր: Բացի Արդենիս լճից (հայելու մակերեսը մոտ 10 հա), Արփի լիճը՝ 3100 հա ընդհանուր մակերեսով հանդիսանում է սարահարթի հայկական մասի միակ խոշոր լիճը: Լճերը հրաբխային ակտիվության արդյունք են հանդիսանում: Սարահարթի հարավային մասը Ախուրյան գետի ավազանում ծածկված է խոնավ տարածքներով:

Հողերի կազմն ու կառուցվածքը կախված են բարձրությունից, լանջերից և այլ պայմաններից: Եղնախաղի և Ջավախքի լեռնաշղթաների ամենաբարձր գագաթները ծածկված են բարձրալեռնային մարգագետնային հողերով, որոնք նախալեռներում անցնում են մարգագետնային գորշ կիսաանապատային հողերի: Արփի լճի սարահարթը մեծամասամբ ծածկված է սևահողերով, իսկ ցածրավայրերում և Ախուրյան գետի հին հունում տարածված են մարգագետնաճահճային հողերը: Ախուրյանի կիրճի կողային լանջերը ծածկված են մայրական ապարներով:

1.8.3. Զրագրությունը

«Արփի լիճ» ազգային պարկի արևմտյան տեղամասը պահպանում է Արփի լճի ամբողջ ջրավազանը (14964.9 հա): «Արփի լիճ» ազգային պարկի արևելյան տեղամասը (5408 հա) պահպանում է Ջավախքի լեռնաշղթայի ձախակողմյան լանջերից հոսող Աշոցք և Ղուկասյան գետերի ջրավազանների մեծ մասը: Այս երկու գետերը միանում են Ախուրյանի կիրճից դեպի հյուսիս և ոռոգում են սարահարթը կիրճի միջով: Աշոցքի սարահարթը համարվում է Հայաստանի կարևոր ջրավազաններից և ջրամատակարարման շրջաններից

մեկը, որտեղից Գյումրի քաղաքը և բազմաթիվ գյուղական համայնքները ստանում են խմելու ջուր, իսկ հոսանքն ի վար գտնվող մի շարք համայնքները, ներառյալ Արարատյան դաշտավայրը՝ նաև ոռոգման ջուր:

Արփի լիճը բնական լիճ էր մինչև 1950 թվականը, երբ այն պատվարվել է արհեստական ջրանցքի միջոցով՝ ոռոգման ջուր մատակարարելու համար: Ջրանցքի ջուրն օգտագործվում է նաև Գյումրիի հիդրոէլեկտրակայանի համար: Մինչև պատվարի կառուցումը լճի ջրատարողությունը կազմում էր 5 մլն մ³, լճի միջին խորությունը 50-70 սմ-ից քիչ էր, իսկ հայելու ընդհանուր մակերեսը մոտ 5 կմ² էր: 1956 թվականին Արփի լիճը վերածվեց ջրամբարի:

Պատվարելու ավարտից հետո Արփի լճի մակերեսը մեծացել է մինչև 22.1 կմ², ջրատարողությունը ավելացել է մինչև 90 մլն մ³, իսկ միջին խորությունը դարձել է 1-1.5 մ: Ջրամբարի առավելագույն ջրատարողությունը կազմում է 110 մլն մ³: Վերջին տարիներում ջրամբարն օգտագործվում էր իր պոտենցիալի կեսից պակասի չափով, ինչը հանգեցրեց ջրի մակարդակի լուրջ տատանումների: Ջուրը առավելագույն մակարդակի է հասնում հունիս ամսին:

Ներկայումս Արփի լճի կառավարման լիազորությունները վերապահված են Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարությանը:

Արփի լճի /ջրամբարի/ 6 վտակներից ամենախոշորը և գլխավորը Չիվին գետակն է, որը գտնվում է ջրամբարի հյուսիս-արևմտյան մասում և ապահովում է ներհոսքի գրեթե 30%-ը: Չիվին գետը սնվում է գրեթե 60 բնական աղբյուրներից և տարեկան 25 մլն մ³ ջուր է բերում Արփի լիճ:

Արևելյան տեղամասը, որտեղ գտնվում են Աշոցք և Ղուկասյան գետերը իրենց վտակներով ունեն առավել մեծ ջրհավաք տարողություններ՝ հավասարակշռված ջրային բալանսի շնորհիվ, հաշվի առնելով խմելու ջրի այն հսկայական ծավալները, որ վերցվում են Գյումրիի համար Կրասարի ջրմուղ կայանից վերև գտնվող երկու վայրերից: Հիմնական պատճառը հատակի ապարների մեծ ջրատարողության մեջ է (երիտասարդ հրաբխային կազմավորումներ, տուֆի բարձր ծակոտկենություն), ինչպես նաև ջրահեռացման վայրերում գրունտային ջրերի մակարդակի բարձրացումը: Ապրիլ և հունիս ամիսներին ամենամայա ջրհոսքը կազմում է տարեկան հոսքի միայն 40%-ը՝ համեմատած Ձորագետի ավազանի 65%-ի հետ: Այդ հարաբերակցությունը բնական է, քանի որ խմելու ջրերը վերցվում են տարվա ընթացքում գրեթե հավասար չափով: Բացի դրանից, ջրահոսքը՝ ջրհավաքի մեկ միավորի վրա (լիտր մեկ վայրկյանում և կմ² վրա) այստեղ 50%-ով ավելին է, քան Ախուրյան գետի վերին հոսանքի արևմտյան մասում: Ջրամբարից հոսանքն ի վար այդ բնական ջրաբանական ցիկլը շատ փոփոխված է: Տարեկան հոսքի շուրջ 80%-ը տեղի է ունենում հունիսից մինչև հոկտեմբեր ժամանակաշրջանում, իսկ ապրիլից-հունիս՝ միայն 20%-ը: Ամսական հոսքը հուլիսին և օգոստոսին գրեթե 15 անգամ ավելի բարձր է, քան ցածր ջրահոսք ունեցող ժամանակաշրջանում: Խոնավ տարածքները, ճահիճները և հունը գտնվում են հիմնականում Ախուրյան գետի երկայնքով՝ Բերդաշեն գյուղից ներքև:

Արդենիս լիճը (10 հա) ևս մեկ բնական լիճ է, որը գտնվում է Աշոցքի սարահարթում: Արդենիս լիճը համարվում է ջրլող թռչունների համար կենսական նշանակություն ունեցող ապրելավայր, իսկ ամառվա ժամանակ այս լճից գոյացող խոնավ տարածքներում բնադրվում է հազվագյուտ մոխրագույն կռունկը:

«Արփի լիճ» ազգային պարկի պահպանման գոտու բոլոր համայնքներն իրենց խմելու ջուրն ստանում են «Արփի լիճ» ազգային պարկի սահմաններում գտնվող բնական աղբյուրներից: Արփի լիճ» ազգային պարկում պահպանվող ջրային ռեսուրսները հանդիսանում են Աշոցքի սարահարթի ամենակարևոր առանձնահատկությունը, ինչը ցույց է տալիս ամբողջ Հայաստանի էկոհամակարգերի և սարահարթի պահպանության համար ջրավազանների կայուն պահպանության բացարձակ անհրաժեշտությունը:

1.8.4. Բուսական աշխարհը

Հայաստանը շատ հարուստ է բուսական տեսակների, հատկապես՝ էնդեմիկ, ռելիկտային և հազվագյուտ ներկայացուցիչների բազմազանությամբ: «Արփի լիճ» ազգային պարկի տարածքի բույսերի ցանկը տրված է Ցանկ 1-ում:

Կովկասում հանդիպող 6000 անոթավոր բուսատեսակներից 3500-ը աճում են Հայաստանում, որոնք իրենց տեսակների խտությամբ (100 տեսակներ/կմ²) դասվել են աշխարհում ամենաբարձրների շարքը: Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գրքում գրանցված են բույսերի 452 տեսակներ, սնկերի 40 տեսակներ: Հայաստանի Հանրապետությունը համարվում է աշխարհում ագրոկենսաբազմազանության կարևոր կենտրոններից մեկը, որտեղ ընդարձակ տարածությունների վրա աճում են գյուղատնտեսական մշակաբույսերի վայրի ցեղակիցները:

Հայաստանում էնդեմիկ տեսակները կազմում են բարձրակարգ բույսերի ամբողջ ֆլորայի 3%-ը (համեմատած Կովկասի մյուս շրջանների 1.5%-ի հետ): Հաշվի առնելով հանրապետության փոքր տարածքը, ընդհանուր տեսակային բազմազանությունը Հայաստանում մեծ է, հատկապես՝ ցածրակարգ բույսերի:

Աշոցքի սարահարթը կազմում է Շիրակ-Ջավախքի կենսաաշխարհագրական շրջանի մասը և ծածկված է տափաստաններով, մարգագետնատափաստաններով, մերձալպյան և ալպյան մարգագետիններով և խոնավ տարածքներով: Շիրակ-Ջավախքի լանդշաֆտներից առավել սովորական են մարգագետիններն ու մարգագետնատափաստանները: Տափաստանային համակեցությունները, որոնք տարածված են 1800-2500 մ բարձրության վրա, մեծ մասամբ աճում են սևահողերի վրա: Գերակշռող ներկայացուցիչներից են շյուղախոտ ակոսավորը (*Festuca sulcata*)

և փետրախոտ մազիկավորը (*Stipa capillata*) խոտատեսակները, որոնք աճում են հարավային լանջերի երկայնքով և հարթ մակերևույթների վրա: Խոտատեսակներից գերակշռում են ոզնախոտ կծկավորը (*Dactylis glomerata*), *երեքնուկ ալպյանը* (*Trifolium alpestre*), առվույտ Ջավախքի (*Medicago dzavakhetica*), և մի քանի սագասոխուկ, պապլոր և այլն տեսակները: Մարգագետնատափաստանները տարածված են միայն հյուսիսային լանջերի վրա, որտեղ հիմնական տեսակներն են հանդիսանում փետրախոտ նեղատերև (*Stipa tirsia*), թթվիճ խոշորածաղիկը (*Betonica macrantha*) և աստղածաղիկ վրացականը (*Aster ibericus*). Տարածաշրջանի բուսականությունն ունի մեզոֆիլ հատկանիշներ:

Մինչև 2000 մ բարձրության վրա աճող ջրասեր բարձրլեռնային տափաստաններում հիմնական տեսակներն են եղեգ հարավայինը (*Phragmites australis*), կեռոն լայնատերևը (*Typha latifolia*), կեռոն նեղատերևը (*Typha angustifolia*), կամ կեռոն Լաքսմանին (*Typha laxmanii*), ճլախոտ Թաբերնեմոնթանին (*Schoenoplectus tabernaemontani*): Հազվագյուտ և անհետացման եզրին գտնվող տեսակներից հիրիկ սիբիրյանը (*Iris sibirica*), թրաշուշան

բարակ (*Gladiolus tenuis*), տրաունշտայներա գնդածևր (*Traunsteinera shpaerica*) և մկնաստխ Ռոզենին (*Scilla rosenii*), որոնք գրանցված են Հայաստանի Կարմիր գրքում, մինչև այժմ սովորական են Արփի լճին հարակից բարձրադիր տափաստաններում և Ախուրյանի խոնավ տարածքներում: Ջրասեր ցածրադիր տափաստանները ձևավորվել են 2300 մ-ից բարձր բարձրություններում և ունեն սահմանափակ տարածվածություն: Հիմնական բուսատեսակները պատկանում են *Equisetes* ցեղին: Մատիտեղ երկկենցաղ (*Polygonum amphibium*) գերակշռում է Արփի լճի բուսականության մեջ:

Աշոցքի սարահարթը դեռ հոլոցենի դարաշրջանից զուրկ է եղել անտառային բուսականությունից: Կուսական լանդշաֆտները գտնվում են 2000 մ-ից բարձր բարձրություններում, որտեղ գերակշռում են լեռնային տափաստանները:

Լեռնային տափաստանները Հայաստանում զգալի տարածքներ են զբաղեցնում, մասնավորապես, 1500 մ-ից բարձր (հյուսիսում մինչև 2000 մ և հարավում մինչև 2400-2500 մ): Մերձալպյան մարգագետինները տարածված են լեռնային տափաստանների անցումային գոտուց դեպի վեր (2000 մ-ից բարձր) և փոխարինվում են ալպյան մարգագետիններով, որոնք ձգվում են մինչև 3000 մ բարձրությունները:

80 ընտանիքի, 269 ցեղի մոտ 670 տեսակի բարձրակարգ բույսեր են աճում “Արփի լիճ” ազգային պարկի տարածքում: Տեսակներով հարուստ բազմատեսակ ընտանիքներից են Հովանոցազգիները (*Apiaceae*), Բարդաձաղկազգիները (*Asteraceae*), Մեխակազգիները (*Caryophyllaceae*), Լոբազգիները (*Fabaceae*), Շրթնաձաղկավորները (*Lamiaceae*), Հացազգիները (*Poaceae*), Գորտնուկազգիները (*Ranunculaceae*), Վարդազգիները (*Rosaceae*), *Խլածաղկազգիները* (*Scrophulariaceae*):

19 տեսակները ներառված են Հայաստանի Կարմիր Գրքում գետնասող ցեղակից (*Asperula affinis*), գազ կորասերմ (*Astragalus campylosema*), կատվախոտ բրդատերև (*Valeriana eriophylla*), եզնակող Սոսնովսկու (*Bupleurum sosnowsky*), հիրիկ սիբիրյան (*Iris sibirica*), հաղարջենի հայկական (*Ribes armenum*), կարծրածաղիկ բազմամյա (*Scleranthus perennis*), դորոնիկում Բալանզայի (*Doronicum balansae*), գրամոսցիադիում տևապտուղ (*Grammosciadium pterocarpum*), հապալասենի ճահճային (*Vaccinium uliginosum*), թրաշուշան Ջավախքի (*Gladiolus dzhavakheticus*), սոխ ժայռի (*Allium rupestre*), կատվատոտիկ կովկասյան (*Antennaria caucasica*), անթեմ կովկասյան (*Anthemis caucasica*), գազ գնդածև (*Astragalus globosus*), ջրաշուշան դեղին (*Nuphar lutea*), գազ չորասեր (*Astragalus xerophylus*), հաղարջենի Ախուրյանի (*Ribes achurjani*), մկնաստխ Ռոզենի (*Scilla rosenii*): Այս բույսերի շարքում Հայաստանի համար էնդեմիկ է հաղարջենի Ախուրյանի (*Ribes achurjani*), 2-ը էնդեմիկ են անդրկովկասի համար՝ եզնակող Սոսնովսկու (*Bupleurum sosnowsky*), կատվախոտ բրդատերև (*Valeriana eriophylla*), 6-ը էնդեմիկ են Հայկական բարձրավանդակի՝ գազ կորասերմ (*Astragalus campylosema*), գազ պարսկական (*Astragalus persicus*), դորոնիկում Բալանզայի (*Doronicm balansae*), անթեմ կովկասյան (*Anthemis caucasica*), գազ գնդածև (*Astragalus globosus*), գազ չորասեր (*Astragalus xerophylus*), 5-ը էնդեմիկ են Կովկասի համար՝ թրաշուշան կովկասյան (*Gladiolus caucasicus*), թրաշուշան բարակ (*Gladiolus tenuis*), հիրիկ եղանի (*Iris furcata*), մկնաստխ Ռոզենի (*Scilla rosenii*), կատվատոտիկ կովկասյան (*Antennaria caucasica*):

Այստեղ կան բազմաթիվ գրավիչ ու դեկորատիվ բույսեր. Խոլորձներ (*Orchids*) տրաունշտայներա գնդածև (*Traunsteinera shpaerica*), դակտիլորիզ կատառնյան

(*Dactylorhiza cataonica*), դակտիլորիզ էվքսինյան (*Dactylorhiza euxina*), թրաշուշանների տեսակներ՝ թրաշուշան կովկասյան (*Gladiolus caucasicus*), թրաշուշան Ջավախքի (*Gladiolus dzavakhetius*), թրաշուշան Կոչիի (*Gladiolus kotschyanus*), թրաշուշան բարակ (*Gladiolus tenuis*), շնդեղ Շովիցի (*Colchicum szovitsii*), դորոնիկում Բալանզայի (*Doronicm balansae*), հիրիկներ (*irises*)՝ հիրիկ ցանցավոր (*Iris reticulate*), հիրիկ թզուկային (*Iris pumila*), հիրիկ եղանի (*Iris furcata*), կակաչների տեսակներ՝ կակաչ հայկական (*Papaver armeniacum*), կակաչ արևելյան (*Papaver orientale*), կակաչ կեղծարևելյան (*Papaver psevdorientale*), մկնաստիս Ռոզենի (*Scilla rosenii*), շուշան Շովիցի (*Lilium szovisianum*), որոնք հայտնի են Կովկասում և Արևելյան Թուրքիայում: Այս տեսակներն աճում են միայն լեռների բարձունքներում և բավականին հազվադեպ են Հայաստանի համար:

Կարևոր է նշել այստեղ հանդիպող մի շարք բույսերի տեսակներ, որոնք հազվադեպ են Հայաստանի համար:

Կատվախոտ բրդատերևն (*Valeriana eriophylla*) Հայաստանում աճում է միայն վերին Ախուրյանի տարածաշրջանում: Տարածաշրջանը մկնաստիս Ռոզենիի (*Scilla rosenii*), երկու կողմերից մեկն է: Կովկասյան էնդեմիկ և հազվագյուտ շուշանաբանդար վարդագույն-ը (*Chaerophyllum roseum*) աճում է միայն վերին Ախուրյանի, Իջևանի և Սևանի շրջաններում: *Antennaria caucasica* –ը էնդեմիկ է Կովկասի համար և աճում է միայն վերին Ախուրյանի, Ապարանի և Գեղամայի որոշ մասերում՝ մերձալպյան և ալպիական մարգագետիններում: Ջրաշուշան դեղին (*Nuphar luteum*) ներկայումս Հայաստանում աճում է միայն Արփի լճի շրջակայքում: Կովկասյան էնդեմիկ ագրիստուկ Բալանզայի (*Agrostis balansae*) Հայաստանում հայտնի է միայն Եղնախաղ (Աղբաբա) սարից: Տարածքը ներառում է նվիրախոտ բուրավետ (*Hierochloe odorata*), բարակոտնուկ Ալբովի (*Koeleria albovii*) տարածքներից մի քանիսը: Արփի լճի մոտակայքում աճում է շատ հազվադեպ ցինգերիա Բիբերշտեյնին (*Zingeria biebersteiniana*):

Գորտնուկ Արագածի (*Ranunculus aragazii*) և հաղարջենի Ախուրյանի (*Ribes achurjanii*) էնդեմիկ են Հայաստանի համար և աճում են տարածքում:

Այցելության սեզոններ

Ապրիլի վերջից մինչև մայիս-հուլիսի սկիզբը հնարավոր է տեսնել Կովկասյան էնդեմիկ մկնաստիս Ռոզենիի (*Scilla rosenii*) ծաղկելը՝ մեծ, վարդակապտավուն ծաղիկներով /Արփի լճի շրջակայքում/, չափազանց գրավիչ հիրիկ սիբիրյան (*Iris sibirica*) նեղ թփերով և մուգ կապույտ ծաղիկներով /Արփի լճի շրջակայքում, Ախուրյան գետի կիրճում՝ կողային կիրճերի փոքրիկ գետակների մոտ/, կաղամախու (*Populus tremula*) բաց անտառներում և ժայռերի լանջերի վրա տարածված գիհի սեղմված (*Juniperus depressa*): Գնարբուկ ականջավորն (*Primula auriculata*) մանուշակագույն ծաղիկներով, որոնք հավաքվում են խիտ ծաղիկներով տերևակոթի վերնամասում /Ախուրյան գետի կիրճում՝ կողային կիրճերի փոքրիկ գետակների մոտ/: Շատ փոքրիկ հիրիկ ցանցավոր (*Iris reticulate*)՝ կապույտ և մանուշակագույն ծաղիկներով աճում է Ամասիայի մերձակայքում: Այս սեզոնին ծաղկում են սագաստիս (*Gagea*) տեսակի դեղին աստղիկները՝ սագաստիս Ալեքսենկոյի (*Gagea alexeenkoana*), սագաստիս կասկածելի (*Gagea dubia*) և արքայածաղիկ կովկասյան (*Fritillaria caucasica*) շագանակամանուշակագույն զանգակաձև ծաղիկներով:

Հունիս-հուլիս ամիսներին Արփի լճի շրջակայքը լի է թրաշուշանի տեսակներով՝ թրաշուշան կովկասյան (*Gladiolus caucasicus*), թրաշուշան Ջավախքի (*Gladiolus dzavakhetius*), թրաշուշան Կոչիի (*Gladiolus kotschyanus*), թրաշուշան բարակ (*Gladiolus tenuis*)՝ մանուշակագույն ծաղիկներով: Գեղեցիկ կակաչները՝ հսկայական կարմիր ծաղիկներով, աճում են Ախուրյան գետի կիրճում՝ Փոքր Սեպասար գյուղի կողմից: Ամասիայի մոտակայքում աճում է կակաչ հայկական (*Papaver armeniacum*) բաց կարմիր ծաղիկներով: Վարդ անխոնատերևն (*Rosa pimpinellifolia*) տարածված է Ախուրյան գետի կիրճում, ինչպես նաև Ջավախքի լեռնաշղթայի լանջերի վրա՝ Սարագյուղ համայնքի մոտ: Զորակերտ և Դարիկ համայնքների միջև աճում է Հայաստանում նոր տեսակի կակաչ՝ կակաչ լեռնային (*Papaver oreophilum*), իր նրբագեղ նարնջագույն ծաղիկներով: Ախուրյան գետի կիրճում հայտնաբերվել է շատ հետաքրքիր և հազվադեպ կորնգան կաղմեյական (*Onobrychis cadmea*)՝ վարդամանուշակագույն ծաղիկներով: Հայաստանի համար շատ հազվադեպ թուփը կուրիլական թեյ (*Dasiphora fruticosa*)՝ փոքր վառ դեղին ծաղիկներով աճում է Ախուրյան գետի հովտում՝ գետափի երկայնքով: Այստեղ աճում է գեղեցիկ էթեոպպոս գեղեցկագույն (*Aetheopappus pulcherrimus*), խոնդատ մանուշակագույն (*Verbascum phoeniceum*) իր մուգ շագանակա-մանուշակագույն ծաղկաթերթերով: Կտավատ սրոհունդատերև-ը (*Linum hypericifolium*) մեծ վարդագույն ծաղիկներով և *ուրց Կոչիի* (*Thymus kotschyanus*) աճում են ամբողջ տարածաշրջանում: Շուշան Շովիցի (*Lilium szovisianum*)՝ շքեղ մեծ դեղին ծաղիկներով և փոքր հիրիկ եղանի (*Iris furcata*), հիրիկ թզուկային (*Iris pumila*)՝ կապտավուն չափազանց փոքրիկ ծաղիկներով հայտնաբերվել է լեռներում՝ Դարիկ գյուղից վերև: Այստեղ հնարավոր է նաև տեսնել անդրսահմանային էնդեմիկ կատվախոտ բրդատերև (*Valeriana eriophylla*), որը նույնպես աճում է Ջավախքի լեռնաշղթայում՝ Սարագյուղից վերև: Խոլորձները (*Orchids*), տրաունշտայներա գնդաձև (*Traunsteinera shpaerica*), դակտիլորիզ կատաոնյան (*Dactylorhiza cataonica*) աճում են Արփի լճից վերև լեռնային տարածքներում՝ դեպի Վրաստանի սահմանը /Դարիկ, Ծաղկուտ գյուղերից վերև/:

Գեղեցիկ և հետաքրքիր շատ տեսակներ են հայտնաբերվել բարձր լեռնային գոտում՝ 2500 մետրից բարձր: Աչքասար լեռան /Ջավախքի լեռնաշղթա/ քարքարոտ հատվածքներում աճում են առնասպար Ռադեի (*Androsace raddeana*), բաց դեղնավուն գնարբուկ Պալասի (*Primula pallasii*) և գնարբուկ ականջավոր (*Primula auriculata*):

Հուլիս-օգոստոս ամիսներին Հայաստանում միակ տարածքը, որտեղ ծաղկում է դեղին ջրաշուշանը (*Nuphar luteum*)՝ Ախուրյան գետի նախկին հունն է՝ Արդենիս համայնքի մոտակայքում: Այստեղ և Արդենիսի լճակի մոտ աճում է Հայաստանի համար հազվադեպ դաղձ դաշտային (*Mentha arvensis*) և շատ հետաքրքիր *բեկմանիա ճարճրուկանման* խոտը (*Beckmannia eruciformis*):

Օգոստոս ամսին սկսվում է բույսերի ծաղկումը բարձր լեռներում: Բազմաթիվ հազվադեպ և հետաքրքիր տեսակներ են հայտնաբերվում Եղնախաղի և Ջավախքի լեռնաշղթաներում: Մասնավորապես, հետաքրքիր է Մեծ Եղնախաղը Հայաստանի համար հազվադեպ ալպյան հավամրգով հապալասենի ճահճային (*Vaccinium uliginosum*), կատվատոտիկ կովկասյան (*Antennaria caucasica*) կլորավուն ծաղկմամբ: Հայաստանի համար էնդեմիկ է հաղարջը հաղարջենի Ախուրյանի (*Ribes achurjanii*): Ջավախքի լեռնաշղթայի բարձր լեռնային գոտիներում աճում է հապալասենի մրտենական (*Vaccinium myrtillus*):

Հիմնական վտանգներ

Չկանոնակարգված արածեցումը համարվում է ամենամեծ վտանգը բույսերի վտանգված և խոցելի տեսականների համար: Ախտության գետի նախկին հունում ջրի անկայուն և ցածր մակարդակի պատճառով կրիտիկական վիճակում է գտնվում դեղին ջրաշուշանը (*Nuphar luteum*): Վտանգված տեսակների պոպուլյացիաների վիճակը և նրանց պահպանման միջոցառումները տրված են ՀՀ Բույսերի կարմիր գրքում (2010):

Պահպանություն

Վտանգների մեղմացման և կառավարման նպատակով կարևոր բույսերի աճելավայրերի պահպանման համար “Արփի լիճ” ազգային պարկի տարածքում ընտրվել են հետևյալ տեղամասերը.

- 1) Արփի լճի հարավ արևմտյան ափը /ապրիլ-հուլիս/,
- 2) Ախտության գետի կիրճը՝ Փոքր Սեպասարից դեպի Ամասիա /ապրիլ-հուլիս/,
- 3) Արփի լճից վերև՝ դեպի հյուսիս տեղակայված լեռները /մայիս-հուլիս/,
- 4) Եղնախաղի /Մեծ Եղնախաղ լեռ/ և Ջավախքի /լանջերը Սարագյուղից վերև, Աջքասար լեռը/ լեռնաշղթաները /հունիս-օգոստոս/,
- 5) Արդենիս գյուղի մոտակայքի խոնավ տարածքները /հունիս-օգոստոս/:

Վերննշված տարածքներ տանող ճանապարհներին պետք է տեղադրվեն ուղղեփակոցներ և համապատասխան ցուցանակներ: Առաջակվում է այդ տարածքներում իրականացնել պարբերաբար հսկողություն հիմնականում նշված ժամանակահատվածում, չկանոնակարգված արածեցումը կանխելու նպատակով:

Տնտեսական արժեք ներկայացնող բուսատեսակներ

“Արփի լիճ” ազգային պարկի պահպանման գոտու անասնաբուծության զարգացմանն անհրաժեշտ կերպահովման խնդրի լուծման, ինչպես նաև շրջակա միջավայրի վրա անասնաբուծության վարման արդյունքում բացասական ազդեցության կրճատման և կենսաբազմազանության պահպանության համար անհրաժեշտ է իրականացնել միջոցառումներ ուղղված կերհանդակների վերականգնմանը և մշակել այլընտրանքային բնօգտագործման եղանակներ:

Ա•րոկենսաբազմազանության կարևոր բաղադրամասերից են ուտելու, համեմունքային և դեղագործական նշանակությամբ վայրի խոտաբույսերը, որոնց պահպանության և արդյունավետ օգտագործման հարցերը ներկա սոցիալ-տնտեսական հարաբերությունների պայմաններում օրակարգային են:

Որպես այլընտրանքային բնօգտագործման ձևեր համայնքներում արդարացված է բնական բուսական համակեցություններում դեղաբույսերի և ուտելի բույսերի հավաքի կազմակերպումը: Համայնքների աշխարհագրական դիրքը, բնակլիմայական պայմանները ստեղծել են հնարավոր պայմաններ տարաբնույթ և խայտաբղետ բուսական համակեցությունների ձևավորման և զարգացման համար: Համակեցություններում զգալի տարածում ունեն տարբեր բուսական ընտանիքներին պատկանող տարախոտային

այնպիսի տեսակներ, որոնք օգտագործվում են կերային, պարենային և դեղագործական նպատակներով:

Այդ բույսերը խնայողաբար օգտագործման դեպքում, դառնում են սպառողական արժեքներ, մարդու պահանջները բավարարող բարիքներ և համարվում են ժողովրդի ավանդական սննդառության օրաբաժնի մոտավորապես 10-15 տոկոսը:

Աշոցքի տարածաշրջանի բնական էկոհամակարգերում զգալի տարածում ունեն հետևյալ ուտելի, համեմունքային և դեղատու բույսերը՝ եղինջ երկտուն (*Urtica dioica L.*), ավելուկ գանգուր (*Rumex crispus L.*), ուրց անդրկովկասյանը (*Thymus transeaucasicus Ronn*), ուրցադաղձ (ռեհան ուրցանման) (*Ziziphora clinopodioides Lam.*), մարիամ խոտը (*Teucrium polium L.*), անանուխը (դաղձ դաշտային) (*Mentha piperita arvensis*), մարգագետնային սինձը (*Tragopogon pratensis L.*), սինձ հացազգիատերևը (*Tragopogon graminifolius DC.*), խատուտիկ դեղատու (*Taraxacum officinalis Wild*), արյունխմիկ դեղատու (*Samguisorba officinalis L.*), հազարատերևուկ հատվածատերև (*Achilla millefolium*), փիփերթ (*Malva silvrstris L.*), եզան լեզու մեծ (*Plantago maior L.*), մատիտեղը (*Polygonum carneum Koch.*), առյուծագին (*Leonurus cardiaceae L.*), ձիաձետ դաշտայինը (*Eguiscutum arvense L.*), հատապտղավորներից մեծ տարածում ունի մասրենին (*Rosa L.*).

Ներկայում որպես ուտելի վայրի բանջարայիններ առավել օգտագործվում են սիբեխը, ավելուկը, եղինջը, իսկ որպես համեմունքային օգտագործվում են ուրցը, դաղձը, մայրամախոտը: Առավել մեծ ճանաչում ունի օգտագործման մեջ մասրենին, որի հատապտուղները օգտագործվում են սննդի մեջ, օգտագործվում է նաև մասրենու ծաղկաթերթիկները:

Ավելուկ (*Rumex crispus L.*)

Բազմամյա բանջարային բույս է մատիտեղազգիների ընտանիքից: Յողունի բարձրությունը 15-120 սմ: Տերևները թեթևակի մսալի երկարակող, ձվաձև, միջին և ծայրի տերևները՝ կարճակող, նիզակաձև, ավելի սակավ՝ եռաբաժին, խոր կտրվածքով: Ծաղիկները իրարից հեռու դասավորված ծաղկաբույլերով: Կոճղարմատը հաստ է ճյուղավոր: Վայրի աճող, ուտելի բույս է, համարվում է բնական անտիբիոտիկ. բարձր սննդարարությամբ օժտված բանջարեղեն է: Որպես դեղ օգտագործվում է ավելուկի արմատը:

Եղինջ երկտուն (*Urtica dioica L.*)

Եղինջազգիների ընտանիքի տարածված բազմամյա բույս է օգտագործվում է կերային և դեղագործական նպատակներով: Յողունը 1-1,5 մ բարձրությամբ, տերևները կոթունավոր սրտաձև, սղոցատամ: Ամբողջ բույսը պատված է կոշտ այրող մազիկներով: Գոյություն ունի եղինջի երկու տեսակներ՝ խուլ և ծակող (այրող): Բժշկության մեջ օգտագործվում է խուլ եղինջը: Սննդի համար որպես բանջարեղեն անհրաժեշտ է օգտագործել մատղաշ ընձյուղները: Բույսը հարուստ է օսլայով, սպիտակուցներով, վիտամիններով և շաքարներով:

Անանուխ (*Mentha arvensis L.*)

Շրթնածաղկավորների ընտանիքի կոճղարմատավոր բազմամյա բույս է. ցողունը 40-100 սմ բարձրությամբ, ճյուղավոր: Տերևները երկարավուն են կամ էլիպսաձև-նշտարաձև, սղոցաեզր, նստադիր, վերևից կանաչ, տակից սպիտակ երանգով երբեմն մազմզոտ: Ծաղիկները կարմրակապույտ կամ վաղադույն երանգի գտնվում են ցողունի գագաթին

բարդ հասկերի ձևով: Օգտագործվում է համեմունքի նպատակով, ունի դեղագործական նշանակություն: Պարունակում է եթերայուղ և մենթոլ: Օգտագործվում են բույսի տերևները: Ուրց սղացող (*Thymus serpyllum L.*)

Խուլ եղինջազգիների ընտանիքին պատկանող, 10-35 սմ բարձրության, գետնի վրա փռված, խիստ ճյուղավոր, հիմքում փայտացած ցողունով կիսաթուփ է: Ունի ձվաձև տերևներ: Ծաղկաբույլերը գտնվում են ճյուղերի ծայրերին: Արձակում է սուր հաճելի բուրավետ հոտ: Պարունակում է 0,5-1 % եթերայուղ հարուստ տարբեր տեսակի ցնդող եթերային միացություններով: Օգտագործվում է որպես համեմունք, ունի բուժական նշանակություն:

Մարբենի (*Rosa L.*)

Վարդազգիների ընտանիքին պատկանող մինչև 2 մ բարձրությամբ փշոտ թուփ է: Տերևները հերթադիրեն, բարդ, փետրաձև, ծաղիկները խոշոր են դուրեկան հոտով, սպիտակ, վարդա•ույն, դեղին կամ կարմիր: Պտուղը իլիկաձև, տանձաձև կամ ձվաձև, հասուն վիճակում կարմիր կամ նարնջակարմիր, այն կեղծ բազմաընկուզիկ է:

Օգտագործվում են պտուղը և ծաղկաթերթերը կերային և դեղագործական նպատակներով: Պտուղները հարուստ են վիտամիններով, օրգանական և հանքային սննդատարերով, պարունակում են ճարպայուղ, օլեինաթթու, լինոլաթթու և կարծր թթուներ:

Խատուտիկ դեղատու (*Taraxacum officinalis Wilg*)

Բարդածաղկավորների ընտանիքի պատկանող մինչև 15 սմ բարձրությամբ բազմամյա կոճղարմատավոր խոտաբույս է: Տերևները կանաչ նշտարաձև, ատամնավոր եզրերով: Ծաղկաբույլը զամբյուղ վառ դեղին երանգի ծաղիկներով: Սերմերը թխավուն են կամ գորշ, բնորոշ սպիտակ փուփուկով: Բույսը ունի դեղագործական նշանակություն, պարունակում է մինչև 40 % ինուլին և այլ քիմիական ակտիվ միացություններ որոնք օգտագործվում են դեղագործական նպատակներով:

Եզան լեզու մեծ (*Plantago maior L.*)

Ջղախոտազգիների ընտանիքին պատկանող, ժողովրդական բժշկության մեջ օգտագործվող հնագույն դեղաբույս է: Բազմամյա է, տերևները խոշոր ջղավոր լինում են ձվաձև 3-7 ջղերով, մերկ կամ թեթևակի մազոտ: Ծաղկացողունը 15-30 սմ բարձրությամբ, նուրբ ակոսավոր: Հասկը գլանաձև է: Բաժակի մասերը օվալաձև են, բութ, լայնաթաղանթ: Սերմերը մանր նիստավոր: Բուժական տեսանկյունից արժեքավոր են և տերևները և սերմերը:

Ազգային պարկի և դրա պահպանման գոտում հադիպող սնկերի գերակշռող մասը ուտելի են, որոնցից են սովորական ականջասունկը, կաղնեսեր կոլիբիան, ձմեռային կոճղասունկը, վարդագույն լակարիան, մարգագետնային կոճղասունկը, մանր սխտորասունկը, իսկական կոճղասունկը, սովորական շամպինյոնը, դաշտային հովանոցասունկը, վաղանցիկ գոմաղբասունկը, խոտհարկային պանաելիոլիան, կարծր ագրոցիբեն ցողունավոր, ագրոցիբեն, ամառային կոճղասունկը և շեկիկը: Միակ սնկի տեսակը, որը չի կարելի օգտագործել դա շողացող գոմաղբասունկն է:

Ընդհանուր առմամբ տարածաշրջանի բնական բուսական համակեցություններում զարգանում են տարբեր բուսական ընտանիքների շատ ներկայացուցիչներ, որոնք ունեն տարբեր դեղագործական նշանակություն և արժեք, որոնց օգտագործումը դեղագործական նպատակներով կենսական կարևոր նշանակություն ունի:

Այդ իսկ պատճառով համայնքում այլընտրանքային բնօգտագործման ձևերի մեջ առավել նպատակահարմար է ուտելի վայրի բույսերի և դեղաբույսերի հավաքի ներդրումը: Բնօգտագործման նման այլընտրանքային ձևերի կիրառումը նպաստելու է ոչ միայն համայնքներիի սոցիալ-տնտեսական զարգացման համար, այլ առավել կարևորվում է բնօգտագործման տեսակետից, որը բերելու է միջավայրի կենսաբազմազանության ապահովմանը, բնական վերականգնմանը:

1.8.5. Կենդանական աշխարհը

Հայաստանում բնակվող մոտ 17000 անողնաշար կենդանիների տեսակներից 155-ը և 536 ողնաշարավոր կենդանիների տեսակներից 153-ը գրանցված են Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում: Կենդանիների տեսակներից մոտ 2%-ը էնդեմիկ են: Կովկասի կենսաաշխարհագրական կառուցվածքի համաձայն, Ջավախքը պատկանում է արևելյան Միջերկրածովյան շրջանի Սևանա-Փոքրասիական ենթաշրջանին: Տարածքում հանդիպող տեսակները բնորոշ են նաև արևելյան Թուրքիային և հարավ արևմտյան Վրաստանին:

Անողնաշար կենդանիներ

Տարածաշրջանի, ինչպես նաև ամբողջ Հայաստանի անողնաշար կենդանիների ֆաունան ուսումնասիրված է խիստ անհավասարաչափ, ուստի հնարավոր չէ կատարել անողնաշար կենդանիների ֆաունայի վերլուծությունը ամբողջությամբ: Ընդհանուր առմամբ տարածաշրջանից հայտնի են անողնաշար կենդանիների 65 կարգի ներկայացուցիչներ, առավել բազմաքանակ են միջատները (26 կարգ Հայաստանում հայտնի 30-ից), փափկամարմինները, սարդակերպերը և բազմոտանիները (6-ական կարգ) և խեցգետնանմանները (5):

Հիմնվելով գրականության տվյալների վրա կարելի է գնահատել տարածաշրջանի անողնաշար կենդանիների տեսակային կազմը որպես մոտ 2500-3000 տեսակ Հայաստանի ֆաունայի 17000 տեսակներից:

Ազգային պարկի տարածքի որոշակի կետերում կատարված մեկ տարվա հետազոտությունների արդյունքները, որը հնարավորություն է տալիս իրականացնել գոտիավորման աշխատանքները, հայտնաբերվել են բզեզների՝ 329, ուղղաթևերի՝ 18, թիթեռների՝ 27 և ճպուռների՝ 13 տեսակներ: Տարածքին բարձր բնապահպանական նշանակություն է տալիս բազմաթիվ Հայաստանի, Հարավային Կովկասի և Կովկասի (էկոտարածաշրջանի) բազմաթիվ էնդեմիկ տեսակների առկայությունը: Բզեզներից՝ համապատասխանաբար 11, 30 և 17 տեսակներ, ուղղաթևերից՝ Հայաստանի 3 և Կովկասի՝ 2 էնդեմիկ, թիթեռներից՝ Կովկասի 6 էնդեմիկ տեսակներ: Բացի այդ, տարածքում հայտնաբերվել են թիթեռների երկու տեսակ, որոնք գրանցված են Բեռնի Կոնվենցիայի Հավելված 2-ում:

Արփի լճում և հարակից տարածքներում բնակվում են ջրային կամ ջրասեր տեսակները: Այստեղ գրանցված են 10 տեսակի ճպուռներ, 8 տեսակի ուղղաթևներ, 139 տեսակի բզեզներ, 14 տեսակի թիթեռներ, այդ թվում՝ Հայաստանի 1 էնդեմիկ բզեզի (*Elaphrus hypocrita araxellum* - արաքսյան գնայուկ) և հարավային Կովկասի 3 էնդեմիկ բզեզների ենթատեսակները (*Silpha carinata armeniaca* – հայական լեշակեր, *Pachnephorus tessellatus*

armenus - հայկական տերևակեր, *Bembidion nitidulum fraxator* - փայլուն առվակային գնայուկ), Կովկասի էկոտարածաշրջանի 2 էնդեմիկ բզեզները (*Carabus cribratus* – մահաթև ցայտագնայուկ, *Omophlus caucasicus* - կովկասյան ծաղկեփոշեկեր) և Կովկասի էկոտարածաշրջանի 3 էնդեմիկ թիթեռները (*Pieris pseudorapae suffossa* – կեղծ կաղամբի ճերմակաթիթեռ, *Meleageria daphnis versicolor* – խայտաբղետ մելեագերիա): Այստեղ հայտնաբերվել է նաև Բնության Պահպանության Միջազգային Միության կարմիր ցուցակում, Բերնի կոնվենցիայում և ՀՀ Կարմիր գրքում գրանցված Արիոն կապտաթիթեռը (*Maculinea arion*):

Արփի լճից դեպի հյուսիս ընկած Վրաստանին սահմանամերձ 2100 մետրից բարձր լեռնաշղթաները նույնպես հարուստ են անողնաշար կենդանիների տեսակներով (8 տեսակի ուղղաթևեր, 16 տեսակի թիթեռներ և 173 տեսակի բզեզներ, այդ թվում Հայաստանի 2 էնդեմիկ տեսակները՝ *Trechus melanocephalus* - սևագլուխ առվակային գնայուկ և *Nocaracris cyanipes* - կապտատու մորեխը: «Արփի լիճ» ազգային պարկի արևելյան տեղամասի արևմտյան լանջերի վրա հայտնաբերվել են 2 տեսակի ճպուռներ, 8 տեսակի ուղղաթևներ, 18 տեսակի թիթեռներ ու ուտիճներ և 202 տեսակի բզեզներ:

Ախուրյանի կիրճում անողնաշար կենդանիների բազմազանությունը նույնպես բարձր է: Այստեղ գրանցվել են 5 տեսակի ճպուռներ, 9 տեսակի ուղղաթևներ, 13 տեսակի թիթեռներ և 177 տեսակի բզեզներ, որոնցից *Coccidula lithophiloides* – քարասեր զատիկ, *Stenobothrus sviridenkoi* - Սվիրիդենկոյի մորեխ - և *Montana armeniaca* – հայկական ծղրիդ Հայաստանի էնդեմիկներ են:

Պահպանություն

Առավել ուշադրության արժանի անողնաշար կենդանիների որոշ կարգաբանական խմբերի պահպանության համար ազգային պարկի գոտիավորման ընթացքում առանձնացվել են հետևյալ 5 տարածքները, որոնք արժանի են առավել մեծ ուշադրության.

1) Արփի լիճը և դրան անմիջապես հարող տարածքները (մինչև մոտավորապես 2080-2100 մ բարձրության): Ֆաունան հիմնականում ներկայացված է ջրային և մերձջրային համակեցությունների տեսակներով: Ընդհանուր առմամբ ֆաունան պակաս յուրահատուկ է համեմատած պարկի ուսումնասիրված այլ տարածքների հետ: Միայն ճպուռներն են ներկայացված տեսակների առավել մեծ քանակությամբ (10 տեսակ): Ուղղաթևերի տեսակները 8-ն են, թիթեռներիինը՝ 14 և բզեզներինը՝ 139: Ֆաունայի յուրահատկությունը ցածր է: Հայտնաբերված է Հայաստանի միայն 1 էնդեմիկ՝ *Elaphrus hypocrita araxellum* - արաքսյան գնայուկ բզեզ: Հայտնաբերված են նաև Հարավային Կովկասի համար էնդեմիկ բզեզների երկու ենթատեսակ (*Silpha carinata armeniaca* – հայկական լեշակեր, *Pachnophorus tessellatus armenus* – հայկական տերևակեր, *Bembidion nitidulum fraxator* - փայլուն առվակային գնայուկ), ինչպես նաև էկոտարածաշրջանի համար էնդեմիկ 2 տեսակի բզեզ (*Carabus cribratus* – մահաթև ցայտագնայուկ, *Omophlus caucasicus* - կովկասյան ծաղկեփոշեկեր) և 3 ենթատեսակի թիթեռ (*Pieris pseudorapae suffossa* – կեղծ կաղամբի ճերմակաթիթեռ, *Meleageria daphnis versicolor* – խայտաբղետ մելեագերիա): Տարածքից հայտնի է նաև Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի, Բեռնի Կոնվենցիայի 2-րդ հավելվածում և Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում գրանցված Արիոն կապտաթիթեռը (*Maculinea arion*):

2) Արփի լճից հյուսիս գտնվող լեռնաշղթայի լանջերը, մոտավորապես 2100 մ բարձրությունից մինչև Վրաստանի սահմանը: Ֆաունան ընդհանրապես ավելի զանազան և յուրահատուկ է Արփի լճի և դրան անմիջապես հարող տարածքների համեմատությամբ: Միայն ճպուռներն են փոքրաթիվ և ներկայացված են 2 տեսակներով: Ուղղաթևերի տեսակները 8-ն են, թիթեռներինը՝ 16 և բզեզներինը՝ 173: Տարածքից հայտնաբերված են Հայաստանի համար էնդեմիկ հանդիսացող միջատների 2 տեսակ՝ սևագլուխ առվակային գնայուկը (*Trechus melanocephalus*) և կապտատ մորեխը (*Nocaracris cyanipes*): Բազմաթիվ են Հարավային Կովկասի էնդեմիկները: Դրանցից են՝ բզեզների 19 տեսակներ և ենթատեսակներ (*Cicindela desertorum* – անապատային ցատկաբզեզ, *Carabus stjernvalli* – Շտերնվալլի ցայտագնայուկ, *Carabus chevrolati korbi* Կորբի ցայտագնայուկ, *Carabus puschkini* Պուշկինի ցայտագնայուկ, *Carabus calleyi pseudoprasinus* – կեղծ կանաչավուն ցայտագնայուկ, *Carabus armeniacus* – հայկական ցայտագնայուկ, *Callisthenes brevisculus* – կարճաթև գեղամարմին, *Bembidion caucasicum* – կովկասյան առվակային գնայուկ, *Pterostichus armenus* – հայկական գնայուկ, *Zabrus aurichalceus* – ոսկեաղինձափայլ գնայուկ, *Xantholinus armeniacus* – հայկական ստաֆիլին, *Anisoplia signata* – բծավոր հացաբզեզ, *Cantharis annularis* – աննուլարիս փափկամարմին, *Malachius faldermanni* – Ֆալդերմաննի մանրաբզեզ, *Sphenoptera fallatrix* – խափուսիկ ոսկեբզեզ, *Dorcadion nitidum* – փայլուն երկարաբեղիկ, *Mallosia scovitzi* – Շովիցի երկարաբեղիկ, *Otiorrhynchus elongatus* – երկարավուն փղիկ, *Otiorrhynchus weisei* – Վայզեի փղիկ) և Կովկասյան մորեխը (*Stenobothrus caucasicus*): Կովկասի էնդեմիկներն են. բզեզներից՝ 14-ը (*Carabus maurus* – սևամարմին ցայտագնայուկ, *Carabus cribratus* – մահաթև ցայտագնայուկ, *Nebria nigerrima* – սև գնայուկ, *Nebria schlegelmilchi* – Շլեգելմիլխի գնայուկ, *Agonum hexacoelum* – վեցբիծ գնայուկ, *Pristonychus mannerheimi* – Մաններհայմի գնայուկ, *Pterostichus chydaeus* – խիդեուս գնայուկ, *Zabrus trinii* – եռագիծ գնայուկ, *Aclypaea undata verrucosa* – լեշակեր բշտիկավոր, *Lomechusa strumosa caucasica* – կովկասյան լոմեխուկա, *Geotrupes olgae* – Օլգայի կոյաբզեզ, *Onthophagus sacharovskii* – Սախարովսկու կոյաբզեզ, *Omophlus caucasicus* – կովկասյան ծաղկեփոշեկեր, *Cortodera colchica* – կոլխիդական երկարաբեղիկ) և թիթեռներից՝ 4-ը (*Pieris brionia turcica* – թուրքական ճերմակաթիթեռ, *Pieris pseudorapae suffossa* – կեղծ կաղամբի ճերմակաթիթեռ, *Erebia graucasica* – էրեբիա գրաուկազիկա, *Meleageria daphnis versicolor* – խայտաբղետ մելեագերիա):

3) Զավախքի լեռնաշղթայի հայկական հատվածում Աշոցքից վերև մինչև Սարագյուղ, ճպուռները փոքրաթիվ են (2 տեսակ), ուղղաթևերից հայտնաբերված է 8, թիթեռներից՝ 16 տեսակ: Բզեզների տեսակների քանակը համեմատաբար ամենամեծն է (202 տեսակ): Տարածքի ֆաունան առավել յուրահատուկ է, ընդգրկում է տարբեր մակարդակի էնդեմիկների մեծ քանակություն, այդ թվում՝ Հայաստանի համար էնդեմիկ 8 տեսակի բզեզներ (*Trechus armenus* – հայկական առվակային գնայուկ, *Mannerheimia kirschenblatti* – Կիրշենբլատտի ստաֆիլին, *Gabrius trossuloides* – տրոսուլոիդես ստաֆիլին, *Philonthus microphilus* – մկնասեր ստաֆիլին, *Coccidula lithophiloides* – քարասեր զատիկ, *Otiorrhynchus erivanensis* – երևանյան փղիկ, ինչպես նաև դեռ չնկարագրված, գիտության համար նոր՝ սևամարմին (*Laena sp. n.*) և փղիկ (*Otiorrhynchus sp. n.*) և էնդեմիկ կապտատ մորեխ (*Nocaracris cyanipes*): Հարավային Կովկասի համար էնդեմիկ են 21 տեսակի բզեզներ (*Cicindela desertorum* – անապատային ցատկաբզեզ, *Carabus tamsi* – Տամսի

ցայտագնայուկ, *Carabus stjernvalli* - Շտերնվալլի ցայտագնայուկ, *Carabus puschkini* - Պուշկինի ցայտագնայուկ, *Carabus calleyi pseudoprasinus* - կեղծ կանաչավուն ցայտագնայուկ, *Carabus armeniacus* – հայկական ցայտագնայուկ, *Callisthenes brevisculus* – կարճաթև գեղամարմին, *Bembidion armenicum* - հայկական առվակային գնայուկ *Bembidion caucasicum* - կովկասյան առվակային գնայուկ, *Pterostichus armenus* հայկական գնայուկ, *Zabrus aurichalceus* – ոսկեպղնձափայլ գնայուկ, *Silpha carinata armeniaca* – հայական լեշակեր, *Xantholinus armeniacus*– հայկական ստաֆիլին, *Anisoplia signata* – բծավոր հացաբզեզ, *Cantharis annularis* – աննուլարիս փափկամարմին , *Sphenoptera fallatrix* – խափուսիկ ոսկերբզեզ, *Dorcadion nitidum* - փայլուն երկարաբեղիկ, *Otiorrhynchus elongatus* – երկարավուն փղիկ, *Otiorrhynchus pulvinatus* – գնադաձև փղիկ, *Ceutorrhynchus transcaucasicus* – անդրկովկասյան փղիկ, *Gymnetron caucasicum* կովկասյան փղիկ) և կովկասյան մորեխ *Stenobothrus caucasicus*, ինչպես նաև Կովկասի էնդեմիկ 17 տեսակ բզեզներ (*Carabus maurus* – սևամարմին ցայտագնայուկ, *Carabus cribratus*– մահաթև ցայտագնայուկ, *Nebria nigerrima* – սև գնայուկ, *Nebria schlegelmilchi* – Շլեգելմիլխի գնայուկ, *Bembidion testaceum parallelipenne* – զուգահերթաթև առվակային գնայուկ, *Bembidion punctulatum bracteonoides* – կետավոր առվակային գնայուկ, *Agonum hexacoelum* - վեցբիծ գնայուկ, *Pristonychus mannerheimi* – Մաններհայմի գնայուկ, *Pterostichus chydaeus* – խիդեուս գնայուկ, *Zabrus trinii* – եռագիծ գնայուկ, *Aclypaea undata verrucosa* – լեշակեր բշտիկավոր, *Lomechusa strumosa caucasica* – կովկասյան լումեխուզա, *Geotrupes olgae* – Օլգայի կոյաբզեզ, *Onthophagus sacharovskii* – Սախարովսկու կոյաբզեզ, *Omophlus caucasicus* - կովկասյան ծաղկեփռչեկեր, *Cortodera colchica* – կոլխիդական երկարաբեղիկ) և 5 տեսակի թիթեռներ (*Pieris brionia turcica* - թուրքական ճերմակաթիթեռ, *Pieris pseudorapae suffossa* – կեղծ կաղամբի ճերմակաթիթեռ, *Colias thisoa transiana* – Տիզոա դեղնաթիթեռ, *Erebia graucasica* - էրեբիա գրաուկազիկա, *Coenonimpha glycerion alta* – լեռնային ցենոնիմֆա): Տարածքից հայտնի են Բեռնի Կոնվենցիայի Հավելված 2-ում և ՀՀ Կարմիր գրքում գրանցված մենոզինան կամ սև ապուլոնը (*Parnassius mnemosine*) և Արիոմ կապտաթիթեռը (*Maculinea arion*):

4) Աշոցքի մոտակայքում գտնվող ճահճուտային տարածքներում և հարակից տափաստանացված տեղամասերում հայտնաբերված է ճպուռների 6 տեսակ, այդ թվում՝ Հայաստանում ծայրահեղ հազվադեպ ուղիկտային *Aeshna serrata* տեսակը: Բազմազան են ուղղաթևերը (12 տեսակ) և թիթեռները (16 տեսակ): Բզեզների տեսակների թիվը կազմում է 164: Հայաստանի համար էնդեմիկ են բզեզների 3 տեսակ (*Aleochara armeniaca*, *Coccidula lithophiloides* – քարասեր զատիկ, *Otiorrhynchus erivanensis* – երևանյան փղիկ), Հարավային Կովկասի համար էնդեմիկ են բզեզների 9 տեսակ (*Carabus gotschi maljushenkoanus* – Մալյուժենկոյի ցայտագնայուկ, *Carabus clypeatus* – կլիպեատուս ցայտագնայուկ) - այս երկու տեսակը գտնված են միայն պարկի տարածքում (*Carabus calleyi pseudoprasinus* – կեղծ կանաչավուն ցայտագնայուկ, *Callisthenes brevisculus* – կարճաթև գեղամարմին, *Anisoplia signata* – բծավոր հացաբզեզ, *Silpha carinata armeniaca* – հայական լեշակեր, *Netocia caucasica* – կովկասյան բրոնզաբզեզ, *Pachnephorus tessellatus armenus* - հայկական տերևակեր, *Ceutorrhynchus transcaucasicus* – անդրկովկասյան փղիկ): Հայտնաբերված են նաև Կովկասի համար էնդեմիկ 6 բզեզներ (*Carabus maurus* – սևամարմին ցայտագնայուկ, *Carabus cribratus*– մահաթև ցայտագնայուկ, *Pristonychus*

mannerheimi – Մաններհայմի գնայուկ, *Geotrupes olgae* – Օլգայի կոյարգեզ, *Omophlus caucasicus* - կովկասյան ծաղկեփոշեկեր, *Cortodera colchica* – կոլխիդական երկարաբեղիկ) և 2 թիթեռ (*Erebia graucasica* - էրեբիա գրաուկազիկա, *Meleageria daphnis versicolor* – խայտաբղետ մելեագերիա): Հայտնաբերված է նաև Բեռնի Կոնվենցիայի Հավելված 2-ում և ՀՀ Կարմիր գրքում գրանցված Արիոմ կապտաթիթեռը (*Maculinea arion*):

5) Ախուրյան գետի կիրճի ֆաունան բավականին հարուստ և բազմազան է: Հայտնաբերված են՝ ճպուռների՝ 5, ուղղաթևերի՝ 9, թիթեռների՝ 16 և բզեզների՝ 177 տեսակներ: Հայաստանի համար էնդեմիկ են *Coccidula lithophiloides* – քարասեր զատիկ, *Stenobothrus sviridenkoi* - Սվիրիդենկոյի մորեխ) և հայկական ծղրիղը (*Montana armeniaca*): Հարավային Կովկասի էնդեմիկներ են հանդիսանում 7 տեսակի և ենթատեսակի բզեզներ (*Cicindela desertorum* – անապատային ցատկաբզեզ, *Carabus armeniacus* – հայկական ցայտազնայուկ, *Bembidion nitidulum fraxator* - փայլուն առվակային գնայուկ, *Anisoplia signata* – բծավոր հացաբզեզ, *Netocia caucasica* – կովկասյան բրոնզաբզեզ, *Sphenoptera fallatrix* – խափուսիկ ոսկեբզեզ, *Pachnephorus tessellatus armenus* - հայկական տերևակեր); Կովկասի էնդեմիկներն են 6 տեսակի և ենթատեսակի բզեզներ (*Carabus maurus* – սևամարմին ցայտազնայուկ, *Carabus cribratus*– մահաթև ցայտազնայուկ, *Bembidion punctulatum bracteonoides*, *Zabrus trinii*, *Aclypaea undata verrucosa* – լեշակեր բշտիկավոր, *Omophlus caucasicus* - կովկասյան ծաղկեփոշեկեր), ու թիթեռները (*Meleageria daphnis versicolor* – խայտաբղետ մելեագերիա, *Erebia graucasica* - էրեբիա գրաուկազիկա): Հայտնաբերված է սև ապոլոնը (*Parnassius mnemosine* – Մնեմոզինա կամ սև ապոլոն), որն ընդգրկված է ՀՀ Կարմիր գրքում և Բեռնի Կոնվենցիայի Հավելված 2-ում:

6. Ջրային էկոհամակարգեր

Ազգային պարկի տարածքում առկա են տարբեր տիպի ջրային էկոհամակարգեր, որոնցից են Արփի լճի հինգ բնական վտակները (Ջորակերտ, Ծաղկուտ, Գառնարիճ, Շաղիկ, Ղարաբուլաղ) և Բողորան չորացնող ջրանցքը, Արփի լիճը, Ախուրյան գետը, Արփի լճի ակունքը, Ախուրյան գետի երկու ձախ վտակները՝ Թավշուտը և Աշոցքը, Ախուրյան գետի նախկին ակունքի շրջակայքի ճահիճները և խոնավ մարգագետինները, Արդենիս գյուղի վերևում գտնվող գարնանային ճահճուտները և Արդենիս լճակը:

Ջրային անողնաշար կենդանիները ավանդականորեն բաժանվում են երկու խոշոր էկոլոգիական ենթախմբերի.

1) Կենդանական պլանկտոն

Կենդանական պլանկտոնը ստեղծվում է միայն Արփի լճի և Արդենիսի լճակի համեմատաբար կանգնած ջրերում և ներկայումս բաղկացած է 1 Rotatoria, 2 տեսակի Cladocera և 3 տեսակի Cyclopoida: Նախկինում կատարած ուսումնասիրությունները ցույց են տվել ավելի շատ բազմազանություն. 27 տեսակ (Rotatoria 14, Cladocera 10 և Copepoda 3, շատերը պատահական էին) 1936-1947թվականներին, 8-10 տեսակ 1952-1957թվականներին և 4-6 տեսակ 1998-2008թվականներին: Պատվարի կառուցումից առաջ կենդանական պլանկտոնի բիոմասսան միջինը կազմում էր 8 գ մ-2, ջրի մակարդակի կարգավորումից հետո – 1.3-3.3 գ մ-2 և 1998-2008 թ. – 0.3-1.0 գ մ-2 :

2) Կենդանական բենթոս

Կենդանական բենթոս բազմազանության բարձր տոկոս է հայտնաբերվել Արփի լճի վերին հատվածի վտակներում (ավելի քան 50 տեսակ), իսկ ցածր տոկոս է հայտնաբերվել Ախուրյան գետի նախկին ակունքի ճահճուտներում: Գրանցված տեսակների ընդհանուր թիվը 61 է (Oligochaeta 3, Hirudinea 3, Molluska 6, Crustacea 4, Hemiptera 1, Odonata 3, Ephemeroptera 7, Trichoptera 11, Diptera 20, Coleoptera 3): Ակնհայտ է, որ ցուցակը դեռ ամբողջական չէ: Հատուկ ուշադրության պետք է արժանանա Արփի լճի վտակներում Ephemeroptera –ի ֆաունան, որտեղ հայտնաբերվում է այնպիսի հազվադեպ տեսակներ, ինչպիսիք են Epeorus zaitzevi, Epeorus (Caucasiron) spp. և Ecdyonurus s.str:

Պահպանություն

Ջրային անողնաշար կենդանիները ընդհանուր առմամբ այնքան շատ չեն տուժել, որքան այլ էկոլոգիական խմբերը: Չնայած դրան, ջրային անողնաշար կենդանիների բազմազանությունը ընդհանուր առմամբ կարող է վտանգվել հաշվի առնելով ջրի քիմիական աղտոտվածությունը կոյուղուց և գյուղատնտեսությունից, տարածքի ֆիզիկական քայքայումը ջրամբարներից կամ դրենաժային համակարգից: Դրա համար էլ անողնաշար կենդանիների դեպքում պահպանության միջոցառումները պետք է ուղղված լինեն ընդհանրապես խոնավ էկոհամակարգերի պահպանությանը, ի տարբերություն առանձին տեսակի պահպանությանը նպատակաուղղված միջոցառումների:

Ողնաշարավոր կենդանիներ

Ձկներ

Արփի և Արդենիս լճերի ջրային ֆաունան անձեռնմխելի վիճակում է մնացել մինչև 1946 թվականը՝ մինչև Արփի լիճը պատվարվելը և ջրամբարի վերածվելը: Նախկինում տեղական տնտեսական արժեք ունեցող ձկնատեսակներից էին կարմրախայտը (*Salmo trutta fario*), կովկասյան թեփուղը (*Leuciscus cephalus orientalis*) և քուրի բեղուն (*Barbus lacerta cyri*):

1960-ական թվականներին Արփի լճում կլիմայավարժեցվել են ծածանը (*Cyprinus carpio*): Հետագայում հարավային Ռուսաստանից բերված ծածանը տարածվել է Արփի և Արդենիս լճերում, ինչպես նաև այլ ջրամբարներում: Արդյունքում, բնիկ ձկների ֆաունան և բենթոսի ֆլորան ու ֆաունան լուրջ փոփոխության են ենթարկվել:

Արփի Լիճ

Տարբեր ժամանակաշրջաններում Արփի լճում գրանցվել է 9 տեսակի ձկներ. կարմրախայտը (*Salmo trutta fario*), կովկասյան թեփուղը (*Leuciscus cephalus orientalis*), կարմրաշուրթ հաշամը (*Aspius aspius taeniatus*), ենթաբերանը (*Chondrostoma oxyrhynchus*), կողակը (*Capoeta capoeta ssp.*), արևելյան տառեխիկը (*Alburnoides bipunctatus eichwaldi*), ծածանը (*Cyprinus carpio*), արծաթափայլ կարասը (*Carassius auratus gibelio*) և ամուրյան նրբաձկնիկը (*Pseudorasbora parva*) և անգորական լերկաձուկը (*Barbatula angorae*):

Վերոգրյալ ձկնատեսակներից Արփի լճում և նրա մեջ թափվող գետակներում առավել հազվադեպ հանդիպում էր կարմրախայտը (*Salmo trutta fario*), որը լիճը ջրամբարի վերածվելուց հետո դադարել է այստեղ հանդիպել:

Կովկասյան թեփուղը (*Leuciscus cephalus orientalis*) Զավախքի սարահարթի ամենաբազմաքանակ ձկների տեսակներից մեկն է, որը կարող է բնակվել ինչպես գետերում, այնպես էլ լճերում, այստեղ առաջացնելով գետային և լճային էկոլոգիական ձևեր: Այդ երկու ձևերն էլ հանդիպում են Արփի լճում և նրա ավազանի գետերում: Կարող են հասնել մինչև 35 սմ երկարության և շուրջ 1 կգ քաշի: Սնվում են միջատներով և նրանց թրթուրներով, մանր ձկներով, գորտերի շերտիկներով: 15 սմ-ից մեծ թեփուղները հիմնականում վարում են գիշատիչ կենսաձև և սնվում են ենթաբերանի, արևելյան տառեխիկի և կողակի մանրաձկներով: Խոշոր առանձնյակները կարող են սնվել մանր կաթնասուններով: Մասնավորապես 650 գ քաշ ունեցող էգ թեփուղի մարսողական համակարգում հայտնաբերվել է երիտասարդ ջրային մուկ: 1998թ. կովկասյան թեփուղը կազմել է Արփի լճում որսված ձկների ընդհանուր քանակի 15-20% -ը:

Կարմարաշուրթ հաշամը (*Aspius aspius taeniatus*) միշտ հազվադեպ հանդիպող տեսակ է եղել լճում: Հավանաբար այն երբեք չի կարողացել բնակվել լճում: Ախուրյան գետի և ջրամբարի միջև կապի դադարումից հետո հաշամը չի հայտնաբերվել լճում:

Կողակը (*Capoeta capoeta*) հիմնականում սնվում է դետրիտով, և այդ առումով Արփի լճում միակն ձկնատեսակն է, որի քանակության համար կերի առկայությունը լիմիտավորող նշանակություն չունի: Միաժամանակ, այս տեսակի տեղական պոպուլյացիան կախված է ձկնկիթի զարգացման պայմաններից, քանի որ նրա ձվադրման ժամկետները առնվազն երկու գետակներում (Դարիկ, Շաղիկ) սովորաբար համընկնում է ջրի մինիմալ քանակի հետ (հուլիս-օգոստոս), ինչը ձկնկիթի և թրթուրների զարգացման համար ոչ նպաստավոր պայմաններ է առաջացնում: Մյուս կողմից, կողակի մանրաձկները սնունդ են հանդիսանում կովկասյան թեփուղի համար, ինչը որոշակի ազդեցություն կարող է գործել կողակի գլխաքանակի վրա: 1998 թ. կողակը կազմել է Արփի լճում որսված ձկների ընդհանուր քանակի մոտ 5-10%-ը:

Արևելյան տառեխիկը (*Alburnoides bipunctatus eichwaldi*) մինչև ջրի մակարդակի բարձրացումը սովորական էր ամբողջ լճի համար: Ներկայումս այն ապրում է միայն գետաբերաններում և գետերում: Արևելյան տառեխիկի գլխաքանակը կախված է պլանկտոնի առկայությունից և կովկասյան թեփուղի առկայությունից, որի խոշոր առանձնյակները սնվում են տառեխիկով:

Ծածանը (*Cyprinus carpio*), եղել և մնում է Արփի լճի ամենակարևոր ձկնատեսակը: Մինչ ջրամբարի վերածումը Արփի լճում ծածանի սնունդը եղել են բարձրակարգ ջրային բույսերը, կենդանական պլանկտոնը և Chironomidae ընտանիքին պատկանող երկթևանիների թրթուրները: Դետրիտը կազմում էր սննդի միայն 6%-ը: 1998թ. ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ներկայումս դետրիտը կազմում է սննդագնդիկի պարունակության գրեթե կեսը, ինչը վկայում է ծածանի կերային բազայի աղքատացման մասին, ինչը ազդում է այս ձկնատեսակի աճի վրա: Ծածանի արուները սովորաբար սեռահասուն են դառնում 4 տարեկանում, էգերը՝ 6: Բազմացումը տեղի է ունենում է հունիս ամսին: Ձկնկիթը դրվում է ծանծաղ, լավ տաք վայրերում, որոնք տեղակայված են ջրամբարի արևմտյան հատվածում: Հավանաբար, ծածանը ամեն տարի չէ, որ բազմանում է Արփի լճում: Այսպես, 1998թ. սեռահասուն էգերի կեսից պակասն էր պատրաստ ձվադրման: Ծածանի առավելագույն քանակը գրանցվել է ջրամբարի կառուցումից անմիջապես հետո 1953թ.: 120 տոննա: 1998թ. ծածանը կազմել է Արփի լճում որսված

ձկների ընդհանուր քանակի մոտ 70-80%-ը: Ներկայումս ջրամբարում ծածանի քանակը նվազել է կերի, ինչպես նաև օրինական և անօրինական ձկնորսության աճի պատճառով: Արծաթափայլ կարասը (*Carassius auratus gibelio*) Արփի Լճի ջրամբարում առաջին անգամ գրանցվել է 2000թ.: Վերջին տվյալները ցույց են տալիս արծաթափայլ կարասի աճող ազդեցությունը լճի էկոհամարգի վրա: Ըստ ձկնորսների արծաթափայլ կարասը կարող է կազմել լճի ձկների ընդհանուր որսի մոտ կեսը: Ակնհայտ է, որ արծաթափայլ կարասը բարեհաջող է կլիմայավարժվել լճում :

Անգորական լերկաձուկը (*Barbatula angorae*) նախկինում հանդիպում էր միայն Ախուրյան գետում: Ներկայումս այս տեսակը հանդիպում է այնտեղ, որտեղ ջրի հոսքը համեմատաբար դանդաղ է: Հասնում է մինչև 9 սմ երկարության և կարող է ձվադրել մինչև 9000 ձկնկիթ: Անգորական լերկաձուկը սնվում է բենթոսային օրգանիզմներով: Արփի լճի շրջակայքում բնակվող տեղացիների կերակրացանկում ձուկը կարևոր նշանակություն ունի: Արփի լիճը, որպես մերձալպիական լիճ, ունի բավական բարձր ձկնատվություն համեմատած այլ նման բնական ծագում ունեցող լճերի հետ՝ 107 կգ/հա կամ 45-48 տոննա ամբողջ լճի մակերեսից: Առավելագույն ձկնորսությունը գրանցվել է ջրամբարի կառուցումից հետո՝ 1953 թ. մոտ 150 տոննա: 1998թ. ձկան որսը կազմել է 30 տոննա: Հիմնական ձկնատեսակներ են հանդիսացել ծածանը (*Cyprinus carpio*), թեփուղը (*Leuciscus cephalus orientalis*) և կողակը (*Capoeta capoeta*), որոնք կազմել են ընդհանուր ձկնորսության համարյա 100%-ը: Վերջին տարիներին նկատվում է ձկնորսության նվազում, իսկ արծաթափայլ կարասը ներկայումս կազմում է ընդհանուր ձկնորսության համարյա կեսը:

Արփի լիճ հոսող գետեր

Առնվազն 7 տեսակի ձկներ են գրանցվել գետերում տարբեր ժամանակահատվածում. կարմրախայտը (*Salmo trutta fario*), կովկասյան թեփուղը (*Leuciscus cephalus orientalis*), կարմրաշուրթ հաշամը (*Aspius aspius taeniatus*), ենթաբերանը (*Chondrostoma oxyrhynchus*), կողակը (*Capoeta capoeta ssp.*), արևելյան տառեխիկը (*Alburnoides bipunctatus eichwaldi*) և անգորական լերկաձուկը (*Barbatula angorae*):

Սակայն վերջին տասնամյակում /1998-2008/ միայն 3 տեսակի ձուկ է հայտնաբերվել:

Կարմրախայտի միակ նմուշը գրանցվել է Դարիկ գետի վերին հոսանքներում: Ակնհայտ է, որ այս տեսակի քանակը զգալի նվազել է և այն գտնվում է ոչնչացման եզրին: Սա պայմանավորված է նաև այն փաստով, որ տարբեր գետակներ դժվար են հաղորդակցվում միմյանց հետ՝ ջրամբարի անբարենպաստ պայմանների պատճառով:

Ներկայումս կովկասյան թեփուղը (*Leuciscus cephalus orientalis*) վտակներում որոշ առումով խաղում է կարմրախայտի դերը: Գետակներում բնակվող ձկները հստակ տարբերվում են լճակներում բնակվողներից՝ չափով և որոշ ձևաբանական առանձնահատկություններով: Գետակների ձկների գրանցված առավելագույն քաշը 200 գրամ է, լճերում՝ 700 գրամ և ավելի է: Ձվադրման վայրերը գտնվում են վտակների հոսքերով դեպի վերև 2-3 կմ վրա, որտեղ կովկասյան թեփուղը ձվադրում է հունիս-հուլիս ամիսներին՝ 4000-5000 ձկնկիթ:

Ենթաբերանը (*Chondrostoma oxyrhynchus*) ներկայումս սովորական է բոլոր վտակների ցածր և միջին հոսանքներում և սնվում է բուսական ծագում ունենցող կերերով:

Ախուրյան գետը

Ձկնատեսակների ֆաունայի ամենամեծ բազմազանությունը նկատվում է Ախուրյան գետում /ք. Աշոցքի շրջակայք/, որտեղ գրանցվել է 11 ձկնատեսակ. կովկասյան թեփուղը (*Leuciscus cephalus orientalis*), կարմրաշուրթ հաշամը (*Aspius aspius taeniatus*), ենթաբերանը (*Chondrostoma oxyrhynchus*), կողակը (*Capoeta capoeta ssp.*), Քուռի բեղլուն (*Barbus lacerta cyri*), արևելյան տառեխիկը (*Alburnoides bipunctatus eichwaldi*), ծածանը (*Cyprinus carpio*), արծաթափայլ կարասը (*Carassius auratus gibelio*), ամուրյան նրբաձկնիկը (*Pseudorasbora parva*), Քուռի սպիտակաձուկը (*Alburnus filippii*), և անգորական լերկաձուկը (*Barbatula angorae*):

Հավանական է նաև մանրաթեփուկի (*Acanthalburnus micrilepis*) և ոսկեգույն ծականի (*Sabanejewia aurata*) առկայությունը, որոնք սակայն մինչ այժմ հավաստիորեն այստեղ չեն հայտնաբերվել:

Արդենիս լճակը

Նախկինում Արդենիս լճակում ոչ մի ձկնատեսակ չի եղել: Այստեղ ձկնատեսակներ ներմուծելու համար տեղացի բնակիչների ջանքերի շնորհիվ միայն արծաթափայլ կարասի (*Carassius auratus gibelio*) կլիմայավարժեցումը հաջողվեց 1995 թվականին: Այս ձկնատեսակի աճման արագությունն այստեղ համեմատաբար ցածր է. Կյանքի չորրորդ տարում գտնվող առանձնյակի մարմնի երկարությունը հասնում է մինչև 18 սմ:

Վտանգները

Արփի լճում բնիկ ձկնատեսակների ֆաունան լրջորեն վտանգված է արծաթափայլ կարասի (*Carassius auratus gibelio*) ներմուծման, չկանոնակարգված ձկնորսության և ջրի մակարդակի տատանումների հետևանքով: Լուրջ վտանգ են ներկայացնում գետերում չթույլատրված միջոցների օգտագործմամբ /պայթուցիկ և թունավոր նյութեր, էլեկտրականություն/ իրականացվող ձկնորսությունը:

Պահպանություն

Պահպանությանն են ենթակա Արփի լիճը, Արդենիս լճակը և Արփի լիճ թափվող գետակները, Ախուրյան գետը:

Երկկենցաղներ

Աշոցքի սարահարթում գրանցվել են երկկենցաղների 3 տեսակ՝ կանաչ դոդոշը (*Bufo viridis*), լճագորտը (*Rana ridibunda*) և փոքրասիական գորտը (*Rana macrocnemis*):

Գրեթե բոլոր ջրային ավազաններում հանդիպում են 3 տեսակի երկկենցաղներ: Կանաչ դոդոշը (*Bufo viridis*) ամենատարածված երկկենցաղն է, որն ապրում է գրեթե բոլոր գոտիներում և տարբեր բնական պայմաններում մինչև ծ.մ. 2700 մ. բարձրության վրա:

Գորտերի երկու տեսակները՝ լճագորտը (*Rana ridibunda*) և փոքրասիական գորտը (*Rana macrocnemis*), գրանցվել են Արփի լճի ջրամբարում և դրա շուրջը, Ախուրյան գետում, նրա վտակներում և ճահճուտներում: Լճագորտը (*Rana ridibunda*) ապրում է հիմնականում

ջրամբարներում, մինչդեռ փոքրասիական գորտը (*Rana macrocnemis*) նախընտրում է բարձրադիր գոտիներում գտնվող գետակները, աղբյուրները և շրջակա խոնավ մարգագետինները: Այս տեսակը Ղազանչի համայնքի վարչական սահմաններում գրանցվել է ծ.մ. 26500 մ. բարձրության վրա, իսկ Սարագյուղ համայնքի վարչական սահմաներով հոսող գետակում թվաքանակը բավականին մեծ է: Գետակի մոտ մեկ մետր լայնության և 15 մ երկարության հասնող հատվածի վրա մայիսի վերջին հաշվարկվում է մինչև 20-25 առանձնյակ:

Չնայած այս երկու տեսակները սովորական են տարածաշրջանում, սակայն հանդիպում են ավելի փոքր քանակով, քան Հանրապետության այլ վայրերում՝ խիստ կլիմայական պայմանների պատճառով:

Սողուններ

Սողունների դասի 6 տեսակի մողեսներ և 4 տեսակի օձեր են հայտնի այս տարածքում: Մողեսների տեսակներից են ջարդվող իլիկամողեսը (*Anguis fragilis*), Ճարպիկ մողեսը (*Lacerta agilis*), ժայռային մողեսներից Վալենտինի մողեսը (*Darevskia valentini*), նաիրյան մողեսը (*D. nairensis*), հայկական մողեսը (*D. armeniaca*) և սպիտակափոր մողեսը (*D. unisexualis*): Օձերի տեսակներից են սովորական լորտուն (*Natrix natrix*), ջրային լորտուն (*N. tessellata*), սովորական պղնձօձը (*Coronella austriaca*) և Դարևսկու իժը (*Vipera darevskii*)

Մողեսների բոլոր 4 տեսակները հարավային Վրաստանի, Հայաստանի և արևելյան Թուրքիայի էնդեմիկներն են, որոնցից երկու տեսակների՝ Վալենտինի մողեսի (*D. valentini*) և հայկական մողեսի (*D. armeniaca*) տարածվածության շրջանները հիմնականում կենտրոնացված են Աշոցքի սարահարթի վրա: Մյուս երկու տեսակի մողեսները՝ նաիրյան մողեսը (*D. nairensis*) և սպիտակափոր մողեսը (*D. unisexualis*) գրանցվել են միայն Աշոցքի սարահարթի հարավային մասում: Սպիտակափոր մողեսը (*D. unisexualis*) գրանցված է Հայաստանի կենդանիների Կարմիր գրքում և Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես “Խոցելի”՝ VU B1a տեսակ:

Ճարպիկ մողեսը (*Lacerta agilis*) նախընտրում է լեռնային տափաստանները, տափաստանային-մարգագետնային գոտին, մինչդեռ Վալենտինի մողեսը (*Darevskia valentini*), հայկական մողեսը (*Darevskia armeniaca*) և ջարդվող իլիկամողեսը (*Anguis fragilis*) հիմնականում հանդիպում են մինչև 2400-2600 մ բարձրությունների վրա գտնվող քարքարոտ լանջերի քարակույտերում և քարափներում:

Սովորական պղնձօձը (*Coronella austriaca*) գրանցվել է Ջավախքի լեռնաշղթայի արևմտյան լանջերի վրա 2700 մ-ից ներքև ընկած բարձրությունների վրա՝ հիմնականում ժայռային մողեսների բիոտոպներում, որոնք հանդիսանում են պղնձօձի սնման հիմնական օբյեկտը:

Ջրային լորտուն (*Natrix tessellata*) և սովորական լորտուն (*N. natrix*) հիմնականում հանդիպում են ջրային էկոհամակարգերում որոնք սնվում են հիմնականում երկկենցաղներով և ձկներով: Սակայն սովորական լորտուն երբեմն հանդիպում է ջրային էկոհամակարգերից բավական հեռավորության վրա գտնվող բարձրադիր լեռնատափաստանային գոտում:

Հատուկ հետաքրքրություն է ներկայացնում Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակում գրանցված, որպես “Կրիտիկական վիճակում գտնվող”՝ CR B1ab(ii,iii)+B2ab (ii,iii) Դարևակու իժի (*Vipera darevskii*), որը գրանցվել է նաև Հայաստանի կենդանիների Կարմիր գրքում և Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես “Կրիտիկական վիճակում գտնվող”՝ CR B2ab (ii,iii) տեսակ:

Տեսակի արեալը ներառում է Ջավախքի լեռնաշղթայի հարավ-արևմտյան մասը Հայաստանի սահմաններում մինչև Վրաստանի հետ սահմանը (լ.Աչքասար), ծ.մ. 2350-3000 մ բարձրության վրա՝ Ղազանչի գյուղից մինչև Սարագյուղ ձգվող հատվածում: Աշոցքի տարածաշրջանում արեալը զբաղեցնում է ընդամենը 200-250 հեկտար:

Հիմնական բիոտոպներն են հանդիսանում ենթալպիական մարգագետինների վրա տեղակայված քարքարոտ լեռնալանջերը և ժայռային ցցվածքները ծածկված առանձին-առանձին տափակ քարերի կույտերով մեկը մյուսից կտրված լեզվակների տեսքով արոտավայրերի միջև:

Իժերը հիմնականում հանդիպում են այն տեղամասերում, որտեղ առկա են մեծ տափակ սալաքարեր, որոնք դասավորված են մեկը մյուսի վրա: Սալաքարերով պատված տեղամասերը զբաղեցնում են ոչ մեծ /2-40 հա/ տարածություններ: Այս տեսակը ամբողջ տարին անց է կացնում նմանատիպ սալաքարերով ծածկված տեղամասերում: Այսինքն իժերը նույն բիոտոպները օգտագործում են և որպես ժամանակավոր թաքստոցներ, և որպես մշտական ձմեռանոցներ:

Պահպանություն

1. Անհրաժեշտ է իրականացնել Դարևակու իժի (*Vipera darevskii*), բիոտոպների պահպանությանը նպատակաուղղված հետևյալ /կոնսերվացիոն/ բնապահպանական միջոցառումները.

- 1) Ղազանչի, Մեծ Սեպասար, Սիզավետ, Սարագյուղ համայնքների վարչական սահմաններում գտնվող Դարևակու իժի բիոտոպների սահմանազատում սահմանասյուններով և ընդգրկում ‘Արփի լիճ’ ազգային պարկի արգելոցային գոտու մեջ,
- 2) Մետաղական լարով քարակույտերի ցանկապատում, անասունների համար հատուկ անցուղիների պատրաստում և մուտքը արգելող ցուցանակների տեղադրում՝ անասունների մուտքը այդ տեղամասեր կանխարգելելու, շրջանցելու և բնորոշ ապրելավայրերի լանդշաֆտային ամբողջականությունը պահպանելու նպատակով:
- 3) Ձորակների ներքևի հատվածներում անասունների համար արհեստական ջրարբիացման կետերի /ջրամբարներ, ջրաղբյուրներ/ կառուցում՝ արածող անասունների տեղաշարժերը դեպի գետակների ակունքները ջուր խմելու համար դադարեցնելու և բիոտոպների վրա ճնշումը նվազեցնելու նպատակով:

Համայնքի ավագանու հետ համատեղ այլընտրանքային բնօգտագործման արդյունավետ և կայուն մեթոդների /մեխանիզմների/ մշակում և ներդրում /հերթափոխային արածեցում, ցանքաշրջանառություն, դեղաբույսերի և ուտելի բույսերի հավաք և այլն:

- 4) Պարկի անձնակազմի համար ուսուցողական դասընթացների /մասնագիտական որակավորման բարձրացում/ անցկացում տեսակի անօրինական որսի և արտահանման հսկողության ուժեղացման նպատակով:
 - 5) Տեղական բնակչության շրջանում բնապահպանական իրազեկության բարձրացում և էկոդաստիարակություն՝ ուսուցողական սեմինարների, հանդիպումների անցկացում:
 - 6) Կենսաբազմազանության պահպանության վերաբերյալ բուկլետների, բրոշյուրների և ուղեցույցների հրատարակում:
1. Դարևակու իժի բիոտոպների սահմանազատման և ցանկապատման աշխատանքները, կնպաստեն տեսակի պահպանության աշխատանքների արդյունավետ կազմակերպմանը և հիմք կհանդիսանան ‘Արփի լիճ’ ազգային պարկի տարածքի գոտիավորման աշխատանքների և արգելոցային գոտիների առանձնացման համար:
 2. Բնապահպանական հարցերի լուսաբանումը տարածաշրջանի բնակչության մեջ ամուր նախադրյալներ կապահովի հետագայում ‘Արփի լիճ’ ազգային պարկի կենսաբազմազանության պահպանության աշխատանքների արդյունավետ կազմակերպման և իրականացման համար:

Թռչուններ

Արփի Լիճ ԱՊ-ի տարածքում փաստացի գրանցվել է թռչունների 193 տեսակ, որոնցից 32 տեսակ՝ Հայաստանի Հանրապետության կարմիր գրքում և 11 տեսակ՝ ԲՊՄՄ կարմիր ցանկում:

Արփի լճի տարածքը միջազգայնորեն ճանաչվել է որպես աշխարհում թռչունների ապրելավայրի կարևոր տարածքներից մեկը: Այլ տեսակները չվող են, ամառվա այցելուներ են կամ էլ ունեն անորոշ կարգավիճակ: Թռչնատեսակների մեծ մասը կապված է սարահարթի լճերի և խոնավ տարածքների հետ: Քարադրամանների (*Charadriiformes*) կարգի 30 ներկայացուցիչները (այդ թվում՝ 10 բնադրվող) և սագանմանների (*Anseriformes*) կարգի 24 տեսակները (այդ թվում՝ 10 բնադրվող) տարածքում սովորական են համարվում: Յոթ տեսակները միջազգային մակարդակով գտնվում են վտանգված վիճակում:

Ջավախքի տարածաշրջանը Կովկասի եզակի մասերից է, որտեղ բազմանում են մոխրագույն կռունկը (*Grus grus*), սև արագիլը (*Ciconia nigra*), վարդագույն (*Pelicanus onocrotalus*) և գանգրափետուր (*P. crispus*) հավալուսնները և տուրպանը (*Melanita fusca*): Սպիտակ արագիլը (*Ciconia ciconia*) սովորական տեսակ է Աշոցքի սարահարթի հյուսիսային մասում:

Մոխրագույն սագի (*Anser anser*) և գանգրափետուր հավալուսնի (*Pelicanus crispus*) բնադրող պոպուլյացիաները բնակվում են Արփի լճում: Հայկական որորի (*Larus armenicus*) բնադրող մեծ գաղութը բնակվում է լճի երկու փոքր կղզյակների վրա:

Լեռնային տափաստանները իշխող լանդշաֆտային գոտիներն են “Արփի Լիճ” ազգային պարկում և ներկայացված են մարգագետնային տափաստաններով, որոնք զբաղեցնում են հարթավայրում և Ախուրյան գետի ջրհավաք ավազանում տարբեր բնույթի լեռնային ժայռերի նշանակալի տարածքներ: Սրանք տեղակայված են պարկի մեծ մասի բարձրադիր վայրերում ներառելով Արփի Լճի բնական վայրի շրջապատը, Եղնախաղի և Ջավախքի

նախալեռները և միջին դիրքադրության ժայռերը: “Արփի Լիճ” ազգային պարկի լեռնային տափաստանների յուրահատուկ տեսակներից են դաշտային արտույտը (*Alauda arvensis*), մոխրագույն կաքավը (*Perdix perdix*), կանեփնուկը (*Carduelis cannabina*), սովորական քարաթռչնակը (*Oenanthe oenanthe*) և այլն: Կրծողների առատությունը լեռնային տափաստաններում գրավում են մի շարք գիշատիչների - բնական միջավայր այցելում են կեր հայթայթելու համար բնիկ բնադրող տեսակները, ինչպիսիք են մարգագետնային մկնաճուռակը (*Circus pygargus*), տափաստանային ճուռակը (*Buteo rufinus*), քարարծիվը (*Aquila chrysaetos*), սովորական հողմավար բազեն (*Falco tinnunculus*), մինչդեռ գարնան և հատկապես աշնան ամիսներին մեծ քանակությամբ գիշատիչներ հաստատվում են այստեղ՝ ներառելով Կարմիր գրքում գրանցված և գլոբալ վտանգված տեսակները, ինչպիսիք են տափաստանային մկնաճուռակը (*Circus macrourus*), կայսրարծիվը (*Aquila heliaca*), տափաստանային (*Aquila nipalensis*), փոքր (*A. pomarina*) և ճչան արծիվները (*A. clanga*):

“Արփի Լիճ” ազգային պարկի լեռնային տափաստաններին բնորոշ են 61 տեսակ, որից 11 տեսակը գրանցված են Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում, և դրանցից 7-ը՝ ԲՊՄՄ Կարմիր ցուցակում: Պարկն ընդգրկում է 45 բնադրող և նստակյաց տեսակներ (5 հավանական կամ հնարավոր բնադրվող), 14 – չվող, 19 – ձմեռող:

Հետևյալ ընտանիքների տեսակները ներկայացված են Արփի Լիճ ԱՊ-ի լեռնային տափաստաններում. փասիանայիններ (Phasianidae) (2), ճուռակներ (Accipitridae) (13), բազեններ (Falconidae) (5), կռունկներ (Gruidae) (1), աղավիհներ (Columbidae) (2), կկուններ (Cuculidae) (1), բվեր (Strigidae) (4), մեղվակերներ (Meropidae) (1), ներկարարներ (Coraciidae) (1), հոպոպներ (Coraciidae) (1), արտույտներ (Alaudidae) (3), խաղտտնիկներ (Motacillidae) (5), կեննեխայիններ (Turdidae) (4), շահրիկներ (Sylviidae) (1), սիտեղներ (Sittidae) (1), շամփրուկներ (Laniidae) (2), ճայեր (Corvidae) (4), սարյակներ (Sturnidae) (2), ճնճղուկներ (Passeridae) (1), սերինոսներ (Fringillidae) (3), դրախտապաններ (Emberizidae) (4).

Լեռնային մարգագետիններ. “Արփի Լիճ” ազգային պարկի տարածքում լեռնային մարգագետինները գտնվում են Եղնախաղի և Ջավախքի լեռնաշղթաների վերին լանջերին: Թռչունները բնակվում են լեռնային մարգագետիններում միայն տաք եղանակներին, մինչդեռ ձմռանը բոլորը չվում են կամ նստակյաց տեսակների դեպքում իջնում են հովիտներ և մարդկանց բնակավայրերի ծայրամասեր: Լեռնային մարգագետինների թռչունների ֆաունան համեմատաբար ավելի քիչ բազմազան է՝ համեմատած այլ բնական միջավայրերի հետ: Բնորոշ տեսակներն այստեղ ներառում են բարձրադիր վայրերի թռչուններ, ինչպես նաև մոտակա տափաստաններից այցելող տեսակներ: “Արփի Լիճ” ազգային պարկի բարձրադիր վայրերի տեսակները ներառում են՝ լեռնային վշասարեկը (*Carduelis flavirostris*) և լեռնային ձիուկը (*Anthus spinoletta*): Այստեղի քարքարոտ տարածքներում բնակվում են խայտաբղետ քարակեռնեխը (*Monticola saxatilis*), ձյան ճնճղուկը (*Montifringilla nivalis*), կարմրաթև ոսպնուկը (*Rhodopechys sanguineus*) և սևուկ կարմրատուտը (*Phoenicurus ochruros*): Տարբեր գիշատիչ թռչուններ՝ արծիվներ, բազեններ և գիշանգըղ (*Neophron percnopterus*), սովորաբար այցելում են լեռնային մարգագետիններ՝

որս հայթայթելու: Մոխրագույն կաքավն (*Perdix perdix*) ու լորը (*Coturnix coturnix*) հաճախ են հասնում այս գոտի և նույնիսկ բնադրվում են այստեղ:

“Արփի Լիճ” ազգային պարկի լեռնային մարգագետիններին բնորոշ են 43 տեսակ, որից 8 տեսակը գրանցված են Հայաստանի Կարմիր գրքում և 2-ը՝ ԲՊՄՄ Կարմիր ցուցակում: Պատկերն ընդգրկում է 41 բնադրող և նստակյաց տեսակներ (3 հավանական կամ հնարավոր բնադրողներով) և 6 չվողներ:

Հետևյալ ընտանիքները (բազմաթիվ տեսակներով) ներկայացված են “Արփի Լիճ” ազգային պարկի լեռնային տափաստաններում. փասիանայիններ (Phasianidae) (2), ճուռակներ (Accipitridae) (8), բազեներ (Falconidae) (2), աղավնիներ (Columbidae) (1), կկուներ (Cuculidae) (1), բվեր (Strigidae) (2), մեղվակերներ (Meropidae) (1), ներկարարներ (Coraciidae) (1), հոպոպներ (Upupidae) (1), արտույտներ (Alaudidae) (2), խաղտտնիկներ (Motacillidae) (5), կեռնեխայիններ (Turdidae) (5), շահրիկներ (Sylviidae) (4), ճայեր (Corvidae) (1), ճնճուկներ (Passeridae) (1), սերինոսներ (Fringillidae) (5), դրախտապաններ (Emberizidae) (1).

“Արփի Լիճ” ազգային պարկի անտառապատ վայրերը արհեստական և բնական ծագում ունեն: Արհեստական տնկարքերի հողակտորները անհավասարաչափ տարածված են և գտնվում են Արփի Լճի արևմտյան, հարավային և հարավ-արևելյան ափերի երկայնքում և Ախուրյան գետի կիրճում: Սրանք բաղկացած են սոճուց և թփուտներից: Նշանակալի լայնատարած տնկարկները գտնվում են Արփի Լճի արևմտյան և հարավ-արևմտյան ափերին: Սրանք ներկայացված են խառը բարձր բարդիներով և կաղամախիով և որոշ տարածքներում թփուտի հաստ մացառուտով:

“Արփի Լիճ” ազգային պարկի այս մասում Ախուրյան գետի կիրճում հանդիպում են բնական կաղամախու անտառապատ նշանակալի հատված: Անտառապատ վայրեր տարածված են նաև կիրճի ափերի երկայնքով: Կան նաև գաճաճ գիհիների կտորներ և տնկած սոճիներ անտառագծի վերևում: Չնայած “Արփի Լիճ” ազգային պարկի արհեստական լայնատերև և փշատերև տնկարկները հաջողությամբ բնակեցված են տարբեր անտառապատ վայրերի թռչունների տեսակներով, կաղամախու անտառակը Ախուրյան կիրճում բնական անտառի եզակի կտոր է՝ առանձնացած Հայաստանի այլ անտառապատ վայրերի լեռնազանգվածներից, և այն մնում է Հայաստանի հյուսիս-արեւմտյան հատվածի բնիկ անտառապատ վայրերի թռչնաֆաունայի կարևոր հենարան:

Պարկում անտառաշատ վայրերի թռչնատեսակների բազմազանությունը այնքան ամբողջական չէ, որքան մեկ այլ տեղ Հայաստանում: Պարկում անտառաշատ վայրերի տեսակների քանակը մեծանում է զարնան և աշնան ընթացքում: Պարկի անտառաշատ վայրերի բնորոշ բնադրող տեսակները ներառում են լորաճուռակ (*Accipiter nisus*), մեծ ճուռակ (*Buteo buteo*), խայտաբղետ փայտփոր (*Dendrocopos major*), կովկասյան գեղգեղիկ (*Phylloscopus lorenzii*), պիրոլ (*Oriolus oriolus*) և անտառային կաչաղակ (*Garrulus glandarius*). Մի շարք տեսակներ կանգ են առնում անտառաշատ վայրերի շուրջը չուի շրջանում, ինչպիսիք են տարբեր երգեցիկ թռչուններ, սերինոսներ և գլոբալ վտանգված կիսասպիտակավիզ ճանճորսը (*Ficedula semitorquata*). Ձմռանը նստակյաց տեսակները միանում են դեղնագլուխ արքայիկի (*Regulus regulus*) և ազնվասարեկի (*Carduelis spinus*) կողմից:

“Արփի Լիճ” ազգային պարկի անտառապատ վայրերի բնորոշ տեսակները ներառում են 49 տեսակ, որից 1-ը գրանցված է Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում և 1-ը ԲՊՄՄ Կարմիր ցուցակում: Պատկերն ընդգրկում է 33 բնադրող և 16 նստակյաց տեսակներ (6 հավանական կամ հնարավոր բնադրողներով), 16 –չվողներ և 7 ձմեռողներ:

Հետևյալ ընտանիքները ներկայացված են Արփի Լիճ ԱՊ-ի անտառապատ վայրերում. ճուռակներ Accipitridae (5), բազեներ Falconidae (1), մորակոցարայիններ Scolopacidae (1), աղավնիներ Columbidae (2), կկուներ Cuculidae (1), բվեր Strigidae (2), փայտփորներ Picidae (1), խաղտոտիկներ Motacillidae (1), եղնջաթռչնակներ Troglodytidae (1), կեռնեխայիններ Turdidae (8), շահրիկներ Sylviidae (11), ճանճորսայիններ Muscicapidae (2), երաշտահավեր Paridae (1), պիրոլներ Oriolidae (1), շամփուկներ Laniidae (1), ճայեր Corvidae (3), սարյակներ Sturnidae (1), սերինոսներ Fringillidae (6).

Ժայռերը և քարափները սովորաբար հանդիպում են մարգագետնային տափաստաններում, անտառապատ վայրերում և լեռնային մարգագետիններում, մինչդեռ վերջին բնական միջավայրի տարածքներում լրացուցիչ հաստատվում են: “Արփի Լիճ” ազգային պարկում իսկական ժայռերը գտնվում են Ջավախքի լեռնաշղթայում և Ախուրյան գետի կիրճում: Վերջինում կազմում են խորը կիրճ ճեղքվածքներով, որմնախորշերով և տարբեր չափերի և տարբեր մակարդակների խոռոչներով հարուստ բարձր ժայռերով, որոնք ծառայում են որպես բազմացման վայրեր շատ թռչունների համար: Ընդարձակ քարափները լայն զառիվայրերով և դրանց միաձուլումով իջնում են ժայռերի հատակից դեպի Ախուրյան գետի արագ հոսանքը: Բնական որմնախորշերի այսպիսի միացումը հյուրընկալում է ոչ միայն ժայռերին տիպիկ թռչնատեսակների, այլ նաև ուրիշների, որոնք բնորոշ են խոնավ տարածքներին և անտառապատ վայրերին: Ախուրյան գետի կիրճում հաստատված թռչունները գիշանգող (*Neophron percnopterus*), տափաստանային ճուռակը (*Buteo rufinus*), բվեճը (*Bubo bubo*), ժայռային (*Ptyonoprogne rupestris*) և քաղաքային (*Delichon urbicum*) ծիծեռնակներն են: Այլ բնորոշ ճնճղազգիների ներկայացուցիչներից են սևուկ կարմրատուտը (*Phoenicurus ochruros*), ջրաճնճղուկը (*Cinclus cinclus*), խայտաբղետ (*Monticola saxatilis*) և կապույտ (*M. solitarius*) քարակեռնեխները, ճուռականման շահրիկը (*Sylvia nisoria*), ժայռային փոքր սիտեղը (*Sitta neumayer*) և ժայռային ճնճղուկը (*Petronia petronia*): Կիրճի մեջ հայտնաբերվել է Հայաստանում հազվադեպ հանդիպող սև արագիլի (*Ciconia nigra*) բներից մեկը:

“Արփի Լիճ” ազգային պարկի ժայռոտ բնական միջավայրի բնորոշ տեսակները ներառում են 38 տեսակ, որից 9 տեսակ գրանցված է Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում և 1-ը ԲՊՄՄ Կարմիր ցուցակում: Պատկերն ընդգրկում է միայն բնադրող և նստակյաց տեսակներ (4 հավանական կամ հնարավոր բնադրողներով): Հետևյալ ընտանիքները (բազմաթիվ տեսակներով) ներկայացված են Արփի Լիճ ԱՊ-ի ժայռոտ բնական միջավայրում. արագիլներ Ciconiidae (1), ճուռակներ Accipitridae (4), բազեներ Falconidae (3), աղավնիներ Columbidae (1), կկուներ Cuculidae (1), բվեր Strigidae (2), մանգաղաթներ Apodidae (2), ծիծեռնակայիններ Hirundinidae (2), խաղտոտիկներ Motacillidae (1), եղնջաթռչնակներ Troglodytidae (1), կեռնեխայիններ Turdidae (7),

շահրիկներ Sylviidae (3), սիտեղներ Sittidae (1), ճայեր Corvidae (2), ճնճուկներ Passeridae (1), սերինոսներ Fringillidae (4), դրախտապաններ (2) Emberizidae.

Խոնավ տարածքները Արփի Լիճի ազգային պարկի հիմնական բիոմներն են և տարածքի հիմնական գրավչություններից մեկը: Սրանք լայն տարածված են գրեթե ամենուրեք և հավասարաչափ բազմազան են պարկում: Ձևավորվում են մի շարք կայուն և եղնաջյուրի ու Ջավախքի լեռներից սկիզբ առնող սեզոնային գետերի շրջակայքում: Միջլեռնային անկումներում իրենց հունի երկայնքով, հաճախ ձևավորում են ջրով հագեցված տարածքներ բարձր խոտային բուսականությամբ: Ընդարձակ ճահճուտներ են գտնվում հովիտներում՝ գետերի ցածր տարածությունում և դրանց միախառնման տեղերում: Արփի Լիճ ԱՊ-մ Ախուրյան գետի հովտում ճահճուտներն ու տորֆաճահիճներն ընդարձակ տարածքներ են զբաղեցնում: Սրանք առավելապես գերաճած են եղեգներով և այլ տարբեր ջրային բուսականությամբ և որոշ տարածքներում ունեն փոքր ճահիճներ և ճահճուտներ: Մի քանի արտեզյան աղբյուրներ տարածքում նպաստում են բաց ջրի փոքր կտորներին տարվա ամբողջ ընթացքում, որն օգնում է ջրային թռչուններին ոչ միայն տաք եղանակներին, բայց նաև խիստ ձմռան ընթացքում: Աղբյուրների կողմից կերակրված ավելի փոքր ճահճուտները նույնպես գտնվում են բարձրավանդակի հարթավայրերում և անկումներում:

Արփի Լիճ ԱՊ-ի շատ տեղերում կան նշանակալի խոնավ մարգագետիններ, որոնք մոտ են կամ միանում են լայնատարած ծառերի տնկարկներին թփուտներով և հատկանշական գորտնուկի փարթամությամբ, բարձր մարգագետնային երփներանգ խոտի բուսականությամբ՝ խառնված ջրային տեսակների հետ: Այս մարգագետինները բնակատեղի են հանդիսանում տարբեր գոտիներին բնորոշ տեսակների համար, որտեղ անտառաշատ վայրերի թռչունները գոյակցում են տիպիկ խոնավ տարածքների տեսակների հետ:

Արփի Լիճ բաց ափերը գրավում են մի շարք ջրլող թռչուններին տարվա մեծ մասում, մինչդեռ հին և մեկուսացված կղզյակները օգնում են բնադրող գաղութների մի քանի տեսակներին և օգտագործվում են օթևանելու համար բազմացման և չվելու ժամանակահատվածում: Արփի լճից բացի տարածքում կան նաև մի քանի այլ ավելի փոքր լճեր, որոնցից ամենամեծը Արդենիս գյուղի մոտ գտնվող Արդենիս Լիճն է: Որոշ ջրլող թռչունների տեսակներ կանոնավոր կերպով բազմանում են լճում, շատերն էլ կանգնում են այստեղ չուի ժամանակ:

Արփի լճի հայտնի տեսակներն են՝ մոխրագույն սազը (*Anser anser*), մոխրագույն բաղը (*Anas strepera*) և վտանգված գանգրափետուր հավալուսնը (*Pelecanus crispus*): Ճահճուտները հազվադեպ բնակեցված են մոխրագույն կռունկով (*Grus grus*) և մարգագետնային մկնաճուռակով (*Circus pygargus*), մինչդեռ գաղթման ընթացքում այստեղ մեծ քանակությամբ հանդիպում են քաջահավն (*Plegadis falcinellus*) ու մեծ մորակտցարը (*Gallinago media*) և տարբեր այլ ջրային թռչուններ: Անտառապատ վայրերին մոտ խոնավ մարգագետինները հանդիսանում են որպես ապրելավայրեր խոցելի տեսակ մարգահավի (*Crex crex*) համար: Խոնավ տարածքներին մոտ կերի առատությունը գրավում է տարբեր գիշատիչների, և դրանց մեծ բազմազանությունը գարնան և աշնան չուի ընթացքում է

հանդիպում; դրանց մեջ են ջրարծիվը (*Pandion haliaetus*), բալրբանը (*Falco cherrug*) և սապսանը (*Falco peregrinus*):

“Արփի Լիճ” ազգային պարկի խոնավ տարածքներին բնորոշ տեսակները ներառում են 91 տեսակ, որից 18 տեսակները գրանցված են Հայաստանի Կարմիր գրքում և 3-ը ԲՊՄՄ Կարմիր ցուցակում: Պատկերն ընդգրկում է 88 բնադրող և նստակյաց տեսակներ (9 հավանական կամ հնարավոր բնադրողներով), 69 –չվողներ և 12 ձմեռողներ:

Հետևյալ ընտանիքները (բազմաթիվ տեսակներով) ներկայացված են “Արփի Լիճ” ազգային պարկի խոնավ տարածքներում. բադանմաններ Anatidae (13), սուզակներ Podicipitidae (3), ձկնկուլայիններ Phalacrocoracidae (1), հավալուսնայիններ Pelecanidae (2), տառեղներ Ardeidae (8), արագիլներ Ciconiidae (2), տարգալակտուցայիններ Threskiornithidae (2), ճուռակներ Accipitridae (2), ջրարծիվներ Pandionidae (1), հովվիկներ Rallidae (5), կռունկներ Gruidae (2), կոցար-կաչաղակներ Haemotopodidae (1), բզակտուցայիններ Recurvirostridae (1), քարադրայիններ Charadriidae (3), մորակոցարայիններ Scolopacidae (15), որորներ Laridae (5), ջրածիճառայիններ Sternidae (5), բվեր Strigidae (1), ծիծեռնակայիններ Hirundinidae (1), խաղտտնիկներ Motacillidae (7), ջրաճնճուկներ Cinclidae (1), կեռնեխայիններ Turdidae (1), շահրիկներ Sylviidae (6), սերինոսներ Fringillidae (1), դրախտապաններ Emberizidae (1):

Մարդկանց կացարանները լայնորեն, սակայն ոչ խիտ տարածված են “Արփի Լիճ” ազգային պարկի պահպանման գոտում և ներկայացված են Աշոցք քաղաքով և մի շարք մեծ և փոքր գյուղերով: Խիստ կլիմայական պայմանների շնորհիվ պարկի տարածքում մրգատու ծառեր հազվադեպ են գտնվում: Տան հետնաբակերը հիմնականում պատկերված են կարտոֆիլով և որոշ գյուղերում ցածր թփերով: Այնուհանդերձ անտառապատ վայրերի ճնճղազգիները հազվադեպ են հանդիպում այս ծագման վայրում, և տեսակների մեծ մասը ներառում են տիպիկ սինանտրոպ և ամենուրեք գտնվող տեսակներ: Սրանցից ամենանշանավորներն են սպիտակ արագիլը (*Ciconia ciconia*), սովորական կաչաղակը (*Pica pica*), մոխրագույն ագռավը (*Corvus corone*), սովորական ճայը (*Corvus monedula*), սովորական սարյակը (*Sturnus vulgaris*), սպիտակ խաղտտնիկը (*Motacilla alba*), գյուղական ծիծեռնակը (*Hirundo rustica*) և տնային ճնճուկը (*Passer domesticus*): Քարե կառույցները, տները և ամբարները գրավում են ժայռային վայրերի տեսակների, ինչպիսիք են սևուկ կարմրատուտը (*Phoenicurus ochruros*), ժայռային ճնճուկը (*Petronia petronia*) և բարձունքների գյուղերում պատահում է լեռնային վշասարեկը (*Carduelis flavirostris*) և ձյան ճնճուկը (*Fringilla montifringilla*):

“Արփի Լիճ” ազգային պարկի պահպանման գոտում գտնվող մարդկանց կացարաններին բնորոշ տեսակները ներառում են 53 տեսակ, որից 5 տեսակները գրանցված են Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում և 1-ը ԲՊՄՄ Կարմիր ցուցակում: Պատկերն ընդգրկում է 43 բնական միջավայրի բնադրող և նստակյաց տեսակներ (3 հավանական կամ հնարավոր բնադրողներով), 11-չվողներ և 20 ձմեռողներ:

Հետևյալ ընտանիքները (բազմաթիվ տեսակներով) ներկայացված են “Արփի Լիճ” ազգային պարկի այս վայրում. արագիլներ Ciconiidae (1), ճուռակներ Accipitridae (1), բազեններ Falconidae (3), որորներ Laridae (1), աղավնիներ Columbidae (1), կկուներ Cuculidae (1), բվեր Strigidae (3), մանգաղաթևներ Apodidae (1), հոպոպներ Upupidae (1),

ծիծեռնակայիններ Hirundinidae (2), խաղտոնիկներ Motacillidae (7), եղնջաթոշնակներ Troglodytidae (1), կեռնեխայիններ Turdidae (6), շահրիկներ Sylviidae (5), ճանճորսայիններ Muscicapidae (1), երաշտահավեր Paridae (1), շամփրուկներ Laniidae (2), ճայեր Corvidae (4), սարյակներ Sturnidae (1), ճնճուկներ Passeridae (2), սերինոսներ Fringillidae (6), դրախտապաններ Emberizidae (2):

Վտանգներ

“Արփի Լիճ” ազգային պարկի թռչունների հետ կապված վտանգները հիմնականում պայմանավորված են օրինական և անօրինական մարդկային գործունեության հետ, որոնք տանում են “Արփի Լիճ” ազգային պարկի բնական միջավայրերի դառնալի և անդառնալի փոփոխությունների և ազդում են թռչունների վրա ուղղակիորեն կամ անուղղակիորեն: Հիմնական վտանգներն են.

Ուղղակի վտանգներ

ա. Ռեժիմի խախտումներ. Առաջնահերթ ազդում է գետնին բազմաող չափերով մեծ տեսակների վրա, ինչպիսիք են մոխրագույն սազը (*Anser anser*), գանգրափետուր հավալուանը (*Pelecanus crispus*), մարգահավը (*Crex crex*), մոխրագույն կռունկը (*Grus grus*) և հայկական որորը (*Larus armenicus*). Կղզիների վրա տեղակայված թռչունների բազմացման գաղութներ են այցելում ձկնորսները: Մարդկանց ներկայությամբ պատճառված խուճապը թռչունների բնադրող գաղութում կարող է բերել ձագերի և ձվերի զանգվածային կորստի: Նշվեց, որ մոխրագույն կռունկի բազմացման վայրերը հաճախակի են այցելվում մարդկանց կողմից և հատկապես օգտագործվում են արածեցման նպատակով բազմացման ժամանակահատվածում: Թռչունների ձագերին և ձվերին հասցվող այս վտանգները մեծանում են անասունների արածեցման ընթացքում պայմանավորված շների առկայությամբ:

բ. Որսագողությունը “Արփի Լիճ” ազգային պարկի տարածքի թռչուններին հասցվող նշանակալի վտանգներից մեկն է: Ապօրինի որսորդության օբյեկտները հիմնականում ջրային թռչուններն են, հավազգիները և այլ որսի տեսակները: Ձվերը և երիտասարդ առանձնյակները կարող են հավաքվել սննդի, առևտրի կամ այլ նպատակների համար: Աշոցքի տարածաշրջանը մասնավորապես հայտնի է ջրլող թռչունների գաղութների առկայությամբ: Մեծ մորակտցարը (*Gallinago media*) հայտնի որսորդության օբյեկտ էր, մինչև որ տեսակի որսորդությունը ամբողջովին արգելվեց: Այնուհանդերձ, ապօրինի որսորդության դեպքերը դեռևս հազվադեպ չեն: Տարածքում ապօրինի որսորդությունը տեղի է ունենում տարվա բոլոր եղանակներին՝ ներառած զարնանը և ամռանը: Հաճախակի սպանվում են նաև որսի օբյեկտ չհանդիսացող տարբեր գիշատիչ թռչունները:

Անուղղակի վտանգներ

ա. Գերարածեցում. “Արփի Լիճ” ազգային պարկի լեռնային տափաստանների և մարգագետինների մեծ մասի վրա խիստ բացասաբար է ազդում եղջերավոր անասունների գերարածեցումը, որի հետևանքները էրոզիայի պարզ նշաններով երևում են մի քանի տեղամասերում: Բացի այդ, գերարածեցման հետևանքով ոչնչանում են նաև ցամաքային անողնաշար կենդանիներ, որոնք հանդիսանում են բնադրող և չվող միջատակեր թռչունների /տափաստանային հողմավար բազե (*Falco naumanni*),

կարմրաոտ բազե (*Falco vespertinus*) և տարբեր ճնճղազգիներ/ հիմնական կերային բազան:

բ. Ինտենսիվ գյուղատնտեսություն՝ պարարտանյութերի, հերբիցիդների և պեստիցիդների օգտագործմամբ: Այս գործոնը որպես վտանգի աղբյուր քիչ է ուսումնասիրված, ուստի անհրաժեշտ են հատուկ ուսումնասիրություններ՝ դրանց ազդեցության աստիճանը հազվագյուտ և անհետացող թռչնատեսակների վրա պարզելու համար:

գ. Անարդյունավետ և չկանոնակարգված ջրի կառավարում.

Ախուրյան գետի վրա ամբարտակի կառուցումը և ջրանցքի միաժամանակյա փորումը ամբարտակից շուրջ 10կմ գետի բուն հոսքի երկայնքով առաջ բերեց սահմանակից ճահճի և գետի հովտի այդ հատվածի ճահճի չորացմանը: Այդ փոփոխության հետևանքով Արփի Լճի բնական 400 հա ջրի մակերեսը մեծացավ մինչև ներկայիս 2084 հա և որպես արդյունք լճի վրա հայտնվեցին երկու մեծ կղզիներ և մի քանի փոքր կղզյակներ: Մինչ կղզիների հայտնվելը բարենպաստ պայմաններ կային գանգրափետուր հավալուսնի (*Pelecanus crispus*), մոխրագույն սագի (*Anser anser*), հայկական որորի (*Larus armenicus*) և այլ թռչունների բազմացման համար: Լճում ջրի մակարդակի տատանումը բազմացման ժամանակահատվածում կարող է բացասական ազդեցություն ունենալ Արփի Լճում և Ախուրյան գետի հովտում բազմացող առափնյա թռչնաֆաունայի վրա: Ջրի մակարդակի տատանումները բացասաբար են ազդում նաև թռչնաֆաունայի բնականոն կենսակերպի վրա՝ հատկապես լճի ցամաքելու դեպքում, երբ կղզյակները այցելության համար մատչելի են դառնում մարդկանց և գիշատիչ կաթմասունների համար:

դ. Ձկնորսություն.

Արփի Լիճը հայտնի է տեղացի և այցելու ձկնորսների միջավայրում: Բարենպաստ տաք եղանակի դեպքում ձկնորսներին կարելի է հանդիպել Արփի Լճի հյուսիսային, արևելյան և հարավային ափերի ողջ երկայնքով: Որոշ դեպքերում օգտագործվում են նավակներ և ցանցեր, մոտենում, կամ նույնիսկ մտնում են կղզիներ՝ պատճառելով նշանակալի վնաս ջրլող թռչունների բազմացնող գաղութներին: Երբեմն թռչունները ոչնչանում են ընկնելով թակարդների և ձկնորսական ցանցերի մեջ, որոնք տեղադրվում են բազմացման և կերակրման տարածքների մոտակայքում:

Պահպանություն

Նախկին և ներկայիս ուսումնասիրությունների արդյունքները ցույց են տալիս, որ Արփի Լիճ ԱՊ-ում գտնվող որոշ տարածքները հանդիսանում են թռչնաֆաունայի բազմազանության կարևորագույն ապրելավայրերից մեկը Հանրապետությունում և ծառայում են որպես կանգառի վայր չվող տեսակների համար՝ գարնան և աշնան անցման ընթացքում:

Արփի Լճի մեծ կղզիներից երկուսն էլ՝ սահմանակից ջրային մակերևույթի հետ միասին հանդիսանում են հիմնական կամ եզակի բազմացման համար բնական միջավայր մոխրագույն սագի (*Anser anser*), մոխրագույն բադի (*Anas strepera*), գանգրափետուր հավալուսնի (*Pelecanus crispus*) և հայկական որորի (*Larus armenicus*) համար:

Ախուրյան գետի հովտում գտնվող տորֆային ճահիճները, հեղեղված սարահարթերը և մարգագետինները հանդիսանում են բազմացման համար կարևոր բնական միջավայր մոխրագույն բադի (*Anas strepera*), մարգագետնային մկնաճուռակի (*Circus pygargus*) և մոխրագույն կոռնկի (*Grus grus*), ինչպես նաև մեծ մորակտցարի (*Gallinago media*) կողմից օգտագործվող հիմնական բնական միջավայր չուի ընթացքում:

Ախուրյան գետի հատվածը միանալով բնական կաղամախու անտառաշատ վայրերին և ժայռային կիրճին հիմնական ապրելավայրեր է հանդիսանում սև արագիլի (*Ciconia nigra*), բվեճի (*Bubo bubo*), սապսանի (*Falco peregrinus*) և ճուռականման շահրիկի (*Sylvia nisoria*) համար: Բոլոր վերընշված ապրելավայրերը պետք է պահպանվեն ԱԼԱՊ անձնակազմի կողմից, պարբերաբար հսկողության միջոցով, հատկապես մարտից միջև հունիս ընկած ձվադրության և ձագերի աճեցման ժամանակահատվածում:

Կաթնասուններ

Աշոցքի սարահարթում գրանցված են կաթնասունների դասի 6 կարգերի 38 ներկայացուցիչներ, որոնք ընդգրկում են միջատակերների՝ 7, չղջիկների՝ 8, կրծողների՝ 11, նապաստակի՝ 1, գիշատիչների՝ 9 և սմբակավորների՝ 2 տեսակներ: Խոշոր կաթնասուններից սարահարթում գրեթե ամենուր հանդիպում են եվրոպական նապաստակը (*Lepus europaeus*), աղվեսը (*Vulpes vulpes*) և գայլը (*Canis lupus*): Խայտաքիսը (*Vormela peregusna*) գրանցվել է Աշոցքի սարահարթում և Վրաստանի հետ սահմանի վրա՝ Մադաթափա լճի մերձակայքում: Ջրասամույրը (*Lutra lutra*) հանդիպում է Ախուրյան գետի կիրճում, գորշուկը (*Meles meles*) Ջավախքի լեռնաշղթայի արևմտյան և Ղուկասյան լեռնաշղթայի հարավային լանջերին տեղակայված կիրճերում: Կաթնասունների որոշ տեսակների քանակը նվազում է: Դրանք են՝ գորշ համստերիկը (*Cricetulus migratorius*) և փոքրասիական համստերիկը (*Mesocricetus brandti*), ջրասամույրը և խայտաքիսը: Վեց տեսակները Կովկասի էնդեմիկ են. Ներինգի կուրամուկ (*Nannospalax nehringi*), փոքրասիական համստերիկ (*Mesocricetus brandti*), դաղստանյան դաշտամուկ (*Microtus daghestanicus*), Նազարովի դաշտամուկ (*Microtus nasarovi*), կովկասյան գորշատամ (*Sorex caucasicus*) և Շելկովնիկովի կուլորրա (*Neomys schelkownikowi*): Այս տեսակների ապրելավայրերը գտնվում են սարահարթի անդրսահմանային հայ-վրացական տարածքում և Ջավախքի լեռնաշղթայում:

Միակ ոչ բնիկ վայրի տեսակը մշկամուկն է (*Ondatra zibethicus*), որը կլիմայավարժեցվել է Խանչալի լճում 1980-ական թվականներին և հետագայում տարածվել է Ջավախքի լճերի մեծ մասում, հատկապես՝ Արփի և Արդենիս լճերում:

Վերը նշված տեսակներից երեքը հազվագյուտ են.

- 1) Գորշ արջ (*Ursus arctos*): Գրանցված է 2010 թ. Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում որպես “Խոցելի” (VU B1 b(iii))
- 2) Խայտաքիս (*Vormela peregusna*): Գրանցված է 2010 թ. Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում որպես “Խոցելի” (VU A2c+B1 b(iii)) և 2010 թ. Բնության Պահպանության Միջազգային Միության (ԲՊՄՄ) Կարմիր ցուցակում որպես “Խոցելի” (A2c):
- 3) Ջրասամույր (*Lutra lutra*): Գրանցված է 2010 թ. Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում որպես “Անհետացող” (EN D) և 2010 թ. Բնության

պահպանության միջազգային միության (ԲՊՄՄ) Կարմիր ցուցակում որպես “Գրեթե վտանգված” (Near Threatened):

Վտանգներ

Արփի լիճ ազգային պարկի կաթնասուններին սպառնացող հիմնական վտանգները հետևյալն են.

- 1) Գայլերի ու տեղացի բնակչության մեջ կոնֆլիկտները: Դրանք բխում են վայրի որսատեսակների պակասից ինչը ստիպում է գայլերին հարձակվել անասունների վրա, իսկ մարդկանց՝ սպանել գայլերին
- 2) Թունաքիմիկատների և պարարտանյութերի լայնածավալ օգտագործումը ինչը նպաստում է կրծողների և ձկնային պաշարների նվազեցմանը և դրանցով սնվող գիշատիչների (խայտաքիս, արջ, ջրասամույր) թվաքանակի կրճատմանը
- 3) Անկայուն ջրօգտագործումը, հատկապես՝ ջրավազաններում, ինչի հետևանքով առաջանում է հողի էրոզիա և վատթարանում է ջրի որակը, արդյունքում ջրասամույրը զրկվում է իր հիմնական ապրելավայրերից

Պահպանություն

Կաթնասունների պահպանությանը ուղղված բնապահպանական միջոցառումները պետք է ընդգրկեն հետևյալ ոլորտներ.

Անասնապահության ժամանակակից մոտեցումների կիրառում, որը կնվազեցնի անասունների կորուստը գայլերի պատճառով՝

- 1) Գամփոռների և նմանատիպ շների օգտագործում անասունների արածեցման ժամանակ
- 2) Գիշատիչներին ետ սովորացնող մեթոդների կիրառում: Օրինակ. եթե գայլերի կողմից սպանված կենդանու մարմնի մեջ սրսկվում է լիթիում քլորիդի լուծույթը, ապա այս լեշով սնվող գայլերի մոտ փսխում է առաջանում և գիշատիչները ետ են սովորում անասունների վրա հարձակվելուց
- 3) Էլեկտրական ցանցի օգտագործում անասնագոմերի շուրջ

Վտանգված տեսակներից պետք է հատուկ ուշադրություն դարձնել ջրասամույրի (*Lutra lutra*) պահպանությանը: Այդ նպատակով պետք է տեսակի ապրելավայրերում (*Ակհուրյան գետի*) իրականացվի մշտական հսկողություն:

1.9. Սոցիալ-տնտեսական և մշակութային կարգավիճակ

1.9.1. Ժողովրդագրություն

Գտնվելով Փոքր Կովկասի լեռներում Հայաստանը ամբողջությամբ հանդիսանում է լեռնային երկիր, որին արևելքից սահմանակից է Ադրբեջանը (սահմանը՝ 566 կմ), հարավ-արևմուտքից՝ Ադրբեջանի Նախիջևանի հանրապետությունը (221 կմ), հյուսիսից՝ Վրաստանը (164 կմ), հարավից՝ Իրանը (35 կմ) և արևմուտքից՝ Թուրքիան (268 կմ):

“Արփի Լիճ” ազգային պարկը և դրա պահպանման գոտին գտնվում են Շիրակի մարզի հյուսիսային մասում, Ամասիայի և Աշոցքի տարածաշրջաններում: Առաջին բնակավայրերը

հայտնվել են մ.թ.ա. 8-րդ դարում: Նախկինում այս բարձրալեռնային շրջանը հիմնականում օգտագործվում էր ամռանը՝ անասունների արածեցման, որսի ու ձկնորսության համար: Ներկայումս գոյություն ունեցող բնակավայրերը և բնակչության հիմնական կազմը ձևավորվել են անցած 3 տասնամյակների ընթացքում մի շարք գործոնների ազդեցությամբ:

1988 թ-ին Մարզի հյուսիսային հատվածը խիստ տուժել էր ուժեղ երկրաշարժից: Շատ գյուղեր և տներ ավերվել էին ու հետագայում չեն վերականգնվել: «Արփի լիճ» ազգային պարկի պահպանման գոտում գտնվում են 14 համայնքներ, իսկ դրանց բնակչությունը կազմում է 4754 մարդ (աղյուսակ 1):

Աղյուսակ 1. «Արփի լիճ» ազգային պարկի պահպանման գոտու համայնքների բնակչությունը

Գյուղ	Գրանցված բնակչություն	Իրական բնակչություն	Գրանցված տնային տնտեսությունների քանակ
Աղվորիկ	136	84	40
Արդենիս	146	127	41
Բավրա	620	500	141
Բերդաշեն (Պաղակն)	292	284	65
Գառնառիճ (Եղնաջուր)	259	261	75
Ղազանչի	605	542	145
Մեծ Սեպասար	948	866	226
Սարագյուղ	213	170	46
Շաղիկ	184	124	35
Սիզավետ	395	385	88
Թավշուտ	430	391	93
Ծաղկուտ (Լորասար)	286	186	71
Ջառիշատ (Երիզակ)	105	100	53
Ձորակերտ (Դարիկ)	135	131	40
Ընդամենը	4754	4151	1159

1.9.2. Տեղական տնտեսությունը, հողերի և բնական այլ ռեսուրսների օգտագործումը

«Արփի լիճ» ազգային պարկի պահպանման գոտում մասնաթերք և կաթնամթերք արտադրող խոշոր ձեռնարկություններ և արտադրամասեր, որոնք գոյություն ունեին խորհրդային ժամանակաշրջանում, այլևս չկան:

«Արփի լիճ» ազգային պարկի պահպանման գոտում ծառայությունների սեկտորի դերը մեծ է, հիմնականում, դա շարժուն մանրածախ առևտրականներն են, որոնք մթերքներ ու ապրանքներ են վաճառում գյուղերում: Մասնավոր և հասարակական այլ ծառայությունները կենտրոնացված են Գյումրիում, որտեղ գտնվում են խոշոր խանութները, ռեստորանները, գազալցակայանները և հյուրանոցները:

«Արփի լիճ» ազգային պարկի պահպանման գոտու տնտեսությունը հիմնված է գյուղատնտեսության վրա: Միակ գոյություն ունեցող ձեռնարկությունը Մեծ Սեպասարում գտնվող պանրի ոչ մեծ արտադրամասն է:

Տեղի բնակչության փոքր մասը զբաղված է ծառայությունների սեկտորում և այլ ոլորտներում: Մյուսները աշխատում են որպես սեզոնային աշխատողներ: Շրջանում զբաղվածության հնարավորությունները շատ սահմանափակ են:

Մեղրի արտադրությունը, սնկերի և ուտելի խոտաբուսերի հավաքը կիրառվում են «Արփի լիճ» ազգային պարկի պահպանման գոտու գրեթե բոլոր գյուղերում անձնական օգտագործման նպատակով:

«Արփի լիճ» ազգային պարկի պահպանման գոտու մեկուսացված լինելու, ճանապարհների վատ վիճակի և տրանսպորտային միջոցների անբավարարության պատճառով գյուղատնտեսական արտադրանքի սպառման հիմնական շուկա ներթափանցելը շատ դժվար է, իսկ գները բարձր են: Ներկա պահին, գյուղատնտեսական մշակաբույսերի արտադրությունն աննպատակահարմար է՝ ցածրորակ հողերի անբավարար արտադրողականության և բերքի ավելցուկի անբավարարության պատճառով: Ընտանիքներին բաժին են ընկնում ոչ մեծ բանջարանոցներ, որտեղ նրանք սեփական օգտագործման համար աճեցնում են կարտոֆիլ, բանջարեղեն և խոտաբույսեր:

Գոյություն ունի գյուղատնտեսական տեխնիկայի մեծ պահանջարկ, քանի որ առկա գյուղատնտեսական և տրանսպորտային միջոցները հնացել են և գտնվում են վատ վիճակում: Մասնավոր տեխնիկան տրվում է վճարի կամ այլ ծառայության դիմաց: Ամեն երկրորդ ընտանիքն ունի առնվազն մեկ ձի, որը տրանսպորտային միջոցի դեր է կատարում: Մեղվաբուծության ծավալները նույնպես փոքր են: Շատ տարածքներ դասակարգված են որպես «Արփի լիճ» ազգային պարկի պահպանման գոտու վարելահողեր, իրականում լինելով արոտավայրեր կամ խոտհարքեր: Մյուս հողատարածքները օգտագործվում են անասնակերի աճեցման համար:

Կարտոֆիլի և ցորենի մշակման համար նախկինում կատարված խոնավ տարածքների դրենաժային և ոռոգման աշխատանքներն անարդյունավետ էին՝ կլիմայական խիստ պայմանների, հողի ցածր բերքատվության և վեգետացիոն կարճ ժամանակաշրջանի պատճառով: Արդյունքում, շատ դաշտեր լքված են և այժմ օգտագործվում են որպես արոտավայրեր: Կարելի է ենթադրել, որ սարահարթի խիստ անբարենպաստ կլիմայական և հողային պայմաններից ելնելով, որոշ գյուղատնտեսական աշխատանք քիչ արդյունավետ է լինելու:

«Արփի լիճ» ազգային պարկի պահպանման գոտում, համայնքային հողատարածքների վրա իրականացվող անասնապահությունը տեղացի բնակչության համար ամենակարևոր և

հիմնական տնտեսական գործունեությունն է: Միաժամանակ, հողերի ցածր արտադրողականությունը, գերարածեցումը և անբավարար հսկողությունը հանգեցնում են արոտավայրերի որակի լայնածավալ վատթարացմանը, իսկ ամբողջ Աշոցքի սարահարթում առկա են էրոզիայի հետքեր: Համայնքային արոտավայրերը վարձակալվում են համայնքների բնակիչների և այլ անձանց կողմից:

Հողերի վարձակալումից ստացված գումարները կազմում են համայնքների համար եկամուտների ամենակարևոր աղբյուրը և հիմնականում օգտագործվում են ընթացիկ ծախսերը հոգալու համար:

Ընտանի կենդանիներից, հիմնականում, պահվում են խոշոր եղջերավոր անասուններ և ոչխարներ: Սովորաբար գյուղերը վարձում են մեկ հովիվ, որը արածեցնում է առանձին սեփականատերերին պատկանող անասուններին՝ բացի հորթերից: Փոքր համայնքները մշակել են ռոտացիոն համակարգ, որն ապահովում է համայնքի բոլոր ընտանիքների հավասար մասնակցությունը անասունների արածեցման գործընթացում: Պանիրը շրջանում հանդիսանում է միակ արտադրվող սննդամթերքը, քանի որ այլընտրանքային արտադրամասեր գործնականում գոյություն չունեն:

Խոշոր եղջերավոր անասունները տնային տնտեսությունների համար անփոխարինելի են, քանի որ դրանք տալիս են կաթ, պանիր, մածուն, կարագ և կաթնաշոռ: Կաթը հավաքում են մասնավոր ընկերությունները, որից ստացված գումարը շատ ընտանիքների համար միակ գումարի աղբյուրն է հանդիսանում: Անասնապահության ամենակարևոր կողմերից մեկը ամռան շրջանում գոմաղբի հավաքումն ու չորացումն է, ինչը «Արփի լիճ» ազգային պարկի պահպանման գոտու տնային տնտեսությունների մեծ մասի համար հանդիսանում է էներգիայի միակ աղբյուրը (սննդի պատրաստում և ջեռուցում խիստ ձմեռվա 6-8 ամիսների ընթացքում): Կաթնամթերքը և գոմաղբի աղյուսները տեղական տնտեսությունում կարևոր դեր են խաղում, ինչի պատճառով էլ տեղական բնակչությունը բավականին մեծ քանակությամբ անասուն է պահում:

Ախորյան գետի հին հունի սահմաններում գտնվող խոնավ տարածքներն օգտագործվում են մեծ մասամբ խոտհնձի համար: Խոտհարքերի ներկա տարածքները բավական չեն մեծաքանակ անասունների պահման համար, որոնք արդեն գերազանցել են որոշ համայնքներում գտնվող արոտավայրերի ներկա հզորությունները:

Չնայած Արփի լճում ձկնորսության և ձկնաբուծության զարգացման համար որոշ հետաքրքրություն է ցուցաբերվում, այնուամենայնիվ, լայնածավալ որս այստեղ չի կատարվում: Արփի լճում արդյունագործական ձկնորսության պոտենցիալը ցածր է, բայց առանձին ընտանիքների կողմից իրականացվող սիրողական ձկնորսությունը լրացուցիչ սպիտակուցների ստացման կարևոր աղբյուր է հանդիսանում:

ԳԼՈՒԽ II. ՏԵՍԼԱԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ

2.1. Տեսլական

1. «Արփի լիճ» ազգային պարկի և դրա պահպանման գոտու տեսլականը մշակվել է 2008 թ-ին կազմակերպված հանդիպմանը՝ սկսելով մասնակցային կառավարման պլանավորման գործընթացը: Տեսլականը մշակվել է 78 մասնակիցների կողմից, որոնց կազմի մեջ մտնում էին «Արփի լիճ» ազգային պարկի պահպանման գոտու համայնքների

անդամներ, կառավարության ներկայացուցիչներ, գիտնականներ, ռեսուրսների կառավարման մասնագետներ, մասնավոր սեկտորի ներկայացուցիչներ և տարածքի ՀԿ-ների անդամներ: Տեսլականը արտահայտում է հանդիպման մասնակիցների և «Արփի լիճ» ազգային պարկի պահպանման գոտու համայնքների կողմից արտահայտված երկարաժամկետ հեռանկերները և ձևակերպում է ռազմավարության հիմքը՝ մինչև 2030 թ. տեսլականի մեջ նշված նպատակներին հասնելու համար:
Տեսլականի կարևոր տարրերը հետևյալն են.

- 1) «Արփի լիճ» ազգային պարկի կայուն կառավարում և կենսաբազմազանության պահպանության բարձր մակարդակի ապահովում.
- 2) երկարաժամկետ և շոշափելի շահեր՝ պահպանման գոտու բնակչության և ապագա սերունդների համար.
- 3) «Արփի լիճ» ազգային պարկի տնտեսական գոտու ռեսուրսների կայուն օգտագործում.
- 4) երկարաժամկետ բնապահպանական շահեր, հատկապես՝ ջրային ռեսուրսների, կենսաբազմազանության և տուրիզմի շնորհիվ.
- 5) բնակչության կայունացմանը նպաստող տնտեսական պայմանների բարելավում.
- 6) զբաղվածության ապահովում՝ տուրիզմի զարգացման միջոցով.
- 7) բնակչության աճի ապահովում՝ տնտեսական աճի շնորհիվ.
- 8) Արփի լճին վերաբերող հարցերի արդյունավետ կարգավորում.
- 9) գյուղատնտեսական մթերքների և այլ ռեսուրսների տեղական մշակում.
- 10) խմելու որակյալ ջրի կայուն մատակարարում.
- 11) այլընտրանքային էներգիայի աղբյուրների օգտագործում.
- 12) ապագա սերունդներին բարելավված պայմանների ապահովում՝ պետական և միջազգային ծրագրերի իրականացման միջոցով.
- 13) մաքուր շրջակա միջավայրի ապահովում.
- 14) բարձր չափանիշներին համապատասխանող առողջապահական համակարգի զարգացում.
- 15) կրթական կառույցների կարողությունների զարգացում, կրթական և մշակութային կենտրոնների ստեղծում.
- 16) գյուղատնտեսական արտադրության ընդլայնում.
- 17) ձմեռային սպորտի համար համապատասխան ենթակառուցվածքների ստեղծում.
- 18) գորգագործության զարգացում.
- 19) սոցիալական ենթակառուցվածքի զարգացում.
- 20) էկոլոգիական իրազեկության բարձր մակարդակի ապահովում.
- 21) փոքր ձեռնարկությունների ստեղծում.
- 22) պահպանման գոտու համայնքների համար «Արփի լիճ» ազգային պարկի պահպանման գոտում և ազգային պարկի տնտեսական և ռեկրեացիոն գոտիների սահմաններում գտնվող տարածքներում ձեռնարկատիրության և կայուն օգտագործման արտոնությունների ապահովում.
- 23) պատմամշակութային հուշարձանների պահպանությանն ուղղված գործընթացների ապահովում.

2. Տեսլականի տարրերը արտացոլում համայնքային տարածքների կայուն զարգացումը «Արփի լիճ» ազգային պարկի կառավարման գործընթացում, ինչը պահանջում է մարտավարությունների և կանոնակարգերի մասնակցային մշակում՝ ապահովելով «Արփի լիճ» ազգային պարկի և դրա պահպանման գոտու ռեսուրսների և հողերի օգտագործման կայունությունը:

3. «Արփի լիճ» ազգային պարկի և պահպանման գոտու տեսլականը հետևյալն է.

Մինչև 2030 թվականը «Արփի լիճ» ազգային պարկը և դրա պահպանման գոտին հայտնի կլինեն որպես պետական մարմնի և տեղական համայնքների կողմից պլանավորված և կառավարվող տարածք, որը արդյունավետ կառավարման արդյունքում հաջողությամբ կպահպանվի և կօգտագործվի՝ հիմնվելով Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված «Արփի լիճ» ազգային պարկի կառավարման պլանի վրա: Շիրակի մարզին բնորոշ յուրահատուկ մերձալպյան մարգագետինների մոդելային տարածքները կայուն եղանակով կպահպանվեն են և պահպանությունը կընդգրկի Արփի լիճը, որպես Հայաստանի ամենակարևոր ջրաղբյուրներից մեկը: «Արփի լիճ» ազգային պարկին և դրա պահպանման գոտուն ուղղված ազգային և միջազգային ներդրումները կնպաստեն պարկի, այդ թվում՝ Արփի լճի կայուն պահպանությանը և կառավարմանը՝ բարելավելով պահպանման գոտու բնակչության սոցիալ տնտեսական վիճակը: Դա կհանդիսանա պահպանման գոտու կայուն տնտեսական օգտագործման նորագույն մոտեցումների կիրառման արդյունք (գյուղատնտեսական և անասնապահական սեկտորի ուժեղացում և բազմազանեցում, հանրապետությունում և արտասահմանում մեծ պահանջարկ ունեցող տեղական արտադրանքի վերամշակում): Տարածքը հայտնի կդառնա իր բարձրորակ ջրային ռեսուրսներով, այլընտրանքային էներգիայի արտադրությամբ, մեղվաբուծությամբ, ոչխարի բրդի վերամշակմամբ և ավանդական գորգագործությամբ, որոնք կիրականացվեն տեղական փոքր ձեռնարկությունների ուժերով: Համատեղ ջանքերը կհանգեցնեն նոր աշխատատեղերի ստեղծմանը, կյանքի պայմանների բարելավմանը, պահպանման գոտում բնակչության կայունացմանը, էկոլոգիական իրազեկության մակարդակի բարձրացմանը և սոցիալական ենթակառուցվածքի նշանակալի բարելավմանը: «Արփի լիճ» ազգային պարկի տարածքը իրենից կներկայացնի Հայաստանում զարգացող համայնքային հողօգտագործման պլանավորման և կայուն զարգացման մոդել:

2.2. Նպատակներ և խնդիրներ

1. «Արփի լիճ» ազգային պարկի ընդհանուր նպատակն է՝ տարածքի որպես բարձր լեռնային լանդշաֆտի պահպանումը և էկոհամակարգերի բնական զարգացման գործընթացներին նպաստող ռեսուրսների կայուն կառավարումը:

2. «Արփի լիճ» ազգային պարկի խնդիրներն են.

1) «Արփի լիճ» ազգային պարկի, ներառյալ՝ արևմտյան, արևելյան, «Ախուրյանի կիրճ», «Արդենիս» և «Ավար» տեղամասերի կենսաբազմազանության կայուն պահպանությունը և էկոլոգիական ամբողջականության ապահովումը, որի համար պահանջվում է հետևյալ միջոցառումների իրականացումը՝

ա. «Արփի լիճ» ազգային պարկի տարածքի գործառնական գոտիների համար օրենսդրությամբ սահմանված պահանջային ռեժիմների աահովում.

բ. կենսաբազմազանության և էկոհամակարգերի պահպանությանն ուղղված կիրառելի և անհրաժեշտ կառավարման ծրագրերի՝ որպես տարածքի կայուն զարգացման և կառավարման միջոցների մշակում և իրականացում.

գ. կառավարման պլանի իրականացում արհեստավարժ խմբի կողմից, որի կազմի մեջ կմտնեն կառավարման համակարգի և պահպանման գոտու համայնքների ներկայացուցիչները (համակառավարում).

դ. պահպանվող տարածքների սահմանազատում և հողային ռեսուրսների օգտագործում.

ե. համագործակցություն «Արփի լիճ» ազգային պարկի անձնակազմի, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, համայնքներում ռեսուրսներ օգտագործողների և այլ շահագրգիռ մարմինների միջև.

զ. համագործակցություն Վրաստանի «Ջավախեթի» ազգային պարկի հետ, համատեղ պահպանության գործունեության որոշում և իրականացում, ծրագրերի համատեղ իրականացում:

2) Տեղական իշխանության տրամադրվածություն, պահպանման գոտու համայնքների, «Արփի լիճ» ազգային պարկի, շահագրգիռ կողմերի, պահպանվող տարածքների ներդաշնակ զարգացում՝ կառավարման և բիզնես պլաններին համապատասխան, որի համար պահանջվում է հետևյալ միջոցառումների իրականացումը՝

ա. «Արփի լիճ» ազգային պարկի առաջխաղացումը և պահպանման գոտու կայուն զարգացման կարևորությունը տարածաշրջանային և տեղական մակարդակներով

բ. «Արփի լիճ» ազգային պարկի և պահպանման գոտու՝ որպես համայնքային հողօգտագործման կառավարման մոդելի ստեղծում.

գ. պահպանման գոտու բնակիչներին վստահեցում/հավաստիացում, որ «Արփի լիճ» ազգային պարկը ստեղծվել է ուղղակի և անուղղակի տնտեսական և սոցիալական շահեր ապահովելու համար:

3) Տարածաշրջանի և «Արփի լիճ» ազգային պարկի պահպանման գոտու տնտեսական զարգացման առաջընթացը՝ «Արփի լիճ» ազգային պարկի ստեղծումից հետո, որի համար պահանջվում է հետևյալ միջոցառումների իրականացումը՝

ա.«Արփի լիճ» ազգային պարկի կառավարման և բիզնես պլանների իրականացում.

բ. «Արփի լիճ» ազգային պարկի ու Շիրակի մարզի տնտեսական զարգացում.

գ. «Արփի լիճ» ազգային պարկի ռեսուրսների օգտագործման միջոցով շահույթի ստեղծում ներգրավված կողմերի համար.

դ. «Արփի լիճ» ազգային պարկի անձնակազմի և ներգրավված համակառավարվող կողմերի համար կարողությունների զարգացում և նոր գիտելիքների փոխանցում՝ պահպանման գոտում իրականացվող գործողությունների համար.

ե. բնական ռեսուրսների կառավարման բարելավում և «Արփի լիճ» ազգային պարկում սկիզբ առնող բարձրորակ ջրային ռեսուրսների պահպանություն.

զ. տարածաշրջանային համագործակցությանը նպաստող ազգային և միջազգային դոնորների աջակցության ապահովում:

4) «Արփի լիճ» ազգային պարկի և պահպանման գոտու՝ որպես տուրիստական վայրի առաջխաղացում, որի համար պահանջվում է հետևյալ միջոցառումների իրականացումը՝

բ. այցելուների համար նախատեսվող միջազգային չափանիշներին համապատասխանող ենթակառուցվածքի զարգացում:

5) «Արփի լիճ» ազգային պարկի և պահպանման գոտու ֆինանսական կայունության ապահովում, որի համար պահանջվում է հետևյալ միջոցառման իրականացումը՝

Լիարժեք կազմված բիզնես պլանի մշակում և իրականացում՝ «Արփի լիճ» ազգային պարկի եկամուտների ստացման ոլորտում ներուժի լիարժեք օգտագործմամբ, շեշտը դնելով կայուն բնօգտագործման ու պահպանության և ոռոգման ու հիդրոէլեկտրակայանների գործարկման համար համայնքներին բարձրորակ ջրամատակարարման ապահովման վրա:

6) «Արփի լիճ» ազգային պարկը և դրա պահպանման գոտին հանդիսանում են բնական ռեսուրսների կառավարման հուսալի մոդել Հայաստանի Հանրապետության և հարակից երկրների համար, որի համար պահանջվում է հետևյալ միջոցառումների իրականացումը՝

ա. նպատակային ուսուցանում և կարողությունների հզորացում կայուն զարգացման և հողօգտագործման կառավարման ոլորտում.
բ. պահպանման գոտու համայնքների մասնակցություն «Արփի լիճ» ազգային պարկի կառավարման պլանի մշակման և իրականացման, բիզնես պլանի և պահպանման գոտու զարգացման ծրագրի աջակցման մեջ, ինչը կնպաստի դրանց ընդգրկմանը պահպանման գոտու համայնքների հետ համատեղ մշակված Շիրակի մարզի ինտեգրված տարածքային հողօգտագործման պլանի (ԻՏՀՊ) մեջ.

գ. «Արփի լիճ» ազգային պարկի ներդրում հանրապետության կենսաբազմազանության պահպանության, ԲՀՊՏ-ների համակարգի գործունեության և շրջանի կայուն սոցիալ-տնտեսական զարգացման մեջ.

դ. կառավարման պլանի, բիզնես պլանի և պահպանման գոտու զարգացման ծրագրի լայն տարածում ուսուցողական նպատակներով:

ԳԼՈՒԽ III. «ԱՐՓԻ ԼԻՃ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ ՏԵՂԱՄԱՍԵՐԻ ԳՈՏԻԱՎՈՐՈՒՄԸ

3.1. Գոտիավորման հասկացությունը

1. Ազգային պարկի գոտիավորումը հանդիսանում է տարածքային կառավարման ընդունված գործիք, որն օգնում է աշխատանքների կազմակերպմանը և արդյունավետ դարձնում ազգային պարկի սահմաններում նշված գոտիներում կիրառվող մարտավարությունը: Այս մոտեցման կիրառումը կնպաստի ենթակառուցվածքի զարգացմանը և ռեսուրսների արդյունավետ ավանդական ու հեռանկարային օգտագործմանը «Արփի լիճ» ազգային պարկի հատուկ առանձնացված էկոլոգիապես խոցելի տարածքներում: Համաձայն «Արփի լիճ» ազգային պարկի կանոնադրության ազգային պարկը բաժանվում է հետևյալ երեք տարածագործառնական գոտիների՝

- 1) արգելոցային
- 2) ռեկրեացիոն
- 3) տնտեսական:

2. «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում օգտագործվող «արգելոցային գոտի» հասկացությունը համապատասխանում է միջազգային «հիմնական գոտի» կամ «անձեռնմխելի գոտի» հասկացություններին, «ռեկրեացիոն գոտի»-ն՝ «տուրիստական գոտի» կամ «այցելուների

գոտի» հասկացությանը, «տնտեսական գոտի»-ն՝ «ավանդական օգտագործման գոտի» կամ «բազմանպատակ օգտագործման գոտի» հասկացություններին: Միջազգային փորձում օգտագործվում են նաև մի շարք այլ կարգի գոտիներ: Ամենաշատ օգտագործվող տերմիններից մեկը դա «վերականգնման գոտի»-ն է, այսինքն այն ժամանակավորապես չօգտագործվող տարածքն է, որը մնում է այդպիսի վիճակում մինչև մոնիթորինգի տվյալները չեն հավաստում, որ այն ամբողջապես վերականգնվել է և կարող է նորից օգտագործվել: Վերականգնվելուց հետո վերականգնման գոտին կարող է ձևափոխվել մեկ այլ գոտու, որն ավելի հարմար է տարածքային կառավարման տեսանկյունից:

Արգելոցային գոտին բնութագրվում է ամենախիստ բնապահպանական ռեժիմով՝ ազգային պարկի կարևոր էկոհամակարգերի պահպանության համար:

3. Պահպանման գոտու առանձնացումը և դրա տնտեսական զարգացման աջակցումը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության և Գերմանիայի կառավարությունների միջև «Արփի լիճ» ազգային պարկի ստեղծման համաձայնության կարևոր դրույթներից մեկը՝ համաձայնության մեջ նշված ֆինանսական աջակցության շրջանակներում՝ նպատակ ունենալով ապահովելու «Արփի լիճ» ազգային պարկի հարակից համայնքների հետ համագործակցությունը:


«Արփի լիճ» ազգային պարկի ստեղծման հիմնական նախապայմանը հանդիսացել է «Արփի լիճ» ազգային պարկի ներառյալ բնապահպանական նպատակների և սահմանակից համայնքային տարածքների հողերի և ռեսուրսների կայուն օգտագործման միջև հավասարակշռության պահպանման անհրաժեշտությունը: Հաստատված գոտիավորման հատակագիծը ցույց է տալիս այդ հավասարակշռությունը՝ «Արփի լիճ» ազգային պարկի տարբեր մասերում և արտացոլում է տարածքի ռեսուրսների վերաբաշխումը՝ ըստ ռեսուրսների օգտագործման տարբեր եղանակների ու մարտավարությունների:

3.1.1. «Արփի լիճ» ազգային պարկի գործառնական գոտիները

Պարկի տարածքը, ըստ պահպանության և օգտագործման ռեժիմի, գործառնական նշանակության և էկոլոգիական, գիտական, ռեկրեացիոն, տնտեսական, պատմամշակութային ու գեղագիտական արժեքների, բաժանված է արգելոցային, ռեկրեացիոն և տնտեսական տարածագործառնական գոտիների՝ համաձայն ՀՀ կառավարության 2011թ-ի հուլիսի 21-ի «Արփի լիճ» ազգային պարկի սահմանների նկարագիրը, հատակագիծը, տարածքի չափը հաստատելու և հողերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին» N1151-Ն որոշման (Քարտեզ 4):

Քարտեզ 4

«Արփի լիճ» ազգային պարկի գոտիավորման սխեման



Ազգային պարկի պահպանության և օգտագործման ռեժիմը համաձայն կանոնադրության՝ ըստ տարածագործառնական գոտիների հետևյալն է.

Պարկի արգելոցային գոտում արգելվում են՝

- 1) ջրային ռեսուրսների օգտագործումը՝ ջրային համակարգերի միջոցով, և ջրային ռեժիմը խախտող ցանկացած գործունեություն.
- 2) տնտեսական և բնակելի օբյեկտների, ճանապարհների, խողովակաշարերի, էլեկտրահաղորդման գծերի և այլ հաղորդակցուղիների շինարարությունն ու շահագործումը՝ բացառությամբ արգելոցի գործունեության համար անհրաժեշտ օբյեկտների շինարարության (անտառապահի տնակ, արգելափակոց, սահմանանշան և այլն).
- 3) բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների բնակության միջավայրի պայմանների խախտումը.
- 4) որսորդությունը, ձկնորսությունը.
- 5) կենդանիների և բույսերի նոր տեսակների, կենսատեխնոլոգիաների միջոցով ստացված գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների (տեսակների) ներմուծումն ու օգտագործումը, ինչպես նաև առանձին տեսակների քանակի մեծացման կամ պակասեցման նպատակով կատարվող որևէ աշխատանք.
- 6) բույսերի, ծաղիկների, պտուղների և սերմերի մթերումը՝ բացի արգելոցի տարածքի գիտական հետազոտությունների համար նախատեսված հավաքածուների հավաքումից.
- 7) անտառահատումները, անասունների արածեցումը, խոտհունձը և բուսական ծածկույթի այլ խախտումներ.
- 8) թունաքիմիկատների օգտագործումը՝ բույսերի պաշտպանության նպատակով, ինչպես նաև հանքային պարարտանյութերի օգտագործումը.

9) ռադիոակտիվ նյութերի և թափոնների, ինչպես նաև մարդու առողջության ու շրջակա միջավայրի համար վտանգավոր կամ թունավոր այլ նյութերի արտադրությունը, օգտագործումը և պահեստավորումը.

10) երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները, որոնք առաջացնում են հողային ծածկույթի խախտում.

11) օգտակար հանածոների հանքավայրերի, երևակումների շահագործումը, հանքանյութեր վերամշակող օբյեկտների տեղաբաշխումը.

12) ընդհանուր օգտագործման ճանապարհներից և ջրային ուղիներից դուրս շարժիչային և թրթուրավոր տրանսպորտային միջոցների երթևեկությունը և կանգառը ճանապարհային ցանցի սահմաններից դուրս կամ դրա համար չնախատեսված վայրերում.

13) ցանկացած այլ գործունեություն, որը խախտում է բնական համակարգերը և օբյեկտները կամ սպառնում է դրանց պահպանությանը:

Պարկի արգելոցային գոտում թույլատրվում են՝

ա. բնական էկոհամակարգերի, կենսաբազմազանության, լանդշաֆտների, բնության ժառանգության, ինչպես նաև պատմության և մշակույթի հուշարձանների գիտական ուսումնասիրությունները, հաշվառումը, գույքագրումը, մոնիթորինգը.

բ. պարկի կառավարման պլաններով սահմանված երթուղիներով ճանաչողական զբոսաշրջության կազմակերպումը.

գ. ուսումնական հաստատությունների կրթադաստիարակչական և ուսումնարտադրական պրակտիկաների անցկացումը:

8. Պարկի արգելոցային գոտու տարածք մուտքը թույլատրվում է «Արփի լիճ» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր մարմնի կամ Հայաստանի Հանրապետության լիազորված պետական կառավարման մարմնի կողմից տրված անցագրերով:

9. Պարկի ռեկրեացիոն գոտու տարածքում արգելվում են՝

1) ջրային ռեժիմը խախտող ցանկացած գործունեություն.

2) բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների բնակության միջավայրի պայմանների խախտումը.

3) անասունների արածեցումը.

4) բույսերի և կենդանիների նոր տեսակների, ինչպես նաև կենսատեխնոլոգիաների միջոցով ստացված՝ գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների (տեսակների) ներմուծման և կլիմայավարժեցման աշխատանքները.

5) թունաքիմիկատների օգտագործումը՝ բույսերի պաշտպանության նպատակով, ինչպես նաև հանքային պարարտանյութերի օգտագործումը.

6) էկոլոգիապես վնասակար, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված թույլատրելի նորմերը գերազանցող արտանետումներ և կեղտաջրեր առաջացնող տեխնոլոգիաների օգտագործումը.

7) ռադիոակտիվ նյութերի և թափոնների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի համար վտանգավոր կամ թունավոր այլ նյութերի արտադրությունը, օգտագործումը և պահեստավորումը.

8) երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները (հողային ծածկույթի խախտումով), օգտակար հանածոների հանքավայրերի, երևակումների շահագործումը, հանքանյութեր վերամշակող օբյեկտների տեղաբաշխումը.

9) անտառահատումները (բացառությամբ սանիտարական և խնամքի հատումների).

10) արդյունագործական նպատակով բուսական և կենդանական աշխարհի օբյեկտների և դրանց արգասիքների օգտագործումը.

11) ընդհանուր օգտագործման ճանապարհներից և ջրային ուղիներից դուրս շարժիչային և թրթուրավոր տրանսպորտային միջոցների երթևեկությունն ու կանգառը ճանապարհային ցանցի սահմաններից դուրս կամ դրա համար չնախատեսված վայրերում:

10. Պարկի ռեկրեացիոն գոտու տարածքում թույլատրվում են՝

1) քաղաքացիների հանգիստը.

2) բնական էկոհամակարգերի, կենսաբազմազանության, լանդշաֆտների, բնության ժառանգության, ինչպես նաև պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների գիտական ուսումնասիրությունները, հաշվառումը, գույքագրումը, մոնիթորինգը (այդ թվում՝ քաղաքացիների հանգստի կազմակերպման, սպասարկման ծառայությունների մոնիթորինգը).

3) ճանաչողական զբոսաշրջության կազմակերպումը.

4) ուսումնական հաստատությունների կրթադաստիարակչական և ուսումնաարտադրական պրակտիկաների անցկացումը.

5) սիրողական և մարզական ձկնորսությունը՝ այդ նպատակով առանձնացված վայրերում.

6) ռեկրեացիայի նպատակով հողերն օրենքով սահմանված կարգով վարձակալության տրամադրելը և համապատասխան սպասարկման ծառայությունների կազմակերպումը.

7) սանիտարական և խնամքի հատումները.

8) էկոհամակարգերի հավասարակշռությունը խախտող երևույթներն ու գործընթացները կանխարգելող, ինչպես նաև խախտված էկոհամակարգերի վերականգնման միջոցառումները.

9) սանիտարահիգիենիկ պայմանների ապահովման ու վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերացման միջոցառումները.

10) տրանսպորտային միջոցների մուտքն ու կանգառը՝ այդ նպատակով առանձնացված վայրերում.

11) անասունների ջրարփիացման նպատակով անասունների տեղափոխումը նախատեսված միջանցքների միջոցով.

12) վրանների տեղադրումը՝ դրանց համար առանձնացված վայրերում.

13) պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների հնագիտական ուսումնասիրությունները, վերականգնումը, նորոգումը և ամրակայումը:

11. Պարկի տնտեսական գոտու տարածքում արգելվում են՝

1) ջրային ռեժիմը խախտող ցանկացած գործունեություն.

2) բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների բնակության միջավայրի պայմանների խախտումը.

3) անտառահատումները (բացառությամբ սանիտարական և խնամքի հատումների).

4) բույսերի և կենդանիների նոր տեսակների, ինչպես նաև կենսատեխնոլոգիաների միջոցով ստացված գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների (տեսակների) ներմուծման և կլիմայավարժեցման աշխատանքները.

5) թունաքիմիկատների օգտագործումը՝ բույսերի պաշտպանության նպատակով, ինչպես նաև հանքային պարարտանյութերի օգտագործումը.

6) էկոլոգիապես վնասակար, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված թույլատրելի նորմերը գերազանցող արտանետումների և կեղտաջրեր առաջացնող տեխնոլոգիաների օգտագործումը.

7) ռադիոակտիվ նյութերի և թափոնների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի համար վտանգավոր կամ թունավոր այլ նյութերի արտադրությունը, օգտագործումը, պահեստավորումը.

8) ընդերքի շահագործումը՝ պայթեցման միջոցով.

9) հանքանյութեր վերամշակող օբյեկտների տեղաբաշխումը.

10) ընդհանուր օգտագործման ճանապարհներից և ջրային ուղիներից դուրս շարժիչային և թրթուրավոր տրանսպորտային միջոցների երթևեկությունն ու կանգառը ճանապարհային ցանցի սահմաններից դուրս կամ դրա համար չնախատեսված վայրերում:

12. Պարկի տնտեսական գոտու տարածքում թույլատրվում են՝

1) էկոլոգիապես մաքուր մեթոդներով գյուղատնտեսական արտադրությունը.

2) տարածքին բնորոշ հազվագյուտ և արժեքավոր վայրի բույսերի ու կենդանիների վերարտադրությունը.

3) հանգստի և ճանաչողական զբոսաշրջության հետ կապված սպասարկման ծառայությունների կազմակերպումը.

4) պարկի ռեժիմով չարգելված արտադրության կազմակերպման նպատակով հողերի վարձակալությունը.

5) օրգանական պարարտանյութերի և բուսական ու կենդանական տեսակների վնասատուների և հիվանդությունների դեմ կենսաբանական ծագում ունեցող պայքարի միջոցների օգտագործումը.

6) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ընդերքի, ջրային, բուսական և կենդանական ռեսուրսների օգտագործումը, այդ թվում՝ արդյունագործական ձկնորսությունը.

7) բնական էկոհամակարգերի, կենսաբազմազանության, լանդշաֆտների, բնության ժառանգության, ինչպես նաև պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների գիտական ուսումնասիրությունները, հաշվառումը, գույքագրումը, մոնիթորինգը (այդ թվում՝ գյուղատնտեսական, արտադրության, զբոսաշրջիկների և այցելուների սպասարկման ծառայությունների մոնիթորինգը).

8) ուսումնական հաստատությունների կրթադաստիարակչական և ուսումնարտադրական պրակտիկաների անցկացումը.

9) ճանաչողական զբոսաշրջության կազմակերպումը.

10) սանիտարական և խնամքի հատումները.

11) տրանսպորտային միջոցների երթևեկությունն ընդհանուր օգտագործման ճանապարհներով և ջրային ուղիներով:

12) պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների հնագիտական ուսումնասիրությունները, վերականգնումը, նորոգումը և ամրակայումը:

13. Ազգային պարկի տարածքի օգտագործումը վճարովի է (բացառությամբ կրթադաստիարակչական միջոցառումների և գիտական ուսումնասիրությունների) և կատարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

14. Պարկի տարածքի վրա մարդածին ներգործությունը նվազեցնելու նպատակով սահմանվում է նաև պահպանման գոտի: «Արփի լիճ» ազգային պարկի պահպանման գոտում գտնվող համայնքների համար թույլատրելի գործունեությունը իր մեջ ներառում է խոտհունձը, անասունների արածեցումը, փեթակների և մեղվանոցների տեղադրումը, վայրի պտղի, սնկի, հատապտղի, դեղաբույսերի ու տեխնիկական հումքի հավաքումը և տնտեսական այնպիսի գործունեությունը, որը չի կարող սպառնալ «Արփի լիճ» ազգային պարկի և պահպանման գոտու տարածքների էկոհամակարգերի կայունությանը, բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների, գիտական կամ պատմամշակութային արժեք ունեցող օբյեկտների պահպանությանը:

3.1.2. «Արփի լիճ» ազգային պարկի արգելոցային գոտի

«Արփի լիճ» ազգային պարկի կանոնադրության համաձայն, արգելոցային գոտի մուտք գործելը և տարածքի օգտագործումը թույլատրվում է խիստ սահմանափակ գործունեության համար, քանի որ այն առանձնացվել է էկոհամակարգերի և կենսաբազմազանության պահպանության համար: Դրա օգտագործման թույլատրելի ձևերը՝ գիտական հետազոտություններն են, մոնիթորինգը, սահմանափակ ճանաչողական զբոսաշրջությունը և կրթադաստիարակչական գործունեությունը:

1. **Նպատակ.** Բնության պահպանության միջազգային միության (ԲՊՄՄ, IUCN) ազգային պարկերի արգելոցային գոտու մասին ուղեցույցի համաձայն, այս գոտու նպատակը յուրահատուկ էկոհամակարգերի կամ դրանց տարրերի պահպանությունն է մարդու ազդեցությունից: Արգելոցային գոտին իր մեջ պետք է ներառի պարկին բնորոշ էկոհամակարգերի մոդելային տարածքներ, որտեղ կա հարուստ կենսաբազմազանություն և պահպանության ռեժիմի կիրառման իրատեսական հնարավորություն: Ընդհանուր խնդիրը կայանում է կենսաբանական և լանդշաֆտային բազմազանության պահպանության, գիտական հետազոտությունների անցկացման, մոնիթորինգի իրականացման և էկոլոգիական կրթության ապահովման մեջ:

2. **Մարտավարության և կառավարման ուղեցույց.** «Արփի լիճ» ազգային պարկի ներառյալ՝ առանձին տեղամասերի արգելոցային գոտիներին վերաբերվող մարտավարության և կառավարման ուղեցույցի բաղադրիչները հետևյալն են.

- 1) գիտական հետազոտությունները իրականացվում են թույլտվության առկայության դեպքում,
- 2) գիտական գործունեությունը հաշվի է առնում արգելոցային գոտու էկոլոգիական ամբողջականությունը,
- 3) գիտական նպատակներով կենդանիների որսն ու բույսերի հավաքը իրականացվում են բացառիկ դեպքերում միայն «Արփի լիճ» ազգային պարկի, կամ

համապատասխան գիտական կազմակերպությունների եզրակացության և Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կողմից տրված հատուկ թույլտվության հիման վրա,

- 4) գիտական հետազոտությունների ավարտից հետո դրանց արդյունքերի կրկնօրինակները (անմշակ և մշակված տվյալները) տրամադրվում են «Արփի լիճ» ազգային պարկին,
- 5) պահպանման գոտու և արգելոցային գոտու միջև ընկած տարածքը մեծ մասամբ պետք է կրի բուժերային բնույթ:

3. Նկարագրություն. «Արփի լիճ» ազգային պարկի 9919.3 հա տարածք ունեցող արգելոցային գոտին բաղկացած է 3 մասից: Արևմտյան մասն ընդգրկում է «Արփի լիճ» ազգային պարկի արևմտյան մասում ընկած ամբողջ տարածքը՝ բացի 1 կմ լայնություն ունեցող հայ-թուրքական սահմանամերձ գոտուց: Այն պահպանում է Արփի լիճը, դրա վտակների կարևորագույն ջրհավաք ավազանները և կուսական տափաստանային լանդշաֆտները, որոնք չեն օգտագործվում արածեցման համար անցյալ դարի կեսերից՝ ռազմական սահմանամերձ գոտու ստեղծման պահից:

Արևմտյան արգելոցային գոտին (6428 հա) գտնվում է Եղնախաղի լեռնաշղթայի արևելյան լանջերի, ինչպես նաև Արփի լիճի երեք կղզիների վրա և սահմանակցում է «Արփի լիճ» ազգային պարկի տնտեսական գոտու հետ:

Արևելյան տեղամասի արգելոցային գոտին (3381.8 հա) գտնվում է Ջավախքի լեռնաշխթայի արևմտյան լանջերի վրա և սահմանակից է «Արփի լիճ» ազգային պարկի արևելյան տեղամասի տնտեսական գոտու հետ: Այն պահպանում է Ջավախքի լեռնաշղթայի արևմտյան լանջերից հոսող Ղուկասյան գետի վտակների վերին հոսանքի ջրհավաք տարածքները: Տեղամասը ծածկված է լեռնային տափաստաններով, որոնք ենթարկվել են անասունների արածեցման և մարդածին գործունեության այլ տեսակի ազդեցությանը: Այս գոտու սահմանները հյուսիսում անցնում են հայ-վրացական պետական սահմանով, արևելքում՝ Ջավախքի լեռնաշղթայի ջրբաժանով, իսկ արևմուտքում Ղազանչի, Մեծ Սեպասար, Սիզավետ և Սարագյուղ համայնքների վարչական տարածքներում գտվող ազգային պարկի տնտեսական գոտու սահմանագրերով: «Արփի լիճ» ազգային պարկի երրորդ արգելոցային գոտին գտնվում է «Ավար» տեղամասում (109.5 հա) և սահմանակից է «Արփի լիճ» ազգային պարկի տնտեսական գոտու հետ հարավում, իսկ մնացած ուղղություններով պահպանման գոտու հետ:

3.1.3. Արփի լիճ» ազգային պարկի ռեկրեացիոն գոտի

1. **Նպատակ.** «Արփի լիճ» ազգային պարկի ռեկրեացիոն գոտու նպատակը և խնդիրները շեշտը դնում են «Արփի լիճ» ազգային պարկի տարածքում տուրիզմի զարգացման և տուրիզմի համար բարենպաստ պայմանների ստեղծման վրա:

2. **Մարտավարության և կառավարման ուղեցույց.**

Ռեկրեացիոն գոտու այցելուների համար գործում է հատուկ կանոնակարգ, որը թրուցիկների տեսքով անվճար բաժանվելու է այցելուներին:

«Արփի լիճ» ազգային պարկի համար նախատեսված տուրիստական կանոնակարգը հետևյալն է.

- 1) «Արփի լիճ» ազգային պարկի սահմանների մեջ չպետք է լինեն տուրիստական ենթակառուցվածքներ, բացառությամբ ռեկրեացիոն գոտում գտնվող ճամբարակայաններից,
- 2) «Արփի լիճ» ազգային պարկի արգելոցային գոտու տարածք մուտք գործելու համար այցելուները պետք է ունենան «Արփի լիճ» ազգային պարկի կողմից տրված հատուկ թույլտվություն,
- 3) գիշերանցը «Արփի լիճ» ազգային պարկի արգելոցային գոտում արգելվում է,
- 4) այցելուները կարող են մտնել ռեկրեացիոն և տնտեսական գոտի՝ առանց ուղեկցողի ծառայության և թույլտվության,
- 5) հնարավորություն է ստեղծվելու օգտվել պահպանման գոտու բնակիչներից ընտրված ուղեկցողի ծառայություններից,
- 6) տուրիստական օպերատորները պետք է հետևեն կանոններին և կանոնակարգին, որոնք ներառվելու է «Արփի լիճ» ազգային պարկի տնօրինության հետ ստորագրված պայմանագրերի մեջ,
- 7) այցելություններին վերաբերող աշխատանքները մոնիթորինգի առարկա են հանդիսանում:

3. Նկարագրություն. «Արփի լիճ» ազգային պարկի ռեկրեացիոն գոտին (452.2 հա) գտնվում է Արփի լիճի արևմտյան տեղամասում, որը սահմանակցում է հյուսիսում, հարավում, արևմուտքում և արևելքում տնտեսական գոտու սահմանի հետ, ինչպես նաև «Ախուրյանի կիրճ» և «Արդենիս» տեղամասերում, սահմանակցելով պահպանման գոտու հետ:

4. «Ախուրյանի կիրճ» տեղամասի ռեկրեացիոն գոտի

«Ախուրյանի կիրճ» տեղամասը գտնվում է Աշոցքի սարահարթի հարավային մուտքի մերձակայքում: Կիրճը հանդիսանում է որպես յուրահատուկ բնապահպանական տարածք, որի պահպանությունը իրականացվում է «Արփի լիճ» ազգային պարկի կանոնադրության և կառավարման պլանի համաձայն:

5. Նպատակ. «Ախուրյանի կիրճ» տեղամասի ստեղծման հիմնական նպատակը Ախուրյանի կիրճի յուրահատուկ էկոլոգիական համակարգի պահպանությունն է, որը պայմանավորված է երկրաբանական, երկրաձևաբանական և միկրոկլիմայական պրոցեսներով, ինչպես նաև էկոտուրիզմի պոտենցիալ հնարավորություններով զարգացումը: Կիրճի բուսական և կենդանական աշխարհը հարուստ է հազվագյուտ, էնդեմիկ և անհետացման եզրին գտնվող տեսակներով, որոնք չեն բնակվում Աշոցքի սարահարթի այլ տեղերում: Տեղամասի հիմնական խնդիրը այդ առանձնահատուկ էկոհամակարգերի սահմանազատումն ու աճող մարդածին բացասական ազդեցությունից /զերարածեցման, խոտհունձ և այլն / պահպանումն է և էկոտուրիզմի զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը:

6. Մարտավարություն և կառավարման ուղեցույց. Անասունների արածեցումը թույլատրվում է կանոնակարգված և հսկողության պայմաններում «Արփի լիճ» ազգային պարկի տնօրինության և համապատասխան համայնքների միջև ստորագրված պայմանագրերի շրջանակներում: Մյուս պայմանները հետևյալն են.

- 1) արգելել տնային կենդանիների համատարած մուտքը դեպի Ախուրյան գետը՝ առանձնացնելով դրա համար հատուկ անցուղիներ և ստեղծելով ջրարբիացման կետեր:
- 2) կանոնակարգել անասունների անցումը Ախուրյանի կիրճով անցնող ճանապարհի վրա, կիրճում անասունի արածեցումը սկսել մայիսի 15-ից ոչ շուտ և կազմակերպել հետևյալ կերպով.
 - ա. արածեցման առաջին փուլ. 35 օր, մայիսի 15-ից հունիսի 20-ը,
 - բ. երկրորդ փուլ. առաջին փուլից 20-օրյա հանգստից հետո՝ հուլիսի 10-ից հուլիսի 20-ը,
 - գ. երրորդ փուլ. երկրորդ փուլից 15-օրյա հանգստից հետո՝ օգոստոսի 15-ից սեպտեմբերի 15-ը,
 - դ. բոլոր անասունները պետք է տեղամասից դուրս բերվեն մինչև սեպտեմբերի 30-ը.
- 3) խստորեն հետևել կիրճում գտնվող հողերի կարողությունների ցուցանիշներին: Նույնը վերաբերվում է «Արփի լիճ» ազգային պարկի ռեկրեացիոն գոտու ռեժիմին,
- 4) խստորեն պահպանել տեղամասին բնորոշ ռելիեֆային կաղամախու անտառները և արգելել անասունների արածեցումն այս տարածքում,
- 5) գյուղապետերի և հովիվների հետ միասին սահմանել Ախուրյանի կիրճում անասունների արածեցման համար նախատեսված հիմնական վայրերը՝ արածեցումից վնասը նվազագույնի հասցնելու համար,
- 6) արգելել ենթակառուցվածքի (հիդրոէլեկտրոկայաններ, շենքեր, խողովակաշարեր, փոխանցման գծեր, ճանապարհներ, պատվարներ և այլն) շինարարությունը,
- 7) խողովակաշարերի և այլ ենթակառուցվածքների ցանկացած վերանորոգման աշխատանքներն իրականացնել միայն «Արփի լիճ» ազգային պարկի տնօրինության կողմից տրված թույլտվության դեպքում,
- 8) երթևեկության միջոցների շարժը կիրճի ճանապարհով թույլատրել միայն «Արփի լիճ» ազգային պարկի կողմից տրված թույլտվության դեպքում,
- 9) կիրճում ճանապարհը փակել ուղեփակոցով և հսկողությունը իրականացնել պարկի աշխատակիցների միջոցով,
- 10) կիրճում ռեսուրսների (բացի ջրից) ձեռնարկատիրական օգտագործումը թույլատրել խիստ սահմանափակ քանակով և հսկողության տակ,
- 11) օգտագործել օրգանական պարարտանյութերը տեղամասի տափաստաններում միայն «Արփի լիճ» ազգային պարկի կողմից տրված թույլտվությամբ: Արգելել անօրգանական պարարտանյութերի և պեստիցիդների օգտագործումը,
- 12) ծառերի սանիտարական հատումը պետք է իրականացվի միայն «Արփի լիճ» ազգային պարկի կողմից տրված թույլտվությամբ,
- 13) անտառօգտագործումը պետք է իրականացվի միայն «Արփի լիճ» ազգային պարկի տնօրինության կողմից տրված թույլտվության հիման վրա,
- 14) իրականացնել կիրճում նախատեսված մոնիթորինգային աշխատանքները ըստ «Արփի լիճ» ազգային պարկի մոնիթորինգի ծրագրի և տարեկան աշխատանքային պլանի,

- 15) իրականացնել տուրիստական գործունեությունն ըստ ռեկրեացիոն գոտու տուրիստական ծրագրի: Տուրիստական գործունեությունը կարող է լինել հետևյալ ձևերի. հետիոտն տուրիզմ, դիտումներ, թռչնադիտում (bird-watching), դահուկային և լեռնային հեծանիվներով երթ: Թույլատրվում է մեկ ճամբարակայանի պատրաստումը, ինչպես նշված է «Արփի լիճ» ազգային պարկի ռեկրեացիոն և պահպանման գոտում տուրիզմի կառավարման ծրագրում,
- 16) սահմանված կարգով կազմակերպել սիրողական ձկնորսություն տեղամասի տարածքում,
- 17) անցկացնել դասընթացներ՝ տեղամասի տարածքն օգտագործող հովիվների համար:

3.1.4. «Արփի լիճ» ազգային պարկի տնտեսական գոտի

1. **Նպատակ.** «Արփի լիճ» ազգային պարկի տնտեսական գոտու նպատակը և խնդիրները շեշտը դնում են «Արփի լիճ» ազգային պարկի հողերի բավարար չափով հսկվող և կարգավորվող ավանդական օգտագործման վրա՝ տնտեսական գոտու սահմաններում: «Ավանդական օգտագործում» տերմինը նշանակում է այն «պատմական օգտագործումը», որը տեղի է ունեցել մինչև «Արփի լիճ» ազգային պարկի ստեղծումը և տեղական բնակչության ապրելակերպի անբաժան մաս է կազմում:

2. Ազգային պարկերում ավանդական օգտագործման բացասական ազդեցությունը հաճախ հանդիսանում է սոցիալ-մշակութային և սոցիալ-տնտեսական ավանդական ապրելաձևերի քայքայման արդյունք: Այդպես է եղել նաև «Արփի լիճ» ազգային պարկի դեպքում, երբ ԽՍՀՄ-ի փլուզումից հետո անասունի ավելցուկն ու համայնքային հողերի վրա անասունների անվերահսկելի արածեցումը հանգեցրել են գերարածացման և հողերի էրոզիայի: Այս պայմաններում ավանդական եղանակների շարունակական օգտագործումը կարելի է կիրառել միայն հետևյալ դեպքերում.

- 1) օգտագործման նման եղանակների լիակատար արգելքը տեղի բնակչության համար կհանգեցնի լուրջ տնտեսական խնդիրների,
- 2) օգտագործման ավանդական մեթոդները կարելի է վերականգնել առանց շրջակա միջավայրը վնասելու,
- 3) պարկի սահմաններից դուրս ընդունելի այլընտրանք չկա:

3. **Մարտավարության և կառավարման ուղեցույց.** Պահպանման գոտու 19 համայնքներից 12-ը ունեն տարածքներ, որոնք ընդգրկված են «Արփի լիճ» ազգային պարկի տնտեսական գոտում՝ պարկի արևմտյան և արևելյան տեղամասերում:

4. **Նկարագրություն.** «Արփի լիճ» ազգային պարկի տնտեսական գոտին (10807.6 հա) գտնվում է «Արփի լիճ» ազգային պարկի արևմտյան և արևելյան տեղամասերում ինչպես նաև «Ալվար» և «Արդենիս» տեղամասերում և սահմանակցում է արևմտյան տեղամասի արևմուտքում՝ արգելոցային գոտու հետ, հյուսիսում՝ հայ-վրացական սահմանի հետ, հարավում և արևելքում՝ պահպանման գոտու հետ, իսկ արևելյան տեղամասի հյուսիսում՝

հայ-վրացական սահմանի հետ, արևելքում՝ արգելոցային գոտու հետ, հարավում և արևմուտքում՝ պահպանման գոտու հետ:

Խոնավ տարածքների կառավարում

Արփի լիճի կառավարում

1. **Նպատակ.** Արփի լիճ՝ որպես գրանցված Ռամսարի տարածքի պահպանությունը շատ անհրաժեշտ է դրա բուսական և կենդանական աշխարհի պահպանության համար: Լիճը հանդիսանում է միջազգային կարևորության օբյեկտ, հանգստյան վայր՝ աշնանային և գարնանային շրջանում չվող թռչունների համար և բազմացման վայր՝ գանգրափետուր հավալուսնի (Հայաստանում բնադրվում է միայն այստեղ) և էնդեմիկ արծաթափայլ հայկական որորի համար: Այս տեսակների բազմացող գաղութները բնակվում են լճի երկու ժայռոտ կղզյակների վրա (8 և 4 հա):

2. Պատվարման արդյունքում Արփի լճի չափերը և խորությունը երեք անգամ ավելացել են: Ջրի մակարդակի փոփոխությունը, անվերահսկելի ձկնորսությունը և էկզոտիկ տեսակների կլիմայավարժեցումը բացասական ազդեցություն են ունեցել լճի խոցելի միջավայրի վրա:

3. Լճի պահպանության հիմնական խնդիրներն են.

- 1) լճի և դրա ափամերձ միջավայրի պահպանությունը,
- 2) լճի ջրի որակի ապահովումը,
- 3) ջրի օգտագործման կանոնակարգումը,
- 4) լճի բնական ռեսուրսների օգտագործման և տարածքի ռեկրեացիոն զարգացման արդյունավետ մարտավարությունն ու կառավարումը:

4. Մարտավարության և կառավարման ուղեցույց. «Արփի լիճ» ազգային պարկի լճի կառավարման ուղեցույցի բաղադրամասերը հետևյալն են.

- 1) պահպանել լճի և վտակների ջրհավաք ավազանները՝ անասունների արածեցման կանոնակարգման և համայնքային հովիվների բնապահպանական ուսուցման միջոցով,
- 2) կանխարգելել լճում նստվածքի առաջացում՝ ջրհավաք ավազանում էրոզիայի կառավարման միջոցով,
- 3) լճի ափամերձ գոտու պահպանություն՝ 30 մ լայնություն ունեցող լիճն օղակող անասուններից ազատ գոտու, անասունների համար ջրարբիացման կետերի ստեղծման միջոցով,
- 4) արգելել լճում շարժիչավոր նավակների օգտագործումը, բացառությամբ «Արփի լիճ» ազգային պարկի տեսուչների համար նախատեսածների,
- 5) օգտագործել ոչ շարժիչավոր նավակներ միայն «Արփի լիճ» ազգային պարկի կողմից տրված հատուկ թույլտվությամբ,
- 6) արգելել մարդկանց մուտքը լճի երկու կղզյակներ, բացառությամբ գիտնականներից՝ «Արփի լիճ» ազգային պարկի թույլտվությամբ:
- 7) օգտագործել լողաններ այս կղզյակների շուրջը արգելոցային գոտու սահմանազատման համար,
- 8) ստեղծել երկու պաշտոնական մուտքի կետեր՝ Պաղակն և Շաղիկ գյուղերում, որտեղ կլինեն բետոնե կառանատեղեր նավակների համար,

9) մուտքի կետերը պահպանվելու են և սպասարկվելու են «Արփի լիճ» ազգային պարկի կողմից՝ ափամերձ համայնքների հետ միասին Փոխըմբռնման հուշագրի շրջանակներում:

5. Ձկնորսության կառավարման ուղեցույցը հետևյալն է.

- 1) ձեռնարկատիրական/արդյունագործական ձկնորսությունը արգելվելու է երկու տարով,
- 2) բավարար չափով վերահսկվող արդյունագործական ձկնորսությունը հնարավոր է միայն ձկնատեսակների պոպուլյացիաների վերականգնումից հետո,
- 3) ձեռնարկատիրական ձկնորսության լիցենզիաները պարունակելու են տեղեկատվություն որսի սահմանված նորմաների (քվոտաների) մասին՝ ըստ երկու տարի մեկ իրականացվող գույքագրման և հաշվառման արդյունքների, ինչի համար ԱԼԱՊ-ը կստորագրի պայմանագիր մասնագիտացված կազմակերպության հետ,
- 4) ձեռնարկատիրական ձկնորսության թույլտվությունների տրման նախապատվությունը տրվելու է տեղական պահպանման գոտու բնակիչներին ,
- 5) ցանցի անցքը պետք է ունենա 4 սմ-ից ոչ պակաս տրամագիծ,
- 6) ձեռնարկատիրական ձկնորսությունը իրականացվելու է միայն թիավոր նավակներով օգոստոսի 30-ից մինչև հոկտեմբերի 30-ը՝ սպորտային ձկնորսների և մյուս այցելուների միջև տարածայնություններից խուսափելու համար, ինչպես նաև նվազեցվի բացասական ազդեցությունը այդ ժամանակաշրջանում բազմացող ձկնակեր թռչունների վրա,
- 7) սիրողական ձկնորսությունը թույլատրվում է ամբողջ տարվա ընդացքում համապատասխան թույլտվության հիման վրա, ,
- 8) թույլտվությունը պարունակելու է տեղեկություն որսի նորմաների, սարքավորումների և հանդերձանքի նկարագրությունների, ինչպես նաև այլ պայմանների ու սահմանափակումների մասին,
- 9) սիրողական ձկնորսությունը ԱԼԱՊ անձնակազմի կողմից պարբերաբար մոնիթորինգի առարկա են հանդիսանում ա :

6. Արփի լճի կառավարմանը վերաբերվող այլ պայմաններն են..

- 1) պետք է ստեղծել և իրագործել ջրի որակի, քանակի և տեղաբաշխման մոնիթորինգի համակարգը,
- 2) պետք է իրականացնել ձկան պաշարների և սնման շղթաների, չվող թռչունների և հատկապես՝ գանգրափետուր հավալուսնի և արծաթափայլ հայկական որորի բազմացող պոպուլյացիաների մոնիթորինգը՝ «Արփի լիճ» ազգային պարկի հետազոտությունների և մոնիթորինգի ծրագրի շրջանակներում,
- 3) արգելվում է շինություն կառուցել լճի ջրի 30մ-ից մոտ ընկած տարածքում,
- 4) լիճը շրջապատող անտառները օգտագործվելու են միայն ռեկրեացիոն նպատակներով և ոչ մի տեսակի հատման ենթակա չեն, ԱԼԱՊ-ի նպատակների համար կարող են իրականացվել անտառվերականգման աշխատանքներ,
- 5) լճի ափամերձ գյուղերից կոյուղային թափոնների հեռացումը կլինի պահպանման գոտու զարգացման ծրագրի առաջնահերթ խմբի շրջանակում,
- 6) պատվարի մոտ գտնվող ջրի մոնիթորինգի կայանը պետք է վերականգնվի՝ լճից ջրի հեռացման չափումների հուսալիությունը ապահովելու համար (լճի էկոհամակարգի

պահպանման համար անհրաժեշտ նվազագույն ծավալը հաստատվել է 5 մլն մ³ մակարդակի վրա),

- 7) լճից և վտակներից ջրի հեռացումը՝ էներգետիկ և առևտրային նպատակների համար պահանջելու է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) իրականացում և «Արփի լիճ» ազգային պարկի կողմից հաստատում:

7. Նկարագրություն. Արփի լիճը գտնվում է «Արփի լիճ» ազգային պարկի արևմտյան մասում: Լիճն օղակող 30 մ լայնությամբ բուֆերային գոտին փակ է անասունների համար և սահմանակցում է «Արփի լիճ» ազգային պարկի պահպանման և տնտեսական գոտիների հետ: Արփի լիճը տեկտոնահրաբխային ծագում ունի և դրա հատակը ծածկված է ջրաբերուկային նստվածքներով: Ժայռոտ ելուստները լճի ափերին և կղզյակների վրա կազմված են անդեզիտներից: Հիմնական գետակները, որոնք արգելոցային և պահպանման գոտիներով հոսում են դեպի լիճը, հետևյալն են. Կարմրաջուր, Կատարաջուր, Եղնաջուր, Ծաղկուտ, Ձորակերտ և Բազիրխան: Արփի լիճը սահմանակցում է Շաղիկ, Գառնալիճ, Ծաղկուտ, Ձորակերտ և Պաղակն համայնքների հետ (քարտեզ 6):

«Ալվար» և «Արդենիս» տեղամասերի խոնավ տարածքների կառավարում

8. Նկարագրություն. «Ալվար» տեղամասը գտնվում է Ախուրյան գետի երկայնքով՝ Արփի լճի պատվարից մոտավորապես 12 կմ հոսանքն ի վայր:

«Արդենիս» տեղամասը գտնվում է ռելիեֆի իջեցման պատճառով ձևավորված Արդենիս լճից դեպի հարավ: Երկու տեղամասի տեղադիրքը ցույց է տրված կառավարման պլանի Քարտեզ 1-ում:

9. Նպատակ. Այս երկու խոնավ տարածքները, որպես Ռամսարի տարածք, մտնում են Արփի լճի կազմի մեջ և այսպիսով հանդիսանում են միջազգային նշանակության օբյեկտներ՝ որպես ապրելավայրեր ջրլող թռչունների ու չվող թռչունների համար և բնադրման վայրեր՝ հազվագյուտ և անհետացման եզրին գտնվող մի շարք տեսակների համար: Հիմնական խնդիրը հետևյալն է. պահպանել այս խոցելի խոնավ տարածքներն և թռչունների բնադրման վայրերը՝ հողերի և այլ ռեսուրսների անկայուն օգտագործման ազդեցություններից:

10. Մարտավարություն և կառավարման ուղեցույց. Նշված տեղամասերում մարտավարությունը և կառավարման ուղեցույցը ներառում է հետևյալ սկզբունքները.

- 1) ապահովել ջրի նվազագույն հոսքը դեպի Ախուրյան գետը, իսկ չոր սեզոնին ջրանցքից ջուր բաց թողնել գետի բավարար հոսքը ապահովելու համար,
- 2) խոտհունձը սկսել օգոստոսի 15-ից հետո,
- 3) հողերի վարձակալման հետ կապված փոխհարաբերությունները պետք է համապատասխանեն «Արփի լիճ» ազգային պարկի տնտեսական գոտուն վերաբերվող կանոնակարգին:
- 4) խոտհունձի մեքենաները պետք է ունենան միայն ռետինե անիվներ, իսկ տրակտորտային միջոցները լինեն թեթև: Լճկան սարքավորումների օգտագործումը ավելի նախընտրելի է՝ գազով կամ դիզելով աշխատող տրանսպորտային միջոցների հետ համեմատ,

- 5) նվազագույնի պետք է հասցնել ընտանի կենդանիների անմիջական մուտքը լճերի ափամերձ տարածք,
- 6) դադարեցնել անասնապահության թափոնների և արտանետումների հոսքը Արդենիս գետակից դեպի «Արդենիս» տեղամաս,
- 7) կատարելագործել վարձակալման փոխհարաբերությունները «Արդենիս» տեղամասում,
- 8) պետք է իրականացնել «Արփի լիճ» ազգային պարկի մոնիթորինգի ծրագրի մեջ ընդգրկված բուսականության մոնիթորինգ:

3.1.5. «Արփի լիճ» ազգային պարկի պահպանման գոտի

1. Նպատակ. «Արփի լիճ» ազգային պարկի պահպանման գոտու ստեղծման հիմնական նպատակը այնպիսի տնտեսական գործունեության արգելքն է, որը կարող է սպառնալ այդ տարածքների /ԱՊ/ էկոհամակարգերի կայունությանը, բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների, բնական կամ պատմամշակութային արժեք ունեցող օբյեկտների պահպանությանը:

2. «Արփի լիճ» ազգային պարկի պահպանման գոտու հիմնական խնդիրներն են.

- 1) ստանալ տեղական բնակչության աջակցությունը պահպանվող տարածքի կայուն պահպանության գործում,
- 2) էկոլոգիական կրթության և իրազեկության բարձրացման համար «Արփի լիճ» ազգային պարկում ստեղծվող հզորությունների օգտագործումը:
- 3) Պահպանման գոտու տնտեսական զարգացումը պետք է համապատասխանի «Արփի լիճ» ազգային պարկի բնապահպանական նպատակներին և կազմի բնապահպանական գործընթացի անբաժանելի մասը:

3. Մարտավարություն և կառավարման ուղեցույց. Պահպանման գոտու մարտավարությունը և կառավարման ուղեցույցը կազմված է հետևյալ բաղադրամասերից.

- 1) տնտեսական զարգացումը, հողերի ու ռեսուրսների օգտագործումը պետք է չհակասեն «Արփի լիճ» ազգային պարկի բնապահպանական նպատակներին,
- 2) պահպանման գոտու բնակչությանը տրամադրել ավանդական օգտագործման հնարավորություններ՝ «Արփի լիճ» ազգային պարկի տնտեսական գոտում աշխատելու համար,
- 3) աջակցել ԱԼԱՊ-ի պահպանման գոտու բնակչությանը իրենց սոցիալ տնտեսական զարգացման մեջ,
- 4) ապահովել «Արփի լիճ» ազգային պարկի համակառավարումը «Արփի լիճ» ազգային պարկի տնօրենի և պահպանման գոտու համայնքների կողմից՝ «Արփի լիճ» ազգային պարկի կառավարման խորհրդի միջոցով:

4. Նկարագրություն. Բոլոր համայնքները, որոնք սահմանակից են «Արփի լիճ» ազգային պարկի հետ, ընդգրկված են «Արփի լիճ» ազգային պարկի պահպանման գոտում (19 համայնքներ): Պահպանման գոտին ունի 35448.8 հա տարածք:

3.1.6. Տարածքների օգտագործման և միջոցառումների սխեմա

1. «Արփի լիճ» ազգային պարկի տարածքի օգտագործման/ձեռնարկատիրական գործունեության/ տեսակները սահմանված են «Արփի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կանոնադրության մեջ: Դրանք են՝

1) կենսառեսուրսների, այդ թվում բույսերի և կենդանիների տեսակների, անտառային ռեսուրսների վերարտադրություն, օգտագործում և իրացում.

2) ճանաչողական զբոսաշրջության կազմակերպում.

3) կողմնակի անտառօգտագործում/խոտհունձ,անասունների արածեցում, փեթակների և մեղվանոցների տեղադրում, վայրի պտղի, ընկույզի, սնկի, հատապտղի, դեղաբույսերի ու տեխնիկական հումքի հավաքում/ և դրա արդյունքում մթերված կենսապաշարների վերամշակում ու իրացում.

4) գյուղատնտեսական մթերքների արտադրություն, վերամշակում և իրացում.

5) հանգստի և ճանաչողական զբոսաշրջության հետ կապված սպասարկման ծառայությունների մատուցում.

6) «Արփի լիճ» ազգային պարկին վերաբերող գովազդի կազմակերպում.

7) գիտական, գիտաճանաչողական գրականության և տեղեկատվական նյութերի պատրաստում ու հրատարակում:

ԳԼՈՒԽ IV. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

4.1. Կառավարման ծրագիր

1. Սույն բաժինը կազմված է 5 կառավարման ծրագրերից, որոնք կնպաստեն աշխատանքային պլանների, միջոցառումների ցանկերի և բյուջեների մշակմանը՝ ըստ «Արփի լիճ» ազգային պարկի տեսլականի: Կառավարման պլանի համար ընտրվել են հետևյալ կառավարման ծրագրերը.

1) Վարչական ծրագիր

ա. Տնօրենություն

բ. Հաշվետվության և ֆինանսների ենթաբաժին

գ. Մատակարարման և տեխնիկական սպասարկման ենթաբաժին

դ. Մարդկային ռեսուրսների ենթաբաժին

2) Տնտեսական գործունեության և մարկետինգի ծրագիր

3) Պահպանության ծրագիր

4) Տուրիզմ, էկոլոգիական իրազեկություն և հասարակայնության հետ կապերի ծրագիր

5) Գիտական և մոնիթորինգի ծրագիր

4.1.1. Ազգային պարկի վարչական ծրագիր

1. «Արփի լիճ» ազգային պարկի կառավարումը պետք է իրականացվի «Արփի լիճ» ազգային պարկի տնօրինության և կառավարման խորհրդի կողմից, որի մեջ լիարժեք ներկայացված կլինի «Արփի լիճ» ազգային պարկի կարևոր շահագրգիռ կողմը՝ պահպանման գոտու համայնքները: Դա պատշաճ ձևով դիտարկվում է կիրառելի պարկի բոլոր տարածքների համար, բացի արգելոցային գոտուց:

2. «Արփի լիճ» ազգային պարկի կառավարման խորհրդի կազմի մեջ մտնելու են «Արփի լիճ» ազգային պարկի տնօրենը, «Արփի լիճ» ազգային պարկի երկու փոխտնօրենները, և մեկական ներկայացուցիչ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությունից, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունից, Շիրակի մարզպետարանից, տեղական հասարակական կազմակերպությունների ֆորումից և պահպանման գոտու համայնքներից: 3. «Արփի լիճ» ազգային պարկի անձնակազմի, Հայաստանի Հանրապետության Բնապահպանության նախարարության, մարզպետարանի ներկայացուցիչները լինելու են խորհրդի մշտական անդամներ, իսկ մնացած մասնակիցները՝ ընտրովի: Համայնքների ներկայացուցիչները կառաջադրվեն համապատասխան համայնքների կողմից:

4. «Արփի լիճ» ազգային պարկի կառավարման խորհրդի հիմնական պարտականությունները հետևյալն են.

- 1) աջակցել և հետադարձ կապ ապահովել ԱԼԱՊ-ի և պահպանման գոտու համայնքների միջև,
- 2) քննարկել և հնարավորությունների չափով լուծել պահպանման գոտում և ԱԼԱՊ-ի տնտեսական գոտում արկա խնդիրները
- 3) քննարկել պահպանման գոտու զարգացման արկա և հեռանկարային պլանները և աշխատանքները,
- 4) որոշել «Արփի լիճ» ազգային պարկի և հասարակական կազմակերպությունների միջև պոտենցիալ համագործակցության ոլորտները

5. Նախագահը խորհրդին նախապես հայտնում է խորհրդի անդամների վերընտրման օրվա մասին: Նախագահի պարտականությունները իրենց մեջ ներառում են.

- 1) խորհրդի ամենամյա նիստերի կազմակերպումն ու անցկացումը
- 2) նիստերի օրակարգի մշակումը, պատրաստումն և բաժանումը խորհրդի անդամների մեջ նիստի օրվանից մեկ շաբաթ առաջ
- 3) խորհրդի նիստերի ղեկավարումը

Չնախատեսված իրավիճակների դեպքում նախագահը կամ նրա ներկայացուցիչը կարող են կազմակերպել լրացուցիչ նիստեր:

6. Պահպանման գոտու ներկայացուցիչների կամ «Արփի լիճ» ազգային պարկի այլ շահագրգիռ կողմերի բոլոր բողոքները պահանջում են խնդրի գրավոր նկարագրությունն և ներկայացումը կառավարման խորհրդի նիստի ժամանակ: Խորհուրդը վերջնական պատասխանատվություն է կրում տարածայնությունների կարգավորման համար և կարող է օգնություն խնդրել Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությունից:

Նիստերին իրար ետևից 3 անգամ բացակայելու դեպքում խորհրդի ընտրված անդամները մեխանիկորեն հեռացվելու են: Ցանկացած այլ դեպքերում (օրինակ՝ անվայել պահվածք)

խորհուրդը կարող է բարձրացնել հեռացման հարցը ընդհանուր քվեարկությամբ և որոշումը կայացնել ձայների մեծամասնությամբ: Եթե «Արփի լիճ» ազգային պարկի տնօրենը չի կատարում իր պարտականությունները, խորհուրդը դրա մասին գրավոր տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությանը:

7. «Արփի լիճ» ազգային պարկի կառավարման խորհուրդը պահպանում է կապը Վրաստանի «Ջավախեթի» ազգային պարկի և նրա կառավարման խորհուրդի հետ:

8. «Արփի լիճ» ազգային պարկը գլխավորում է տնօրենը, որը նշանակվում են Հայաստանի Հանրապետության Բնապահպանության նախարարության կողմից:

9. Վարչական ծրագիրը գտնվում է տնօրենի ենթակայության տակ: Պահպանության ծրագիրը գտնվում է պահպանության գծով փոխտնօրենի ենթակայության տակ: Գիտություն և մոնիթորինգի բաժինը գտնվում է գիտական գծով փոխտնօրենի ենթակայության տակ: Տուրիզմ/էկոլոգիական իրազեկություն, հասարակայնության հետ կապերի բաժինը ղեկավարվում է բաժնի վարիչի կողմից: Արփի լճի ռեսուրսների օգտագործման ծրագրերը՝ գտնվում են մարկետինգի ծրագրի/բաժնի ղեկավարի ենթակայության տակ: Այսպիսով, «Արփի լիճ» ազգային պարկի անձնակազմի մեջ մտնում են 5 ծրագիր/բաժին:

10. Տնօրենի անմիջական ենթակայության տակ գտնվում են՝ փոխտնօրենները, հաշվապահը, գանձապահը, կադրերի պատասխանատուն, ինժեներ մեխանիկը, պահեստապետ-պարետը:

11. Պահպանության ծրագրի ղեկավարը պատասխանատու է «Արփի լիճ» ազգային պարկի բոլոր տեղամասերի պետերի և տեսուչների գործունեությունը համակարգելու համար:

12. «Արփի լիճ» ազգային պարկի տնօրինությունը աշխատելու է «Արփի լիճ» ազգային պարկի կառավարման խորհրդի և Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության ենթակայության տակ: Այն պատասխանատու է լինելու պարկում անցկացվող ամենօրյա աշխատանքների համար և ընդհանուր բնապահպանական և կառավարման գործունեության համար՝ ըստ կառավարման պլանի, բիզնես պլանի և տարեկան աշխատանքային պլանների: Առավել մանրամասն, «Արփի լիճ» ազգային պարկի տնօրենի գործառույթները հետևյալն են.

- 1) մշակել տարեկան աշխատանքային պլաններ և բյուջեներ՝ ամեն կառավարման ծրագրի համար
- 2) պատասխանատվություն կրել աշխատանքային պլանի, ծրագրային աշխատանքների, դրանց կանոնավոր համապատասխանեցման և ազգեղության մոնիթորինգի իրականացման համար
- 3) «Արփի լիճ» ազգային պարկի կողմից վաստակած բոլոր եկամուտները պահել «Արփի լիճ» ազգային պարկի ֆոնդում և օգտագործել պարկի կանոնադրական խնդիրները լուծելու համար:

4.1.2. «Արփի լիճ» ազգային պարկի անձնակազմի որակավորման բարձրացում

1. Հայտնի է, որ անձնակազմի շահագրգռվածության հիմնական տարրերն են համարվում.

ա) յուրաքանչյուր պաշտոնի համար պարտականությունների և աշխատանքի հստակ ներկայացում,

բ) մասնագիտական աճի հնարավորություն,

գ) աշխատավարձի գրավիչ չափս և ֆինանսական խթանման մեխանիզմներ:
«Արփի լիճ» ազգային պարկի տնօրենի պարտականությունների մեջ է մտնում անձնակազմի հետ միասին հստակ աշխատանքային գործառույթների մշակումն և մասնագիտական աճի հնարավորության քննարկումը: Պետք է մշակվի աշխատակիցների արդյունավետ աշխատանքի հիման վրա խրախուսման համակարգ, որը աշխատելու է այնքան ժամանակ, մինչև աշխատավարձերը պաշտոնապես չդառնան բավականաչափ բարձր:

Որպես մասնագիտական աճի մի մաս յուրաքանչյուր աշխատակցին որակավորման բարձրացման հնարավորություն է տրվում: Նախապատվությունը տրվելու է աշխատատեղում իրականացվող դասընթացներին: Այն առանձին հմտությունները, որոնք հնարավոր չի լինի տեղում սովորել, ձեռք կբերվեն ուսուցման տեսքով «Արփի լիճ» ազգային պարկի շրջանակներից դուրս: Աշխատատեղում իրականացվող դասընթացները առաջարկվելու են «Արփի լիճ» ազգային պարկի անձնակազմի բոլոր անդամներին: Ավագ անձնակազմը հնարավորություն կունենա պարբերաբար մասնակցելու սեմինարներին՝ կարիերայի աճի և աշխատանքի որակը բարձրացնելու համար: Ուսուցման ծրագիրը կազմակերպվելու է ֆինանսական միջոցների մատչելիությունից ելնելով: Նման ուսուցման արդյունավետությունը ամեն տարի ենթարկվելու է մոնիթորինգի և գնահատմանը:

«Արփի լիճ» ազգային պարկի տնօրենի և ավագ անձնակազմի պարտականությունների մեջ մտնում է նաև ամենամյա ուսուցման դասընթացներին «Արփի լիճ» ազգային պարկի ողջ անձնակազմի գրանցումը: Նման ուսուցման բյուջեն մտնելու է պարկի տարեկան բյուջեի մեջ: Ուսուցման կուրսերի գրանցումը պետք է հաստատվի «Արփի լիճ» ազգային պարկի կառավարման խարհրդի կողմից: Պարկի տեսուչները անցնելու են բազային 14 օրվա, ուսուցողական դասընթացներ՝ «Արփի լիճ» ազգային պարկի գլխավոր տեսուչի ղեկավարությամբ:

4.1.3. Վարչական ծրագրով նախատեսվող ենթակառուցվածք

«Արփի լիճ» ազգային պարկի ենթակառուցվածքին վերաբերվող ընդհանուր մարտավարությունն և ուղեցույցը հետևյալն են.

- 1) «Արփի լիճ» ազգային պարկի կառույցների (շենք/շինություններ), տեղեկատվական վահանակների, սահմանակետերի նշանաձողերի, մուտքի դարպասների և այլ ենթակառուցվածքների տեսքը պետք է համահունչ լինի շրջակա միջավայրի հետ
- 2) կառույցները պետք է լինեն գործնական տեսանկյունից հարմար և գեղագիտական տեսանկյունից հաճելի
- 3) տեղեկատվական վահանակներն և ճանապարհային ցուցանակները պետք է ունենան հստակ բովանդակություն՝ «Արփի լիճ» ազգային պարկի տարբերանշանով և պատրաստած լինեն ամուր նյութերից՝ սպասարկման ծախսերը նվազեցնելու համար
- 4) շինարարության համար հնարավորության սահմաններում պետք է օգտագործվեն տեղական հումքը և աշխատուժը
- 5) բոլոր կառույցները պետք է լինեն ամուր և երկրաշարժերին դիմացկուն /սեյսմոկայուն/

4.1.3.1. «Արփի լիճ» ազգային պարկի վարչական շենք, հյուրատուն, ավտոտնակներ և պահակակետ


«Արփի լիճ» ազգային պարկի վարչական շենքի կառուցման համար ընտրված վայրը գտնվում է Արփի լճի պատվարից դեպի արևելք, Պաղակն համայնքի վարչական սահմաններում (քարտեզ 5): Այն ընտրվել է ելնելով Արփի լիճ տանող երկու ճանապարհների խաչմերուկի վրա ռազմավարական դիրքից. դրանցից մեկը տանում է մարզի մայրաքաղաք՝ Գյումրի (մոտ 25 կմ), իսկ մյուսը՝ վրացական սահմանի մերձակայքում գտնվող Բավրա համայնք (25 կմ): Երկրորդ պատճառը կայանում է նրանում, որ նպատակահարմար է շենքը կառուցել ազգային պարկի տարածքի կենտրոնական մասում:

Տեղանքի զարգացման պլանն իր մեջ ներառում է նաև առնվազն մեկ հյուրատան կառուցումը: Վարչական շենքի հարակից տարածքում նախատեսված են պահակակետ և ավտոտնակներ:

4.1.3.2. ԱԼԱՊ և առանձին տեղամասեր տանող ճանապարհներ

ԱԼԱՊ-ն ունի 3 պաշտոնական մուտքեր որոնցից 2 գտնվում են արևմտյան տեղամասում և 1՝ արևելյանում (քարտեզ 5): Մի մուտքը գտնվում է Պաղակն գյուղից դեպի արևմուտք և ապահովում է մուտքը դեպի Արփի լճի ափին, սոճու անտառի մոտ գտնվող «Սոճիներ» ճամբարակայանը (մուտքի դարբասից 2 կմ տարածության վրա): Երկրորդ մուտքը գտնվում է Շաղիկ գյուղի մոտ և օգտագործվում է հիմնականում սահմանապահ անձնակազմի կողմից՝ որպես սահմանամերձ գոտու հարավային մասի հիմնական մուտք: Երրորդ դարպասը տեղադրված է Սիզավետ գյուղից դեպի արևելք, որտեղ հասնում են Ղազանչի և Բավրա գյուղերից գնացող ճանապարհները:

«Արփի լիճ» ազգային պարկի մուտքի դարբասներին (բացի Սիզավետի մուտքից) պատկանող ենթակառուցվածքն իր մեջ ներառելու է բուն դարբասը, վահանակը՝ «Արփի լիճ» ազգային պարկի քարտեզի պատկերմամբ և տեղեկությամբ Սիզավետի մուտքի կետը իր մեջ ներառելու է փակվող դարբասները: «Արփի լիճ» ազգային պարկ-Արգելոցային գոտի» ցուցանակով: «Արփի լիճ» ազգային պարկի արևելյան տեղամասի արգելոցային գոտի կարելի է մուտք գործել միայն հատուկ թույլտվությամբ, քանի որ այն իրենից ներկայացնում է «Արփի լիճ» ազգային պարկի արգելոցային գոտի:



4.1.3.3. Արփի լիճ

Մուտքի սահմանափակումները կիրառվում են ռեկրեացիոն գործունեության և/կամ լճում արդյունագործական ձկնորսության հսկողությունը հեշտացնելու համար: Մուտքը անվճար է, բայց տարածքի օգտագործումը այցելուների և տեղացիների կողմից պահանջում է «Արփի լիճ» ազգային պարկի տնօրինության կողմից տրվող հատուկ թույլտվություն:

Լճի ջրի մակարդակի տատանումները հանդիսանում են կարևոր խնդիրներից մեկը: Այնպիսի կառույցները, ինչպիսիք են նավակների բետոնե կառանատեղերը, քիչ օգտագործելի են ուշ ամռանը երբ ջրի մակարդակը հասնում է նվազագույնի:

Մուտքի 5 կետերից յուրաքանչյուրի ենթակառուցվածքը իր մեջ ներառում է բետոնե կառանատեղ (ջրի բարձր մակարդակի համար), տախտակամածը և կառանելու համար սարքավորումները, որոնք նոյեմբերի կեսերին ջրի սառեցումից առաջ պետք է հավաքվեն ու պահվեն մինչ հաջորդ սեզոնը: Յուրաքանչյուր կետում տեղադրվելու է վահանակ օգտագործման կանոնների մասին տեղեկատվությամբ, ինչպես նաև կստեղծվի 10 մեքենայի համար կայանման տեղ և ավտոահանվող սանհանգույց: Լողաններն օգտագործվելու են լճի երկու կողմերի շուրջը մուտքն արգելվող բուֆերային գոտիները ցույց տալու համար:

Դեպի լիճը անասունների մուտքն արգելելու համար պետք է տեղադրվեն ինքնալցվող ջրարբիացման կետեր՝ յոթը՝ Շաղիկ, Գառնառիճ, Ծաղկուտ, Ձորակերտ և Պաղակն գյուղերում, մեկը՝ Ծաղկուտի և Ձորակերտի միջև, մեկն էլ՝ Պաղակնի և Ձորակերտի միջև:

4.2. Տնտեսական գործունեության և մարկետինգի ծրագիր

4.2.1.. Հիմնավորում և խնդիրներ

1. Մարկետինգի բաժնի գործառույթներն են «Արփի լիճ» ազգային պարկի պլանավորումը, ԱԼԱՊ-ի բոլոր կառույցների նեոարյալ գյուղատնտեսական արտադրության ստորաբաժանումների կանոնավոր սպասարկումը, սարքավորումների և շարժական գույքի վերանորոգումը և փոխարինումը, հսկողությունը, մոնիթորինգը և արտադրության մարկետինգը: Բաժինը գործում է բաժնի պետի ենթակայության տակ՝ պարկի ամբողջ անձնակազմի հետ սերտ համագործակցությամբ: Բաժնի պետը պատասխանատու է «Արփի լիճ» ազգային պարկի ենթակառուցվածքների և սարքավորումների գործառնական պլանի մշակման համար: Բաժնի հիմնական խնդիրը կայանում է «Արփի լիճ» ազգային պարկի ենթակառուցվածքների և սարքավորումների նորմալ գործունեության ապահովումը՝ համաձայն աշխատանքային պլանի:

2. Համապատասխան աշխատանքների ուղեցույցը հետևյալն է.

- 1) ենթակառուցվածքների և սարքավորումների կառավարում (այդ թվում՝ տեսչական ստուգումներն ու հսկողությունը)՝ համապատասխան բաժնի պետի կողմից մշակված և սահմանված նորմաների և կանոնակարգի
- 2) պրոֆիլակտիկա :

4.2.2. Մարտավարություն

Բաժնում պետք է կիրառվի հետևյալ մարտավարությունը.

- 1) բաժնի պետը մշակում է աշխատանքային պլանը, որն ամեն տարի վերանայվում և բարեփոխվում է
- 2) «Արփի լիճ» ազգային պարկի անձնակազմին հանձնարարվում է ստանդարտ և պարզ աշխատանքների իրականացում՝ ըստ աշխատանքային պլանի
- 3) եթե աշխատանքները չեն կարող կատարվել պարկի անձնակազմի ջանքերով, դրանց կատարման համար նախատեսվող մասնագետները պետք է ընդգրկվեն/հրավիրվեն դրսից
- 4) մասնագիտական ուսուցումը և կարողությունների զարգացումը խոչընդոտելու է ենթակառուցվածքների և սարքավորումների սխալ օգտագործմանը
- 5) սարքավորումները պետք է ստանդարտացված լինեն՝ դրանց սպասարկման և վերանորոգման հեշտացման համար

Ենթակառուցվածքների և սարքավորումների երկար և նորմալ աշխատանքն ապահովելու համար, բաժնի պետը պետք է երաշխավորի սպասարկման և առաքման բարձր որակը: Բաժնի պետը մշակում է տարեկան աշխատանքային պլանը և բյուջեն՝ ենթակառուցվածքների և սարքավորումների սպասարկման և փոխարինման համար: Բյուջեն նույնպես իր մեջ ներառում է մասնագիտական ուսուցման ֆինանսավորումը, ներառյալ տրանսպորտային միջոցների ու սարքավորումների օգտագործման ուսուցումը: Դրսից մասնագետներին հրավիրելու դեպքում, բաժնի պետը կազմում է նրանց տեխնիկական առաջադրանքները և հսկում կատարված աշխատանքի որակը: Բաժնի

պետը պետք է հետևի որպեսզի բոլոր արված աշխատանքները համապատասխանեն ԱԼԱՊ-ին վերաբերվող ՇՄԱԳ-ի կանոնակարգին:

4.3. Պահպանության ծրագիր

4.3.1. Հիմնավորում և խնդիրներ

1. Ծրագրի ուղեցույցի սկզբունքները և խնդիրները հետևյալն են.

1) «Արփի լիճ» ազգային պարկի արգելոցային գոտու էկոլոգիական ամբողջականության ապահովում

1) «Արփի լիճ» ազգային պարկի տնտեսական գոտու օգտագործումը խոչընդոտում է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցություն ունեցող գերարածեցմանը և հողերի ոչ ճիշտ օգտագործմանը

2) «Արփի լիճ» ազգային պարկի ջրային ռեսուրսների, հատկապես՝ խմելու ջուր ապահովող բնական աղբյուրների պահպանության ապահովում

3) Արփի լճի և դրա կղզյակների պահպանության ապահովում՝ ռեկրեացիայի և ձկնորսության բացասական ազդեցությունից

2. «Արփի լիճ» ազգային պարկի կայուն պահպանությունը շահավետ է կենսաբազմազանության պահպանության, ռեսուրսներ և հող օգտագործող կողմերի, պահպանման գոտու համայնքների և ամբողջ Հայաստանի Հանրապետության համար: Կայուն պահպանությանը կարելի է հասնել լավ ուսուցանված, հանդերձված և շահագրգռված «Արփի լիճ» ազգային պարկի տեսուչների ջանքերի միջոցով՝ «Արփի լիճ» ազգային պարկի տնտեսական գոտու և պահպանման գոտու համայնքների աջակցությամբ: ԱԼԱՊ-ի և համայնքների միջև համագործակցությունը հանդիսանում է «Արփի լիճ» ազգային պարկի կառավարման պլանի մասնակցային իրականացման, «Արփի լիճ» ազգային պարկի պահպանման գոտու տնտեսական զարգացումից ստացած շահերի և համայնքների հետ շարունակական ձևով տարվող աշխատանքների արդյունք:

Տեսուչների բազային ուսուցումը հիմնվելու է օրենսդրական ասպեկտների, տեսուչների պատասխանատվության ոլորտների, «Արփի լիճ» ազգային պարկի կողմից թույլտվությունների և լիցենզիաների ձևակերպման համակարգի, պարեկության և հսկողության ուժեղացման, խախտողների հետ վարման նորմաների, հասարակայնության և «Արփի լիճ» ազգային պարկի՝ այդ թվում առանձին տեղամասերի ռեսուրսներ օգտագործող կողմերի հետ շփման ունակությունների զարգացման վրա: Տեսուչները իրավունք ունեն «Արփի լիճ» ազգային պարկի՝ այդ թվում առանձին տեղամասերի սահմաններում ստուգել թույլտվություններն ու լիցենզիաներն և անմիջական հաշվետու են իրենց ղեկավարող պարկի տեսուչի առաջ:

4.3.2. Պահպանության ծրագրի մարտավարություն և կառավարման ուղեցույց

1. Պետք է նշել, որ ԱԼԱՊ-ում ներառյալ առանձին տեղամասերում պահպանության աշխատանքներ կատարելը շատ դժվար է՝ բաց ռեյեֆի, նշված սահմանների և բնական պատնեշների բացակայության պատճառով: Պահպանության մարտավարության և կառավարման հիմնական բաղադրամասերը հետևյալն են.

- 1) «Արփի լիճ» ազգային պարկի՝ ներառյալ առանձին տեղամասերի տարածքներ կարելի է մտնել միայն «Արփի լիճ» ազգային պարկի կողմից տրված մուտքի կամ տնտեսական գործունեության թույլտվությամբ
 - 2) «Արփի լիճ» ազգային պարկի տնտեսական գոտին կարող են մտնել միայն «Արփի լիճ» ազգային պարկի տնտեսական գոտում հողատարածքներ ունեցող վարձակալները և «Արփի լիճ» ազգային պարկի այցելուները՝ «Արփի լիճ» ազգային պարկի թույլտվությամբ
 - 3) վարձակալների և/կամ նրանց ընտանիքների անդամների և/կամ օգնականների մուտքը կատարվում է «Արփի լիճ» ազգային պարկի թույլտվությամբ (անվճար)
 - 4) «Արփի լիճ» ազգային պարկի արգելոցային գոտում գիշերելը արգելվում է
 - 5) վարձակալի կողմից օգտագործվող թույլատրելի մեքենայի տեսակը նշվում է թույլտվության մեջ
 - 6) սահմանամերձ գոտին կարելի է մտնել ռուսական սահմանապահ մարմինների հետ համաձայնեցված թույլտվությամբ
 - 7) Գառնադիճ և Պաղակն համայնքների միջև ընկած տարածքում անասունների մուտքը դեպի Արփի լիճն արգելվում է, քանի որ այստեղ տեղադրվելու են ջրարբիացման կետեր:
2. Պարկի տեսուչների գործունեությանը վերաբերվող մարտավարությունը հետևյալն է.
- 1) պարկի տեսուչները՝ գլխավոր տեսուչի ղեկավարությամբ կազմում են հինգ տարածքի համար վերահսկման աշխատանքային պլանները
 - 2) պարկի տեսուչները՝ գլխավոր տեսուչի հետ համատեղ մշակում են տեսուչների պայմանագրերն և աշխատանքային պլանները
 - 3) տեսուչները ակտիվորեն հետապնդում են օրենք և «Արփի լիճ» ազգային պարկի բնապահպանական կանոնակարգ խախտողներին
 - 4) տեսուչները սերտ համագործակցում են այլ վերահսկող կազմակերպությունների հետ, սահմանապահ մարմինների հետ՝ «Արփի լիճ» ազգային պարկի տնօրենի կողմից մշակված Փոխըմբռնման հուշագրի համաձայն
 - 5) մոնիթորինգը իրականացվում է աշխատանքային պլանին և պարտականություններին համապատասխան՝ ինչպես դրանք նշված են տարեկան աշխատանքային պլանում
 - 6) հետևել վարձակալների, հովիվների և այցելուների կողմից ռեսուրսների օգտագործմանը՝ ծրագրերի ղեկավարների հետ միասին
 - 7) գրանցել խախտումները, հաշվետու լինել և զբաղվել հետաքննությամբ
 - 8) խախտումների համար կատարել համապատասխան արձանագրություն
 - 9) բռնագրավել ԱԼԱՊ-ից անօրինական կերպով ձեռք բերված մթերքներն, սարքավորումները և հանդերձանքը, գրանցել խախտումները պարկի տեսուչները պատասխանատու են «Արփի լիճ» ազգային պարկի հողերի ու ռեսուրսների կայուն օգտագործման կանոնակարգի և կառավարման ուղեցույցի պայմանների հսկողության, դրա ուժեղացման և էկոլոգիական մոնիթորինգի իրականացման համար՝ ավագ տեսուչի ղեկավարությամբ
 - 10) պարկի տեսուչները մշակում են արդյունավետ վերահսկողության ծրագիր յուրաքանչյուր տարածքի և ենթատարածքի համար

- 11) պարկի տեսուչներն երկու օրը մեկ անգամ հաշվետու են ավագ տեսուչին
- 12) ակտիվություն է դրսևորվում բնակչության իրազեկության բարձրացման և տեղաբնակների հետ լավ հարաբերությունների զարգացման ուղղությամբ
- 13) պարկի տեսուչները կատարում են ավագ տեսուչի հանձնարարությունները
- 14) ծառայության ժամանակ պարկի տեսուչները կրում են համազգեստ
- 15) բոլոր տեսուչները մասնակցում են աշխատատեղում կազմակերպվող դասընթացներին՝ ըստ աշխատանքային պլանի
- 16) կատարվում են դաշտային գրանցումներ՝ ըստ աշխատանքի նկարագրությանը
- 17) պարկի տեսուչները լրացնում են շաբաթական մատյաններ և հսկվում են գլխավոր տեսուչի կողմից

3. Սահմանապահ անձնակազմի կողմից մուտքը կարգավորվում է «Արփի լիճ» ազգային պարկի տնօրինության և սահմանապահ մարմինների միջև ստորագրված Փոխըմբռնման հուշագրի շրջանակներում: Սահմանապահ անձնակազմին պատկանող ավտոմեքենաների համար մուտքը թույլատրվում է ամբողջ տարին, իսկ սահմանափակումները փոխհամաձայնեցվում են հուշագրի մեջ:

4. Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության պատմամշակութային հուշարձանների հսկողությունն ու պահպանությունն իրականացնող աշխատողների մուտքը կարգավորվում է «Արփի լիճ» ազգային պարկի տնօրինության և հուշարձանների պահպանության լիազորված մարմնի միջև ստորագրված փոխըմբռնման հուշագրի շրջանակներում:

4.4. Տուրիզմի, էկոլոգիական իրազեկություն և հասարակայնության հետ կապերի ծրագիր

4.4.1. Հիմնական սկզբունքներ

Այդ ծրագրի մեջ մտնող երեք թեմաների (տուրիզմ, էկոլոգիական իրազեկություն, հասարակայնության հետ կապեր) պատճառով այն բաժանվում է երեք ենթածրագրերի: Սակայն, ներկայումս դրանց միավորումը մեկ ընդհանուր ծրագրի մեջ ավելի նպատակահարմար է յուրաքանչյուր ենթածրագրում աշխատանքների փոքր ծավալի և դրանց փոխկապվածության պատճառով: Տուրիզմի համար բարենպաստ պայմանների ստեղծումը պահանջում է իրազեկության բարձր մակարդակ, մաքուր ու առողջ շրջակա միջավայրի և «Արփի լիճ» ազգային պարկի արդյունավետ պահպանության առկայությունը: Երբ այս հիմնական բաղկացուցիչ մասերը ԱԼԱՊ-ում հասնեն զարգացման բավարար մակարդակի, այդ պահպանվող տարածքի տուրիստական արտադրանքը սկսելու է իր լայն առաջխաղացումը ազգային և միջազգային շուկաներում:

Էկոլոգիական իրազեկության բարձրացման հիմնական սկզբունքը դա պահպանման գոտու բնակչությանը, ռեսուրսներ և հող օգտագործող կողմերին ներգրավելն է հողային և բնական ռեսուրսների կառավարման և կայուն շրջակա միջավայրի ստեղծման խնդրի մեջ՝ տեղական բնակչության կյանքի որակը բարձրացնելու նպատակով:

Հասարակայնության հետ կապերի ռազմավարության հիմնական սկզբունքը դա ԱԼԱՊ-ի, և պահպանման գոտու դրական կերպարի լայն պատկերացումն է տեղական, ազգային և միջազգային մակարդակներում այս շրջանում ընդհանուր բնապահպանական խնդիրների համատեքստում: Միջազգային մակարդակն առավել արդիական է տարածքի կայուն

զարգացման համար՝ տուրիզմի զարգացման և միջազգային դոնորների կողմից երկարաժամկետ ֆինանսավորման ապահովման տեսանկյունից:

Նման միավորված ուժերի ընդհանուր խնդիրը կայանում է նրանում, որպեսզի ստեղծվի արդյունավետ հողօգտագործման պլանավորման և կայուն տնտեսական զարգացման մոդել՝ հողային և այլ բնական ռեսուրսների պահպանության մարտավարության շրջանակներում:

«Արփի լիճ» ազգային պարկի կողմից առաջարկվող տուրիստական հնարավորությունները անկասկած կապված են առաջնահերթ Արփի լճի օգտագործման հետ (սպորտային ձկնորսություն, ոչ շարժիչավոր նավակներ, թռչնադիտում, ճամբարակայաններ): Առանձին տեղամասերը հատկապես հետաքրքիր կլինեին թռչուններով և բույսերով հետաքրքրվող մարդկանց համար:

ԱԼԱՊ-ն մեծ պոտենցիալ ունի տարբեր մասնագիտական ոլորտներում գիտական տուրիզմի և գիտական հետազոտությունների զարգացման տեսանկյունից: Հետաքրքիր հնարավորություններ կան լեռնատափաստանային և մերձալպյան էկոհամակարգերի էկոլոգիայի ոլորտում ուսումնասիրություններ կատարելու համար, հատկապես, անասունների կայուն արածեցման համատեքստում:

ԱԼԱՊ-ում և պահպանման գոտում պատմամշակութային տուրիզմի հնարավորությունները սահմանափակ են և կենտրոնացված են ավանդական անասնաբուծության, սննդամթերքի և ուտելիքի հետ ծանոթացնելու վրա:

«Արփի լիճ» ազգային պարկի պահպանման գոտին և մասամբ նաև ԱԼԱՊ-ը մեծ պոտենցիալ ունեն հանգստի զարգացման համար՝ շեշտը դնելով լեռնադահուկային սպորտի և ձմեռային այլ սպորտաձևերի վրա:

Շիրակի մարզում տուրիզմի զարգացումը կախված է «Արփի լիճ» ազգային պարկի կառավարման պլանի շրջանակներում ողջ շրջանային տուրիզմի զարգացման և իրականացման մարտավարությունից:

Տուրիզմի զարգացումը նվիրված է «Արփի լիճ» ազգային պարկի պահպանման գոտում ենթակառուցվածքի զարգացմանը, մասնագիտական ուսուցմանը, ձիավարությանը, տուրիստներին սպասարկմանը, տուր օպերատորների ցանցին և շուկայագիտությանը (մարկետինգ): Այդ պատճառով էլ անհրաժեշտ է ստեղծել և պահպանել սերտ համագործակցություն «Արփի լիճ» ազգային պարկի անձնակազմի, մասնագետների և պահպանման գոտու տուրիզմի միության միջև:

4.4.2. Տուրիզմին վերաբերվող խնդիրներ և մարտավարություն

1. Տուրիզմին վերաբերվող խնդիրները և մարտավարությունը հետևյալն են.

- 1) տրամադրել համապատասխան արտադրանք՝ շեշտը դնելով «Արփի լիճ» ազգային պարկի և պահպանման գոտու էկոտուրիզմի և հանգստի կազմակերպման հնարավորությունների վրա
- 2) մասնագիտացված տուրիզմի համար ստեղծել բարենպաստ բազային պայմաններ, ներառյալ
 - ա. ստանդարտներին համապատասխանող կացարան և առաջարկվող ծառայություններ

բ. մաքուր գյուղեր առանց աղբի

գ. ընդունելի հիգիենիկ պայմաններ պահպանման գոտու գյուղերում և տներում (կոյուղի, մաքուր խմելու ջրի կայուն մատակարարում, գյուղերում անասունների շարժի սահմանափակումներ, անասունների համար ջրարբիացման կետեր գյուղի սահմաններից դուրս և այլն)

- 3) ակտիվ ներգրավել մասնավոր սեկտորը տուրիզմի զարգացման մեջ
- 4) առաջ մղել համայնքային տուրիզմը ԱԼԱՊ-ում և պահպանման գոտում
- 5) նպաստել «Արփի լիճ» ազգային պարկի պահպանման գոտում սոցիալ-տնտեսական զարգացմանը և բնակչության կայուն զբաղվածությանը՝ լավ կազմակերպված այցելուների ծրագրի միջոցով
- 6) նպաստել ՀԿ-ների մասնակցությանը տուրիզմի զարգացման վերաբերյալ զարգացման, կրթության, իրազեկության բարձրացման գործընթացներում
- 7) տարածել պահպանման գոտու բնակչությանը շրջակա միջավայրի վերաբերյալ պատմական և մշակութային գիտելիքները
- 8) ստեղծել մոնիթորինգի և գնահատման համակարգ՝ կայուն տուրիզմի ապահովման համար
- 9) զբաղվել այցելուների անվտանգության խնդիրներով
- 10) ԱԼԱՊ-ում և պահպանման գոտում զարգացնել տուրիզմը՝ շուկայական պայմանների համատեքստում և մասնավոր սեկտորի հիմնական մասնակցությամբ
- 11) տուրիստական գործունեությունը հիմնվելու է «Արփի լիճ» ազգային պարկի և պահպանման գոտու բնական առավելությունների վրա.
 - ա. «Արփի լիճ» ազգային պարկի տնտեսական գոտում լեռնադահուկային և ոչ շարժիչավոր միջոցների օգտագործությամբ ձմեռային սպորտաձևերն ընդունելի են՝ համաձայն սահմանված կանոնակարգի
 - բ. համաձայն պահպանման գոտու զարգացման ծրագրի, շարժիչավոր միջոցներով ձմեռային սպորտաձևերը թույլատրվում են միայն «Արփի լիճ» ազգային պարկի սահմաններից դուրս
 - գ. ԱԼԱՊ-ում կարելի է օգտագործել լեռնային հեծանիվներ՝ համաձայն կանոնակարգի և պայմանների, որոնք որոշվելու են ինտեգրված տուրիզմի զարգացման ծրագրի շրջանակներում
- 12) տուրիզմի զարգացումը կենտրոնանալու է պահպանման գոտու վրա՝ պահպանման գոտու բնակչության կողմից վաստակած եկամուտներն առավելագույնի հասցնելու համար
- 13) տուրիստների և այցելուների համար նախատեսված ճանապարհային ցուցանակները, տեղեկատվական վահանակները պետք է պարունակեն հստակ տեղեկություն և տեղադրվեն ռազմավարության տեսակետից կարևոր վայրերում
- 14) տարբերիչ նշաններից նախապատվությունը տրվելու է ճանապարհների և արահետների եզրերում տեղադրված քարակույտերին
- 15) տեսարժան վայրերը և դիտակետերը հստակորեն նշվելու են
- 16) «Արփի լիճ» ազգային պարկի տարբերանշանը պետք է պատկերված լինի բոլոր ցուցանակների և տեղեկատվական վահանակների վրա

- 17) ԱԼԱՊ-ում տուրիսատական ծառայությունների գները պետք է սահմանվեն «Արփի լիճ» ազգային պարկի կողմից
- 18) ԱԼԱՊ մուտքի և ռեկրեացիոն օգտագործման, ինչպես նաև այցելությունների և ճամբարակայանների օգտագործման համար թույլտվությունները տրվելու են «Արփի լիճ» ազգային պարկի կողմից:
- 19) ԱԼԱՊ-ում տուրիստների գիշերանցը արգելվում է՝ բացի տեղակայված ճամբարակայաններից
- 20) հեռանալուց բոլոր այցելուները և տուրիստները պետք է վերցնեն իրենց անձնական ուղեբեռը և իրերը

4.4.3. Էկոլոգիական իրազեկություն

1. Էկոլոգիական իրազեկության մակարդակի բարձրացումը հանդիսանում է «Արփի լիճ» ազգային պարկի պահպանման գոտուն և տուրիզմին վերաբերվող բոլոր միջոցառումների անբաժանելի մաս: Համապատասխան մարտավարությունները մտցված են պահպանման գոտու զարգացման ծրագրի մեջ: Չնայած իրազեկության բարձրացումը անցկացվելու է հիմնականում ուսուցիչների և դպրոցականների մասնակցությամբ, պահպանման գոտու համայնքների մեծահասակ բնակչությունը նույնպես կհաճախի հատուկ հանդիպումների և միջոցառումների: Իրազեկության բարձրացման միջոցառումների հիմնական պատասխանատվությունը ընկած կլինի տեղական հասարակական կազմակերպությունների վրա, բայց «Արփի լիճ» ազգային պարկի անձնակազմը ակտիվ մասնակցելու է այդ գործընթացին՝ տուրիզմի, էկոլոգիական իրազեկության և հասարակայնության հետ կապերի ծրագրի ղեկավարի կողմից մշակված աշխատանքային պլանի շրջանակներում: Գրված և հրատարակված նյութերը, ինչպես նաև այլ համապատասխան արդյունքները օգտագործվելու են պահպանման գոտու զարգացման ծրագրի պայմաններին համապատասխան:

2. Էկոլոգիական իրազեկության բարձրացման ուղեցույցը հետևյալն է.

- 1) դպրոցական դասարաններին հրավիրել ԱԼԱՊ՝ անմիջական գիտելիքների և փորձի ձեռք բերման համար
- 2) ԲՀՊՏ-ների հարցերով զբաղվող կամ հետաքրքրվող համալսարանական ուսանողների համար կազմակերպել ուղևորություններ
- 3) կազմակերպել հանդիպումներ և համատեղ կրթական ծրագրեր տեղական հասարակական կազմակերպությունների հետ
- 4) կազմակերպել կանոնավոր մամլո ասուլիսներ և թղթակիցների հետ համատեղ պատրաստել նյութեր «Արփի լիճ» ազգային պարկի և պահպանման գոտու մասին՝ հեռուստատեսության և տեղական թերթերի համար
- 5) կազմակերպել ուղևորություններ կարևոր (VIP) անձանց համար՝ շեշտը դնելով պոտենցիալ հովանավորների, կառավարական ու մասնավոր սեկտորից հիմնական որոշում կայացնող կողմերի վրա
- 6) պարկի մյուս ծրագիրների անձնակազմի հետ համատեղ պատրաստել տեղեկատվական նյութեր և հուշանվերներ՝ սպորտային վերնաշապիկներ, գլխարկներ, սոսնձվող պիտակներ, պաստառներ, օրացույցեր որոնք վաճառվելու են Բավրա գյուղի տեղեկատվական վայրի կրպակում և Ղազանչիի այցելուների կենտրոնում

7) տարին մեկ անգամ «Արփի լիճ» ազգային պարկի գրասենյակում Պաղակն գյուղում կազմակերպվելու է բաց դռների օր

3. Էկոլոգիական կրթության և իրազեկության բարձրացման միջոցառումները իրակացվելու են «Արփի լիճ» ազգային պարկի անձնակազմի հետ միասին:

4.4.4. Հասարակայնության հետ կապեր

Կան տարբեր մեթոդներ ԱԼԱՊ-ի, պահպանման գոտու, հողի և ռեսուրսների կայուն կառավարման, մասնակցային պլանավորման, բնապահպանական գործընթացի համակառավարման մոտեցումների մասին տեղեկությունը փոխանցելու համար: Առաջին քայլը կլինի ԱԼԱՊ-ի, պահպանման գոտու մասին թռուցիկների պատրաստումն ու տարածումը, որից հետո գալիս է թռուցիկների և ինֆորմացիոն փաթեթների պատրաստումը՝ դպրոցներում և տուրիզմի ծրագրում կիրառելու համար, դաշտային ուղեցույցի պատրաստումը, քարոզարշավը, ռադիո և հեռուստատեսային հաղորդումները՝ «Արփի լիճ» ազգային պարկի տնօրինության ղեկավարությամբ: Այս միջոցառումների իրականացման պատասխանատվությունը կլինի տուրիզմի, էկոլոգիական իրազեկության և հասարակայնության հետ կապերի ծրագրի ղեկավարի վրա: Ծրագրի ղեկավարի կողմից մշակված միջոցառումների փաթեթը պետք է լինի պարզ, բազմակողմանի, գործնական, հետաքրքիր, հեշտ հասանելի և հեշտ իրականացվող:

4.4.5. Տուրիստական ենթակառուցվածք

«Արփի լիճ» ազգային պարկի տուրիստական ենթակառուցվածքը կհասցվի նվազագույնի տարածության սահմանափակ հնարավորությունների, պարկի փոքր չափսերի և պարկի տարածքում գիշերելու անհրաժեշտության բացակայության պատճառով: «Արփի լիճ» ազգային պարկի ներսում ոչ մի տուրիստական ենթակառուցվածք չի լինի՝ բացի Արփի լճի հարավային ափին նախատեսվող մեկ ճամբարակայանից (քարտեզ 6): Տարածության բաց ռելիեֆի և հեշտ անցանելիության պատճառով տուրիստական արահետների նշանագրման կարիք չի լինի, ինչպես սովորաբար ընդունված է ազգային պարկերում:

Այս փուլում նպատակահարմար է տուրիստական ծրագիրը սկսել նվազագույն ծախսերով և դիտարկել ընթացքը: Ծրագրի ընդլայնումը ընթանալու է ըստ շուկայագիտական և գովազդային միջոցառումներից առաջացող պահանջարկի աճի: «Արփի լիճ» ազգային պարկի մեջ տուրիստական ենթակառուցվածքն իր մեջ ներառում է 4 կառանատեղ (տես՝ մաս 4.1.4.5) և երեք ճամբարակայան: Տեղեկատվական վահանակները և 4 մուտքի դարբասները գտնվում են վարչական ծրագրի հսկողության տակ: Այլ ենթակառուցվածքը գտնվելու է «Արփի լիճ» ազգային պարկի սահմաններից դուրս, ներառելով հիմնական ճանապարհների երկայնքով տեղադրված տեղեկատվական վահանակներ, այցելուների կենտրոն՝ Ղազանչի գյուղում, և 2 դիտակետեր (քարտեզ 6):

4.4.5.1. «Շաղիկ», «Սոճիներ» և «Ախուրյանի կիրճ» ճամբարակայաններ

Բոլոր երեք ճամբարակայանները (քարտեզ 6) պետք է ունենան միանման կառուցվածք: Դրանք նախատեսված են լինելու առավելագույնը 20 մարդու և 10 վրանի համար և ենթակա են ինքնասպասարկման: «Շաղիկ» ճամբարակայանը գտնվում է Շաղիկ համայնքից դեպի արևելք, լճի ափին՝ կաղամախիների պուրակի մոտ, որտեղից գեղատեսիլ պատկերն է բացվում լճի և շրջակա բլուրների վրա (քարտեզ 10): Այս տեղանքը

մատակարարվում է շատ լավ որակի բնական աղբյուրի ջրով, որն էլ հենց հոսում է լճի ուղղությամբ: Այստեղ կարելի է հասնել լիճ տանող ճանապարհից ճյուղավորվող ճանապարհով (300 մ): «Սոճիներ» ճամբարակայանը գտնվում է լճի ձախ ափին՝ Պաղակն համայնքում, մուտքի դարբասից մոտ 1 կմ հեռավորության վրա: Այն գտնվում է սոճու անտառի մոտ, ափի մոտ՝ լճի և «Արփի լիճ» ազգային պարկի հյուսիսային ու արևելյան լեռների գեղատեսիլ բնապատկերով: Թռչունների կղզյակներից մեկը գտնվում է ճամբարակայանին բավականին մոտ, այդ պատճառով էլ այս վայրը հարմար է թռչնադիտման համար: Փոքրիկ աղբյուրից բարձրորակ ջուր է հոսում:

